

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՃԱՐԱՆԱԴՐԱԾԱՆ
ԳԱՏԱՐԱՆ

ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝

Փազիկ Նարոյթյանյան
Վահե Սյրեխանյան
Վրդոյա Նովհաննիսյան
Վալերի Գոդոյան
Առուշան Նակոբյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(89)
2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1353-1360)

- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄԵՂՐԻ-ՆՈՒԴՆՈՒԶ ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1353 - 28 փետրվարի 2017 թվականի)4

- * ԱՇՈՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 193-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1354 - 28 փետրվարի 2017 թվականի)7

- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1355 - 7 մարտի 2017 թվականի)20

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 141ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1356 - 7 մարտի 2017 թվականի)24

- * ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ՆԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 339-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1357 - 14 մարտի 2017 թվականի)41

- * ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1358 - 21 մարտի 2017 թվականի)55

* ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 407-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2.2-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 414.2-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 426.4-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1359 - 28 մարտի 2017 թվականի).....72

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 86-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 821 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 884-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ «Թ» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1360 - 4 ապրիլի 2017 թվականի).....93

• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

* ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ121

* ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ121

* ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ123

* 22 ԱՄՅԱ ՃԱՆԱՊԱՐՀ123

* ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ124

* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐ ԱՆԴԱՄ125

* ԸՆՏՐՎԵՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ126

* ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՎԸ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ127



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄԵԴՂԻ-ՆՈՒՐԴՈՒԶ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 փետրվարի 2017թ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի»

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի՝ 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի

դեկտեմբերի 21-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև՝ Մեդրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 17.02.2017թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև՝ Մեդրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործման մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի դեկտեմբերի 21-ին Երևանում՝ պայմանավորվող կողմերի միջև սահմանային անցման ընթացակարգերը և մաքսային ձևակերպումները պարզեցնելու նպատակով: Կողմերը, իրենց միջազգային պարտավորություններին և Համաձայնագրի դրույթներին համապատասխան, Մեդրի և Նուրդուզ մաքսային անցակետերում կմատուցեն համատեղ ծառայություններ՝ ուղևորների, ապրանքների և տրանսպորտային միջոցների միջազգային փոխադրումները դյուրացնելու նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինը հնարավորության դեպքում խուսափի նույնանման մաքսային գործառնությունների կրկնությունից,

- Համաձայնագրի շրջանակի և նպատակների համար չկիրառել միակողմանի պաշտոնական ընթացակարգեր, որոնք անհամատեղելի են Համաձայնագրում նշված դրույթների հետ,

- Իրանի Իսլամական Հանրապետության հետ տեղեկություն փոխանակել երկկողմ առևտրի և ՀՀ տարածքում տեղի ունեցած մաքսային իրավախախտումների վերաբերյալ,

- Իրանի Իսլամական Հանրապետությանը տեղեկացնել ՀՀ մաքսային կարգավորումների և օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների մասին,

• Համաձայնագրի դրույթների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով ստեղծել Համատեղ կոմիտե իրավասու մարմինների հովանու ներքո և փոխադարձ համակարգմամբ, և այլն:

3. 2016 թվականի դեկտեմբերի 21-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև՝ Մեդրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործման մասին համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով՝ 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով՝ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. 2016 թվականի դեկտեմբերի 21-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև՝ Մեդրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 փետրվարի 2017 թվականի
ՄԴՈ-1353



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՇՈՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 193-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողների ներկայացուցիչներ Տ. Եգորյանի, Լ. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Աշոտ Քոչարյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Աշոտ Քոչարյանի և այլոց (Ռաֆաել Առաքելյան, Ռուբեն Աթոյան, Արա Կիլիկյան, Ամալիա Օհանյան, Կարինե Բաբայան, Անժելա Գրիգորյան, Լյուդմիլա Առաքելյան, Գագիկ Գրիգորյան, Ալբերտ Մովսիսյան, Սվետլանա Բրուտյան, Ջոյա Մալխասյան, Ալբերտ Սաֆարյան, Սուրեն Հովհաննիսյան, Սամվել Ադամյան, Ծովինար Գալստյան, Հաղթանակ Շահումյան, Գևորգ Գալստյան, Արմեն Զաքարյան, Սվետլանա Զաքարյան, Արման Մաթևոսյան)՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013թ. դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ մտել 2014թ. հունվարի 7-ից:

Օրենսգրքի՝ «Վարչական դատարան դիմելու ժամկետները» վերադասարկումը 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

«1. Սույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարելի է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի ուժի մեջ մտնելու կամ դրա կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության օրվանից հետո՝ չորսամսյա ժամկետում, իսկ 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

2. Եթե վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտը դիմողի գնահատմամբ առ ոչինչ է, ապա սույն օրենսգրքի 1-ին մասով նախատեսված ժամկետները հաշվարկվում են այդ ակտի ընդունման մասին դիմողին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվանից սկսած»:

Սույն հոդվածը փոփոխությունների չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողները դիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը դատարանի 14.08.2015թ. որոշմամբ վերադարձվել է, ի թիվս այլնի, այն

պատճառաբանությամբ, որ դիմողները բաց են թողել դատավարական ժամկետը և դիմումին չեն կցել դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

28.08.2015թ. դիմողները դիմումը կրկին ներկայացրել են ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 20.11.2008թ. թիվ 1405-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1405-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 04.06.2015թ. թիվ 628-Ն որոշումները:

ՀՀ վարչական դատարանի 02.09.2015 թվականի որոշմամբ դիմողների դիմումն ընդդեմ ՀՀ կառավարության՝ ՀՀ կառավարության 04.06.2015 թվականի թիվ 628-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, ընդունվել է վարույթ, իսկ ՀՀ կառավարության 20.11.2008 թվականի թիվ 1405-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով դիմումի ընդունումը մերժվել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կրկին ներկայացված դիմումում դիմողները չեն վերացրել դիմումի սխալները, այն է՝ դիմումին չեն կցել դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.11.2015 թվականին կայացրած որոշմամբ դիմողների բերած վերաքննիչ բողոքը մերժվել է՝ ՀՀ վարչական դատարանի 02.09.2015 թվականի «Դիմումը մասով վարույթ ընդունելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնելով անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.03.2016 թվականի որոշմամբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.11.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ դիմողների անունից (ներկայացուցչի) բերած վճռաբեկ բողոքը մասով թողնվել է առանց քննության, իսկ մասով դրա վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի 12.12.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև սահմանադրական դատավարության կարգով քննվող՝ «Աշոտ Քոչարյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով որոշում կայացնելը:

3. Դիմողները գտնում են, որ օրենսգրքի վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության շրջանակնե-

րում, հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 10-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին:

Վիճարկվող դրույթների և Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների միջև ենթադրյալ հակասությունը հիմնավորելու համար դիմողները, վկայակոչելով նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, արձանագրելով, որ օրենսդիրն օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի համար երաշխավորել է դատական կարգով խնդրո առարկա որոշումն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունքը, գտնում են, որ վերը նշված իրավունքի ապահովման ընթացակարգերը, սակայն, այդ իրավունքի իրականացման հնարավորություն չեն ընձեռում: Մասնավորապես, ըստ դիմողների՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն նյութական իրավունքը, որի հիման վրա շահագրգիռ անձինք կարող են պահանջել բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության համապատասխան որոշման անվավերություն, սակայն այդ իրավունքի կիրառումն ապահովող դատավարական ընթացակարգերը բացակայում են օրենսգրքի հատուկ վարույթների բաժնի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 26-րդ գլխում, որով կարգավորվում են նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը դրանց ընդունման կապակցությամբ վիճարկելու ընթացակարգերը, և անդրադարձ չի կատարվում դրանց ընդունումից հետո օրենքով նախատեսված համապատասխան պայմանների հետևանքով դրանց անվավերության հարցերի քննարկման ընթացակարգերին: Արձանագրելով, որ բացառիկ գերակա հանրային շահը դադարում է գոյություն ունենալուց այն յոթ տարվա ընթացքում չիրացնելու փաստի ուժով, կամ երբ ձեռքբերողը համարվում է օտարվող սեփականությունը ձեռք բերելուց հրաժարված՝ դիմողները գտնում են, որ այդ պահից է առաջանում դատարան դիմելու շահագրգիռ անձի իրավունքը, որը սահմանափակված չէ ժամկետով:

Դիմողների համոզմամբ՝ թեև օրենքով սահմանված պայմաններն առկա են, սակայն վիճարկվող դրույթները դրանց տրված մեկնաբանությունների շրջանակներում, արգելափակում են անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրացման հնարավորությունը գրկելով վերջինիս դատական պաշտպանության և արդար դատաքննության (դատարանի մատչելիության) իրավունքներից:

Ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթները և օրենքի բացն այնքանով, որքանով չեն ապահովում իրավական որոշակիության սկզբունքի պա-

հանջները, հակասում են Սահմանադրության 79-րդ հոդվածին:

Վիճարկվող դրույթների և Սահմանադրության 28, 29 և 79-րդ հոդվածների միջև ենթադրյալ հակասությունը հիմնավորելու համար արձանագրելով, որ վիճարկվող դրույթներում առկա է օրենսդրական բաց, դիմողները գտնում են, որ նշված օրենսդրական բացն առաջացնում է խտրականություն դիմողների և օտարվող օբյեկտների ձեռքբերողներ ճանաչված իրավաբանական անձանց միջև. վերջիններս հայտնվում են ավելի բարենպաստ դրության մեջ այն պատճառով, որ ձեռքբերողի իրավունքները ժամանակային առումով երկարաձգվում են, իսկ դիմողների շահերի արդյունավետ իրավական պաշտպանության համար նախատեսված ժամկետները ոչ:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողների փաստարկներին՝ կարծում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչելով դատարանի մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումը՝ պատասխանողը գտնում է, որ դատարան դիմելու համար որոշակի ժամկետի առկայությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է, այլապես կվտանգվի արդարադատության անկյունաքարային սկզբունքներից իրավական որոշակիությունը: Ժամկետներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է ընտրել այնպիսի ժամանակահատված, որը սովորական պայմաններում բավարար լինի անձանց համար արդյունավետորեն իրացնելու իրենց իրավունքները: Պատասխանողի կարծիքով, կոնկրետ դեպքում օրենսդրի կողմից սահմանված չորսամսյա ժամկետներն այն ողջամիտ ժամկետներն են, որոնք լիովին բավարար են սովորական հանգամանքների պայմաններում արդյունավետորեն իրացնելու անձի դատական պաշտպանության իրավունքը՝ դիմելով ՀՀ վարչական դատարան: Նման իրավակարգավորումն ապահովում է դատարանի մատչելիության արդյունավետ կառուցակարգ, քանզի անձն ունի հստակ և գործնական հնարավորություն ողջամիտ ժամկետում իր իրավունքները շոշափող նորմատիվ ակտը ՀՀ վարչական դատարանում վիճարկելու համար: Ըստ պատասխանողի՝ օրենսդիրը սահմանել է նաև դատարանի մատչելիության լիարժեք ապահովման լրացուցիչ երաշխիք, այն է՝ միջնորդության ներկայացմամբ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի բաց թողնման դեպքում այն

վերականգնելու հնարավորություն, եթե առկա են հարգելի հանգամանքներ:

Անդրադառնալով դիմողների այն պնդմանը, որ կառավարության համապատասխան որոշումների արդյունքում դիմողների սեփականությունը ձեռք բերելու իրավունք ստացած կազմակերպությունը հայտնվում է իրավական առավել բարենպաստ դրության մեջ, քան դիմողները, այն պարզ պատճառով, որ հիշյալ կազմակերպությունների ձեռքբերման իրավունքը ժամանակային առումով երկարաձգվում է, իսկ դիմողների շահերի իրավական արդյունավետ պաշտպանության համար նախատեսված ժամկետները՝ ոչ, պատասխանողը հիմնագուրկ է համարում՝ պատճառաբանելով, որ քննարկվող ժամկետի երկարացումն իրականացվել է ՀՀ կառավարության 04.06.2015 թվականի թիվ 628-Ն որոշմամբ, «որն էլ, որպես իրենց շահերը շոշափող դատական ակտ փաստացի բողոքարկվել և վարույթ է ընդունվել ՀՀ վարչական դատարանի կողմից: Երբ խոսքը վերաբերում է ՀՀ կառավարության այլ նախորդող ժամանակահատվածում ընդունված որոշումների վիճարկմանը, ապա այն կարող է իրականացվել միայն սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթներով սահմանված ժամկետներում»:

Միաժամանակ պատասխանողը միջնորդում է կարճել գործի վարույթը՝ արձանագրելով, որ դիմողներն օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հակասահմանադրականության վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացրել. դիմողները պարզապես վկայակոչել են դատարանների կողմից վիճարկվող դրույթների օրենքի տառին համապատասխան կիրառված մեկնաբանությունները, առանց մանրամասնելու, թե նման մեկնաբանումն ինչով է տարբերվում օրենքի իրավակարգավորման նպատակից: Դիմումից նաև պարզ չէ, թե վիճարկվող դրույթներում սահմանվող իրավակարգավորման որ առանձնահատկություններն են հակասում Սահմանադրությանը՝ նորմատիվ ակտերի դատական վիճարկման համար օրենսդրի կողմից ինքնին ժամկետի սահմանումը, ժամկետի կոնկրետ չափը, թե մեկ այլ հատկանիշ:

Այդ կապակցությամբ վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերը, Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշման 8-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումը, պատասխանողը գտնում է, որ դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողները, ձևականորեն բարձրացնելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, բարձրացնում են այդ դրույթի՝ իրենց նկատմամբ կիրառման իրավաչափության հարց:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողները, ըստ էության, բարձրացնում են օրենքի բացի և դրան զուգորդված՝ իրավական անորո-

շության խնդիրներ, Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում պարզել.

- իրավական բացի և իրավական անորոշության վերաբերյալ դիմողների առաջ քաշած մոտեցումների հիմնավորվածությունը,

- ենթադրվող իրավական բացի առկայության պայմաններում անձի իրավունքների պաշտպանության երաշխավորվածության ու իրավական անվտանգության առկա վիճակը,

- վիճարկվող իրավակարգավորման պայմաններում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության՝ ներառյալ դատարանի մատչելիության իրավունքի ապահովումը:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատել իրավական պետության մաս կազմող իրավական որոշակիության սկզբունքի և ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված պահանջի տեսանկյունից:

6. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ հանրային շահը գերակա է ճանաչվում կառավարության որոշմամբ:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ գերակա հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել **դատական կարգով**:

Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հասարակության և պետության կարիքը չի կարող համարվել բացառիկ՝ գերակա հանրային շահ, եթե օտարման նպատակի իրագործումը չի սկսվելու **բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ տարվա ընթացքում**:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման մեջ նշվում են՝ ... սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը: Սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնական ժամկետը չի կարող մեկ տարուց, իսկ անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների դեպքում **հինգ տարուց** ավելի սահմանվել՝ սկսած բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն օտարման ենթակա **սեփականության սեփականատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի կողմից** կարող է բողոքարկվել դատարան՝ բացառիկ՝ գերակա հանրային

շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե ձեռքբերողը սույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում օտարվող սեփականության սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի դիմում դատարան սեփականության օտարման հայցով կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի փոխանցում դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է տվյալ սեփականությունը ձեռք բերելուց, և **տվյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր**»:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե անհրաժեշտ սեփականությունն օտարելուց հետո ձեռքբերողը երկու տարվա ընթացքում չի սկսում օտարման հիմք հանդիսացող գործունեությունը կամ թույլ է տալիս պետության և ձեռքբերողի միջև կնքված պայմանագիրն անվավեր կամ վաղաժամկետ լուծման հիմք հանդիսացող խախտումներ կամ **դատարանի վճռով սահմանված սեփականության օտարումն անվավեր կամ վաղաժամկետ լուծման հիմք հանդիսացող հանգամանքներ**, ապա բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումը ձեռքբերողի մասով կառավարության որոշմամբ կամ **շահագրգիռ անձի հայցադիմումով դատական կարգով կարող է համարվել անվավեր**, և օտարված սեփականությունը մրցութային կարգով ենթակա է օտարման այլ անձանց:

Օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ՝

1) որևէ անհատական իրավական ակտով, բացառությամբ դատական ակտի, կամ որևէ ռեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով) խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները.

2) իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա

դրույթով) կարող են խախտվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված իրենց իրավունքները:

2. Սույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի նորմատիվ իրավական ակտով խախտվել են պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով»:

Օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարելի է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի ուժի մեջ մտնելու կամ դրա կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության օրվանից հետո չորսամսյա ժամկետում, իսկ 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո չորսամսյա ժամկետում»:

Վերոհիշյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը կարող է սահմանել իրավական ակտերի անվավերության այնպիսի հիմքեր, որոնք կարող են առաջանալ տվյալ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից որոշակի ժամանակ անցնելուց հետո:

Տվյալ դեպքում, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, 7-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, 16-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված են բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման անվավերության այնպիսի հիմքեր, որոնք ըստ տվյալ օրենքի կարող են առաջանալ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո ընկած կոնկրետ ժամանակահատվածներում:

Մյուս կողմից, օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ վարչական դատարանում նորմատիվ իրավական ակտի վիճարկման համար սահմանում է որոշակի պայմաններ՝ դրանք ամրագրելով հինգ առանձին դրույթներով, այն է՝

- ֆիզիկական կամ իրավաբանական անձը վարչական դատարան կարող է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հետո չորսամսյա ժամկետում,

- ֆիզիկական կամ իրավաբանական անձը վարչական դատարան կարող է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի **կիրառումը (կա-**

տարումը) ապահոված գործողության օրվանից հետո՝ չորսամսյա ժամկետում,

- ֆիզիկական կամ իրավաբանական անձը վարչական դատարան կարող է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի **կիրառումը (կատարումը) ապահոված** անգործության օրվանից հետո՝ չորսամսյա ժամկետում,

- ֆիզիկական կամ իրավաբանական անձը վարչական դատարան կարող է դիմել իր նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտի դեպքում՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք ընդդեմ վարչական մարմնի վարչական դատարան կարող են դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

7. Օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների ուսումնասիրությունից բխում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից նորմատիվ իրավական ակտը ՀՀ վարչական դատարանում վիճարկելու դեպքում օրենսդիրը տվյալ տեսակի գործերով դատական պաշտպանության իրավունքի իրացման համար, ի թիվս այլնի, որպես պայման է ընդունում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի **կիրառումը (կատարումը) ապահոված անգործության** առկայությունը՝ չորսամսյա ժամկետի սկիզբը նշողնելով համապատասխան անգործության օրը: Մինչդեռ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, 7-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, 16-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված են անգործության այնպիսի տեսակներ, որոնք իրենց բնույթով **կոչված չեն ապահովելու** բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման **կիրառումը (կատարումը)**, սակայն հանդիսանում են կառավարության տվյալ որոշման անվավերության հիմք: Ընդ որում, բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածներով սահմանված անվավերության հիմքերով դատական կարգով կարող է վիճարկվել **նշված հոդվածներով սահմանված ժամկետների ավարտից հետո**, քանի որ միայն այդ ժամկետների ավարտից հետո պարզ կլինի, որ ձեռքբերողը չի կատարել նշված հոդվածներով նախատեսված գործողությունները:

Արդյունքում ստացվում է, որ մի օրենքով՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով, սահմանվում է որոշակի կառուցակարգ, այն է՝ օրենսդիրը բացառիկ

գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման վիճարկման հարցով դատարան դիմելու իրավունք է վերապահում ֆիզիկական կամ իրավաբանական անձին՝ սահմանելով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման անվավերության հիմքերը, մյուս օրենքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, օրենսդիրը դիտարկվող հարցով դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար սահմանում է թերի իրավակարգավորում:

Օրենսդիրը կիրառված նորմատիվ ակտի դեպքում հիմք է ընդունել նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտը, նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողությունը և անգործությունը, իսկ չկիրառված նորմատիվ իրավական ակտի դեպքում՝ նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելը, որոնցից սկսած հաշվարկվում է չորսամսյա ժամկետը՝ չներառելով այն դեպքերը, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի անվավերության հիմքն առաջանում է **կոնկրետ օրենքով նախատեսված դեպքում և ժամկետում:**

Նման ոչ լիարժեք կարգավորումը չի բխում դատական պաշտպանության հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու սահմանադրական պահանջից, հետևաբար՝ դատարանները վիճարկվող դրույթը մեկնաբանելիս և կիրառելիս պետք է առաջնորդվեն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով և երաշխավորեն մարդու դատական պաշտպանության հիմնական իրավունքի արդյունավետ իրականացումը:

Դատարանները դիմողների գործով օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի՝ վերը նշված հինգ դրույթներից կիրառել են չորրորդ դրույթը (ֆիզիկական և իրավաբանական անձը վարչական դատարան կարող է դիմել իր նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտի դեպքում՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ չորսամսյա ժամկետում)՝ համարելով, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը դիմողների նկատմամբ չի կիրառվել:

ՀՀ սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ խնդրո առարկայի նման իրավակարգավորումը չի բխում իր՝ 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումից, համաձայն որի՝ պետք է ապահովվի գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակական և պետական կարիքի և անհատի սեփականության իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը: Դա ենթադրում է ինչպես սեփականության իրավունքին միջամտելու վերաբերյալ անձի պատշաճ և հիմնավոր տեղեկաց-

վածության ապահովում, այնպես էլ տարբեր շահերի համադրման համատեքստում սեփականատիրոջ իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորություն:

8. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասում ձևականորեն առկա է օրենքի բաց, սակայն առկա է նաև այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիք: Որպես այդպիսի երաշխիք են հանդես գալիս օրենքներում սահմանված՝ իրավական ակտի անվավերության հիմքերը: Կոնկրետ դեպքում խոսքը վերաբերում է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, 7-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետին, 16-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին:

Հետևաբար, իրավական ակտի անվավերության հիմք հանդիսացող հանգամանքի առկայության պարագայում օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի՝ վերը նշված դրույթներում ամրագրված՝ նորմատիվ իրավական ակտի վիճարկման պայմանները սպառիչ չեն, և օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի՝ վերը նշված դրույթները պետք է կիրառվեն օրենքներով նախատեսված իրավական ակտի անվավերության հիմքեր սահմանող դրույթների հետ համադրված:

Ինչ վերաբերում է օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դիմողների նկատմամբ կիրառված լինելու հարցին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դիմողների նկատմամբ չի կիրառվել և չէր էլ կարող կիրառվել, քանի որ դիմողներն իրենց հայցադիմումով ՀՀ վարչական դատարանից պահանջել են անվավեր և ոչ թե առ ոչինչ ճանաչել ՀՀ կառավարության դիտարկվող որոշումները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ այս փաստը հանդիսանում է սույն գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի մասով կարճելու հիմք:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմա-

նադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ** .

1. «Աշոտ Քոչարյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի մասով, կարճել:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ անկախ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի կամ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության առկայության կամ բացակայության փաստից, իրավաբանական կամ ֆիզիկական անձը վարչական դատարան կարող է դիմել օրենքով սահմանված՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի անվավերության հիմքի առկայության դեպքում՝ անվավերության հիմքն առաջանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման, հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները դիմողների նկատմամբ կիրառվել են այլ մեկնաբանությամբ:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 փետրվարի 2017 թվականի
ՄԴՈ-1354



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ.
Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող),
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրա-
պետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտութ-
յան պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
(2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-
րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մա-
սին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի
դեկտեմբերի 9-ին Աստանայում ստորագրված Միջազգային գիտատեխ-
նիկական կենտրոնի գործունեությունը շարունակելու մասին համաձայ-

նագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 22.02.2017թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի գործունեությունը շարունակելու մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015թ. դեկտեմբերի 9-ին՝ Աստանայում: Համաձայնագրի նպատակն է համապատասխանեցնել Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (Կենտրոն) գործունեությունն իր հիմնադրման օրվանից փոփոխված պայմաններին այնպես, որ այն խթան հանդիսանա և աջակցություն ապահովի Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի աշխատանքներին մասնակցող, մասնավորապես միջուկային, ռադիոլոգիական, քիմիական և կենսաբանական զենքերին և դրանց մատակարարման համակարգերին, այդ թվում՝ երկակի նշանակության գիտելիքներին և հմտություններին տիրապետող գիտնականներին և ճարտարագետներին՝ միջազգային գիտական գործընկերության ձևավորման, համաշխարհային անվտանգության ամրապնդման և նորարարության միջոցով տնտեսական աճի խթանման գործում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Հայաստանի Հանրապետության տարածքում խթանել Կենտրոնի գործունեությունը,

- Կառավարիչների խորհրդի կողմից հաստատված նախագծերի՝ Համաձայնագրի 7-րդ հոդվածի (A) կետով նախատեսված ֆինանսավորումը և օժանդակությունն իրականացնել օժանդակություն տրամադրողների կողմից նշված ժամկետով և պայմաններով՝ այն պայմանով, որ ժամկետներն ու պայմանները պետք է համապատասխանեն Համաձայնագրին,

- ստանձնել Համաձայնագրի 9-րդ հոդվածի (C) կետով, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով սահմանված պարտավորությունները, այն պարագայում, եթե 9-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունը խնդրանք ներկայացնի և նշանակվի որպես հաջորդ Ընդունող պետություն,

- որպես Ընդունող պետություն ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր հաշվին Կենտրոնի օգտագործման համար տրամադրի համապատասխան տարածք, իրականացնի տարածքի պահպանման, կոմունալ ծառայությունների և անվտանգության ապահովումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը կարող են կնքել համաձայնագիր՝ նշելով այն ժամկետները և պայմանները, որոնց հիման վրա Հայաստանի Հանրապետությունը Կենտրոնին կտրամադրի նյութական աջակցություն և տարածք,

- որպես Ընդունող պետություն ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության տարածքում Կենտրոնն ունենա իրավաբանական անձի կարգավիճակ և այդ կարգավիճակով իրավասու լինի կնքելու պայմանագրեր, ձեռք բերելու և տնօրինելու անշարժ և շարժական գույք, ինչպես նաև դատարանում հանդես գալու որպես հայցվոր և պատասխանող,

- որպես Ընդունող պետություն Հայաստանի Հանրապետության տարածքում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնին տրամադրել Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված հարկային և մաքսային արտոնությունները,

- Կենտրոնին շնորհել արտոնություններ և անձեռնմխելիություն բացառապես Համաձայնագրում ամրագրված նպատակների իրագործման համար,

- որպես Ընդունող պետություն ապահովել, որպեսզի Համաձայնագրի 11-րդ հոդվածի (A) կետում նշված որևէ բան չմեկնաբանվի որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձանց դատաքնությունից կամ հայցերից ազատող միջոց,

- որպես Ընդունող պետություն ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Կենտրոնի աշխատակիցներն ու նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստանան Համաձայնագրի 12-րդ հոդվածի (A) կետով նախատեսված արտոնությունները և անձեռնմխելիությունը,

- որպես Ընդունող պետություն ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությունը Կառավարիչների խորհրդի կազմի մեջ մտնող Կողմերի ներկայացուցիչներին, Գործադիր տնօրենին ու Գործադիր տնօրենի տեղակալներին, ի հավելումն Համաձայնագրի 12-րդ հոդվածի (A) կետում նշված արտոնություններին և անձեռնմխելիությանը, ընձեռնի որոշ հավելյալ արտոնություններ, անձեռնմխելիություն, ազատումներ և դյուրացումներ, որոնք Հայաստանի Հանրապետության կողմից սովորաբար տրվում են Հայաստանի Հանրապետության տարածքում

զտնվող միջազգային կազմակերպությունների անդամների և գործադիր տնօրենների ներկայացուցիչներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. 2015 թվականի դեկտեմբերի 9-ին Աստանայում ստորագրված՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի գործունեությունը շարունակելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 մարտի 2017 թվականի
ՍԴՈ-1355



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 141Դ ՀՈՂՎԱԾԻ 5-ԸՆ
ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հ. Մարգարյանի և Վ. Էնֆիաջյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Մարգարյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա ՀՀ ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 5րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի թվով 32 պատգամավորների՝ 2016 թվականի նոյեմբերի 17ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ ընտրական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ** .

1. Որպես սահմանադրական դատարան դիմելու իրավունքի հիմք՝ դիմող կողմը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 168րդ (1ին կետ) և 169րդ (1ին մասի 2րդ կետ) հոդվածները: Այդ հոդվածների հիմքերով ՀՀ սահմանադրական դատարանը գործ քննելու իրավասություն չունի, քանի որ ըստ ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 209րդ հոդվածի 6րդ մասի՝ վերոհիշյալ հոդվածները «...ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: Մինչ այդ շարունակում են գործել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները»:

Սույն գործով դիմումի քննությունը Սահմանադրական դատարանն իրականացնում է՝ ղեկավարվելով 2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 100րդ հոդվածի 1ին կետի, 101րդ հոդվածի 1ին մասի 3րդ կետի դրույթներով:

2. ՀՀ ընտրական օրենսգիրքը (ՀՕ-54Ն) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի մայիսի 28-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփումը» վերստառությամբ 141-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Եթե սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով մանդատների բաշխման արդյունքով կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից) մեկը ստանում է տեղերի 40 տոկոսից ավելին, սակայն ոչ բացարձակ մեծամասնությունը, ապա տեղերի բացարձակ մեծամասնությունը տրվում է այդ կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին): Եթե տեղերի 40 տոկոսից ավելին ստանում է երկու կուսակցություն (կուսակցությունների դաշինք), սակայն ոչ բացարձակ մեծամասնությո-

յունը, ապա տեղերի բացարձակ մեծամասնությունը տրվում է այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որն ստացել է առավել թվով մանդատներ: Մնացած մանդատները բաշխվում են մանդատների բաշխմանը մասնակցելու իրավունք ստացած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև»:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը լրացվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հոկտեմբերի 20ին ընդունված ՀՕ158-Ն օրենքով (հոդված 18), որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2016 թվականի հոկտեմբերի 29ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 14-ին:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 2րդ, 5րդ, 7րդ, 9րդ, 28րդ, 181րդ և 182րդ հոդվածներին: Ըստ դիմողի՝ «վերլուծելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» 141րդ հոդվածի 5րդ մասը՝ ակնհայտ է դառնում, որ այն չի կարգավորում, չի հիմնավորում և չի սահմանում հետևյալ հասկացությունները՝ ինչ է բացարձակ մեծամասնությունը և ինչ կարգով են բաշխվում մնացած մանդատները կուսակցությունների միջև, ինչ համամասնությամբ»: Դիմողը գտնում է, որ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման կարգը նախատեսող իրավակարգավորմամբ ներդրված «բոնուսային» համակարգով «ոչ միայն սեփական քվեների, այլ նաև 6 և 8 տոկոս նվազագույն ընտրական շեմը չհաղթահարող կուսակցությունների քվեների արդյունքում ստացած 40 տոկոսից ավելի տեղեր ունեցող կուսակցությանը մեխանիկորեն տրվում է տեղերի բացարձակ մեծամասնությունը», որը հակասում է ՀՀ Սահմանադրության 2րդ հոդվածին, քանի որ «մեծամասնության իշխանությունը ձևավորվում է ոչ թե ժողովրդի կողմից ստացված քվեների արդյունքում, այլ արհեստականորեն «բոնուսային» համակարգով սահմանվող բացարձակ մեծամասնությամբ», որը «հիմք է դառնում առանց ավագանիների քվեարկության համայնքի ղեկավարի նշանակմանը, այսինքն խախտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7րդ հոդվածում ամրագրված գաղտնի քվեարկությամբ ընտրություն կատարելու սկզբունքը, ինչը տեսականորեն հիմք է ստեղծում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում ժողովրդի կողմից 40 տոկոսից ցածր, նույնիսկ 1015 տոկոս վստահության քվե ստացած քաղաքական ուժերին ունենալու բացարձակ մեծամասնություն և առանց որևէ քվեարկության նշանակել քաղաքապետ»: Բացի դրանից, ըստ դիմող կողմի՝ ՀՀ ընտրական օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորմամբ «սահմանված չէ» ընտրությունների արդյունքներով մանդատների բաշխման արդյունքով տեղերի

«բացարձակ մեծամասնությունը» եզրույթը՝ ի տարբերություն Ազգային ժողովի ընտրությունների: Ի տարբերություն Ազգային ժողովի ընտրությունների, որի դեպքում «բացարձակ մեծամասնությունը տրվում է ոչ թե քաղաքական ուժերից մանդատներ վերցնելով, այլ ավելացվում է մանդատների ընդհանուր թիվը»՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն թվի (101)՝ օրենսգրքով ամրագրման պարագայում, «իսկ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար ընտրական օրենսգրքով ամրագրված է համապատասխանաբար 65 և 33 ավագանու անդամների թվերը, որը ըստ օրենքի պահանջի անփոփոխ է և ավելացման ենթակա չէ»: Արդյունքում, ինչպես եզրակացնում է դիմողը, «Երևանի, Գյումրու և Վանաձորի ՏԻՄ ընտրություններում որևէ քաղաքական ուժի կամ դաշինքի ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5րդ մասում ամրագրված մեխանիզմով բացարձակ մեծամասնությունը ապահովելու արդյունքում մյուս կուսակցությունները զրկվում են իրենց մանդատներից»: Ըստ դիմող կողմի՝ «վերը նշված իրողությունների ներքո ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5րդ մասը հնարավորություն է տալիս քաղաքական ուժերին «բռնուսային» համակարգի միջոցով արհեստականորեն ստանալ բացարձակ մեծամասնություն և առանց ավագանու քվեարկության «նշանակել» համայնքի ղեկավար»:

4. Պատասխանող կողմը վիճարկվող դրույթների, ՀՀ ընտրական օրենսգրքի 5, 96, 123 և 124րդ հոդվածների ու ՀՀ Սահմանադրության 2, 5, 7, 28, 181 և 182րդ հոդվածների դրույթների համադրման արդյունքում գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Մասնավորապես, ըստ պատասխանողի՝ Սահմանադրությունը «...որևէ կերպ չի անդրադառնում Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների արդյունքներն ամփոփելու և մանդատները բաշխելու կարգին», իսկ ՀՀ Սահմանադրության 181րդ հոդվածի 2րդ մասն «...ուղղակիորեն ավագանու ընտրությունների արդյունքներն ամփոփելու և մանդատները բաշխելու կարգը սահմանելու լիազորությունը պատվիրակում է ՀՀ օրենսդրին»:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5րդ մասի և ՀՀ Սահմանադրության 182րդ հոդվածի միջև «...որևէ հակասություն կամ համակարգային կապ նույնպես առկա չէ, քանի որ վերջինիս կարգավորման առարկան ոչ թե ընտրությունների կարգն է, այլ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները»:

Անդրադառնալով հավասարության սկզբունքով ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ դիմող կողմի փաստարկին՝ պատասխանող կողմը գտնում է, որ «Հավասարության սկզբունքն ընտրական իրավունքի ... հիմքերից մեկն է: Ժողովրդավարության հրամայական պահանջներից մեկը բոլոր քաղաքացիների քաղաքական հավասարությունն է՝ «մեկ

մարդ՝ մեկ ձայն» սկզբունքով: Ըստ պատասխանողի՝ «...նույն ընտրական համակարգով նույն ընտրությունների ժամանակ քվեարկող բոլոր ընտրողները ... պետք է ունենան հավասար թվով ձայն՝ պարտավորեցնելով ապահովել հավասարությունն ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում՝ թե պասիվ և թե ակտիվ ընտրական իրավունքի համար», հետևաբար, ինչպես եզրակացնում է պատասխանողը, «ՀՀ ընտրական օրենսգրքի վիճարկվող դրույթը չի հակասում ՀՀ Սահմանադրության 7րդ և, հետևաբար՝ 28րդ հոդվածներին»:

Պատասխանող կողմն անդրադառնում է ներկայացուցչական ժողովրդավարության էությանը՝ դիտարկելով այն ՀՀ Սահմանադրության 2րդ հոդվածի համատեքստում, և գտնում է, որ «Առկա չէ նաև որևէ հակասություն ՀՀ Սահմանադրության 2րդ հոդվածով ամրագրված ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքին: Հակառակ պարագայում ոչ միայն նշված դրույթը, այլ նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 96րդ հոդվածի 1ին մասը, ինչպես նաև մեծամասնության բռնուսի համակարգի ինստիտուտը կհակասի ժողովրդաիշխանության սկզբունքին»: Նշված «իրավակարգը», ըստ պատասխանողի, «... միտված է ապահովելու ընտրական և կառավարման համակարգերի կայունությունը, և դրանից կարող է օգտվել բացառապես մանդատների ավելի քան 40 տոկոսը վերցրած ուժը»:

Պատասխանող կողմը եզրակացնում է, որ «... ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու մանդատների բաշխման կարգը ՀՀ Սահմանադրությանը չի հակասում, և, հետևաբար, առկա չէ հակասություն ՀՀ Սահմանադրության 5րդ հոդվածին: ՀՀ Սահմանադրությունը չի արգելում համայնքի ավագանու ընտրության ժամանակ մեծամասնության բռնուսի համակարգի կիրառումը»:

5. Սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 181րդ հոդվածում նախատեսված՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության սահմանադրաիրավական, ինչպես նաև միջազգային իրավապայմանների երաշխավորումը,

ավագանիների ընտրություններն անցկացնելու սահմանադրաիրավական սկզբունքի իրացման երաշխավորումը՝ որպես նաև տեղական ինքնակառավարումը երաշխավորելու սահմանադրաիրավական պահանջի կատարման էական պայման (ՀՀ Սահմ. (2015թ. փոփոխություններով) հոդվածներ 7, 9),

ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման եվրոպական նորմատիվ իրավական կարգավորման պրակտիկական և վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում վերջինիս արտացոլման

առանձնահատկությունները, հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 181րդ հոդվածի 2րդ մասում ամրագրված օրենսդրական կարգավորման հայեցողական ազատության իրացման սահմանադրական և միջազգային իրավական չափորոշիչներն ու սկզբունքները,

ընտրական իրավունքի հիմնական սկզբունքների սահմանադրաիրավական բովանդակության և դրանց օրենսդրական երաշխավորման վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացումը:

Սույն գործի շրջանակներում վիճարկվող նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելիս Սահմանադրական դատարանն առաջնորդվում է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68րդ հոդվածի 7րդ մասի պահանջներով:

6. ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 9րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը որպես ժողովրդավարության էական հիմք, որի ձևավորման սահմանադրաիրավական սկզբունքը համայնքի ավագանիների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ ընտրություններն են (Սահմ. հոդված 7), ինչպես նաև համայնքի ղեկավարի՝ նույն օրենսգրքին համապատասխան ուղղակի կամ անուղղակի ընտրությունը (Սահմ. հոդված 181, մաս 1):

Սահմանադրական դատարանն իր ՄԴՌ167, ՄԴՌ408, ՄԴՌ412, ՄԴՌ-703, ՄԴՌ1027, ՄԴՌ1028, ՄԴՌ1076 որոշումներում բազմիցս անդրադարձել է ընտրական իրավունքի իրացման հիմնական սկզբունքների սահմանադրաիրավական բովանդակությանը, արձանագրել ընտրական գործընթացները կանոնակարգող օրենսդրության նորմերում այդ սկզբունքներն անվերապահ երաշխավորելու կարևորությունը՝ պետական իշխանության համակարգում ժողովրդավարության սկզբունքների հաստատման և հետագա զարգացման ու ամրապնդման՝ ՀՀ Սահմանադրությամբ նախանշված գործընթացներում:

Սահմանադրական դատարանը վերահաստատելով վերոհիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, սույն գործով կարևորում է ընտրական իրավունքը՝ վերջինիս սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան իրացնելու անհրաժեշտությունը նաև հանրային իշխանության տեղական մարմինների ձևավորման գործընթացներում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ որևէ առանձնահատկություն, նախապայման (այդ թվում՝ ընտրական այս կամ այն համակարգի կիրառման պարագայում) սահմանադրաիրավական առումով չի կարող իրավաչափ հիմք հանդիսանալ հիմնավորելու ընտրա-

կան իրավունքի հիմնարար սկզբունքներից հնարավոր որևէ շեղում: ՀՀ Սահմանադրության 7րդ (ավագանիների ընտրությունների մասով) և 181-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունից է բխում այդ սկզբունքների անվերապահ երաշխավորման պահանջը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, թեև ընտրական իրավունքի սկզբունքների և ընտրությունների կարգի միջև անխզելի կապն առկա է, սակայն դրանք չեն կարող նույնացվել կամ հակադրվել միմյանց:

7. ՀՀ Սահմանադրության 7րդ, 9րդ և 181րդ հոդվածների ընդհանուր իրավական բովանդակությունից հետևում է, որ ՀՀում տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվում են համայնքներում՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սկզբունքներին ու ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան կազմակերպված ընտրությունների հիման վրա, ընդ որում.

ա) ավագանիները՝ որպես սահմանադրական սկզբունք՝ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի իրացմամբ և գաղտնի քվեարկությամբ,

բ) համայնքի ղեկավարը՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով՝ ուղղակի կամ անուղղակի ընտրությամբ: Ընդ որում, ուղղակի ընտրակարգով համայնքի ղեկավարի ընտրության դեպքում են կիրառելի ընտրական իրավունքի իրացման ՀՀ Սահմանադրության 7րդ հոդվածում սահմանված սկզբունքները:

Այսպիսով, եթե համայնքի ավագանին համայնքի բնակիչների կողմից ընտրվում է բացառապես ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի և գաղտնի ընտրության արդյունքում, ապա համայնքի ղեկավարի ընտրության (ուղղակի կամ անուղղակի) հարցը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգն ընդհանրապես սահմանվում է Սահմանադրության 181րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն: Վերջինս վկայում է, որ Սահմանադրությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության որևէ կոնկրետ մոդել (ընտրակարգ) չի նախատեսում, այլ այն թողնում է օրենսդրի հայեցողությանը:

Այսպիսով, սահմանադրականության տեսանկյունից, ինչպես նաև առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7րդ մասի պահանջներով, իրավաչափ է ՀՀ ընտրական օրենսգրքով ինչպես համայնքի ավագանու անդամների՝ ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ, այնպես էլ համայնքի ղեկավարի՝ ուղղակի կամ անուղղակի ընտրական իրավունքի սկզբունքներով ընտրությունների կազմակերպման կարգ սահմանելը, **ինչն ըստ էության պատգամավորների ձայների գրեթե 4/5 մեծամասնու-**

թյամբ 2016 թվականի մայիսի 25-ին իրացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ընդունմամբ:

Հարկ է արձանագրել, որ տեղական ինքնակառավարման ինստիտուտի ձևավորման սահմանադրական և օրենսդրական նման կարգի սահմանումն ունի նաև միջազգային իրավական հիմնավորում: Մասնավորապես, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (ՀՀի համար ուժի մեջ է մտել 01.05.2002թ., ՄԴՈ332) 3րդ հոդվածի, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրության (ՀՀի համար ուժի մեջ է մտել 01.09.2013թ., ՄԴՈ1067) 1ին հոդվածի իրավական ընդհանուր բովանդակությունից է հետևում տեղական ինքնակառավարմանը (ինքնակառավարման ձևավորմանը) քաղաքացիների մասնակցությունը, մասնավորապես՝ սահմանադրական կարգին համապատասխան համայնքներում ինչպես ներկայացուցչական (ավագանի), այնպես էլ օրենքով սահմանված կարգով վերջիններիս հաշվետու գործադիր մարմիններ (այդ թվում՝ համայնքի ղեկավար) ձևավորելու միջոցով:

Այսպիսով, դիմող կողմը, ՀՀ ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում վիճարկելով ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման կարգը, փոխկապակցելով այն համայնքի ղեկավարի ընտրության գործող ընթացակարգի հետ, անտեսել է տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման սահմանադրական կարգի առանձնահատկությունը, համաձայն որի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվել են միայն համայնքների ավագանիների (այդ թվում՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի) ընտրություններում ընտրական իրավունքի իրացման **սկզբունքները** (ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրություններ, գաղտնի քվեարկություն), ինչպես նաև համայնքի ղեկավարի՝ ՀՀ ընտրական օրենսգրքին համապատասխան **ուղղակի կամ անուղղակի** սկզբունքով ընտրության նախապայմանը: Հետևաբար, սահմանադրաիրավական, ինչպես նաև միջազգային իրավական վերոնշյալ կարգավորումներով է պայմանավորված ՀՀ ընտրական օրենսգրքում՝ ավագանիների (այդ թվում՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի), ինչպես նաև համայնքների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի) ընտրությունների կարգի սահմանադրաիրավական բովանդակությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրականության տեսանկյունից սույն գործով սկզբունքային նշանակություն ունեն ՀՀ Սահմանադրության հատկապես 7րդ և 181րդ հոդվածների իրավակարգավորումները:

8. Վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման իրավակարգավորման շրջանակներում որևէ այլ նախապայման (բացի ընտրական իրավունքի իրացման սկզբունքների պահպանումից), ի տարբերություն ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների, սահմանված չէ: Ուստի անհիմն են համայնքի ավագանու և ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների կարգի վերաբերյալ դիմող կողմի համեմատական փաստարկները կամ պնդումներն ըստ էության այն մասին, թե համայնքի ավագանու ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ընտրակարգը պետք է համադրելի լինի ՀՀ Ազգային ժողովի` ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված կարգին:

ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 89-րդ հոդվածի համաձայն` ՀՀ Ազգային ժողովում կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման, հետևաբար և` համապատասխան ընտրակարգի սահմանման հայեցողությունը վերապահվել է օրենսդիր մարմնին, որի իրացման սահմանադրաիրավական պայմանը նման մեծամասնության ձևավորումն է: ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 2-րդ մասն ամբողջությամբ ՀՀ ընտրական օրենսգրքին է վերապահել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգի սահմանումը: Սակայն, որևէ սահմանադրաիրավական հիմք առկա չէ այդ կարգերի նույնական կամ համանման լինելու առնչությամբ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած ՀՀ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում մանդատների բաշխման ընթացակարգերը տարբեր են, սակայն երկու դեպքում էլ դրանք հետապնդում են համանման նպատակ, այն է` սահմանված որոշակի նվազագույն տեղեր կամ քվեներ ստացած կուսակցությանը հավելյալ տեղեր (մանդատներ, բնուսներ) տրամադրելու միջոցով ապահովել որոշակի մեծամասնություն` կայուն կառավարում ապահովելու նպատակով: Դա նույնպես Սահմանադրությունից բխող իրավաչափ նպատակ է, սակայն չի կարող հիմք հանդիսանալ այդ երկու գործընթացների իրավակարգավորումները նույնականացնելու համար: Ելնելով համապետական և տեղական ընտրությունների բնույթից ու դրանց առանձնահատկություններից` Սահմանադրությունը, ինչպես նշվեց, բացառապես օրենսդրին է վերապահել ընտրակարգի ձևի ու բովանդակության (մոդելի) ընտրության և տվյալ հարաբերությունների իրավակարգավորման հայեցողությունը:

9. Անդրադառնալով Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման իրավակարգավորման

շրջանակներում ավագանու մանդատների բաշխման սահմանված կարգի և այդ բաշխման չափորոշիչ՝ «բացարձակ մեծամասնություն» եզրույթի վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդիրը նախնառաջ դիտարկել ՀՀ Սահմանադրության 181րդ հոդվածի 2րդ մասի իրավակարգավորման համատեքստում, համաձայն որի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Ընտրական օրենսգրքով»: «Ընտրությունների կարգ» եզրույթն ընդգրկում է ընտրական ողջ գործընթացը, այդ թվում՝ քվեարկության արդյունքների ամփոփումը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման իրավակարգավորման հիմքում դրված է այդ համայնքներում ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև ավագանու անդամների մանդատների բաշխման իրար հաջորդող, հետևյալ կանոնները.

ավագանու անդամների մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն՝ կիրառելով հետևյալ հաշվարկի ձևը. յուրաքանչյուր ընտրական ցուցակին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է ընտրական ցուցակներին հասանելիք մանդատների թվով, արդյունքը բաժանվում է մանդատների բաշխմանը մասնակցող ընտրական ցուցակներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվերն են,

մնացած մանդատներն ընտրական ցուցակների միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով, իսկ մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն ընտրական ցուցակին, որին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ,

էթե մանդատների բաշխման արդյունքով կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից) մեկը ստանում է ավագանու անդամների մանդատների (տեղերի) 40 տոկոսից ավելին, սակայն ոչ բացարձակ մեծամասնությունը, ապա այդ մանդատների (տեղերի) բացարձակ մեծամասնությունը տրվում է այդ կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին),

Եթե ավագանու անդամների մանդատների (տեղերի) 40 տոկոսից ավելին ստանում է երկու կուսակցություն (կուսակցությունների դաշինք), սակայն ոչ բացարձակ մեծամասնությունը, ապա ավագանու անդամների մանդատների (տեղերի) բացարձակ մեծամասնությունը տրվում է այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որն ստացել է առավել թվով մանդատներ,

մնացած մանդատները բաշխվում են մանդատների բաշխմանը մասնակցելու իրավունք ստացած մյուս այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար՝ 6 (վեց) և 8 (ութ) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 16.12.2016թ. 01598 գրությամբ Մահմանադրական դատարանին տրամադրված տեղեկանքի հիման վրա վիճարկվող նորմերի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոթվարկյալ ընթացակարգերին համապատասխան են ամփոփվել և մանդատները բաշխվել 2016 թվականի հոկտեմբերի 2ին անցկացված Գյումրու ավագանու ընտրությունների արդյունքները:

Ինչպես հետևում է Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամների մանդատների բաշխման իրար հաջորդող վերը թվարկված, կանոնակարգումներն այդ համայնքներում ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման ողջ գործընթացի իրավակարգավորման պարտադիր և սկզբունքային տարրերն են, որոնցից որևէ մեկի բացառումը կհիմաստազրկի ողջ գործընթացը, կհանգեցնի իրավական անորոշության և ընտրական գործընթացի ձախողման:

Դիմող կողմը վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5րդ մասի սահմանադրականությունը՝ առանձնացնելով ավագանու անդամների մանդատների բաշխման, ըստ էության, ավարտական փուլն իրավակարգավորման ողջ տրամաբանությունից, մասնավորապես.

հաշվի չի առել հիշյալ հոդվածի հատկապես 4րդ և 5րդ մասերի նորմերի անմիջական իրավական և տրամաբանական փոխկապակցվածությունը, միաժամանակ այդ հոդվածի 4րդ մասը դիտարկելով որպես մի «կարգ», որը «...հնարավորություն է տալիս ժողովրդին ըստ Մահմանադրության 2րդ հոդվածի ազատ ընտրությունների միջոցով իրականացնել իր իշխանությունը» (դիմումի 4րդ էջ),

անտեսել է, որ օրենսգրքի 141րդ հոդվածի միայն 4րդ մասի կիրառմամբ ավագանու անդամների մանդատների բաշխման իրավական գործընթացը լիարժեք չէ,

ձևական տեսանկյունից վիճարկելով մանդատների բաշխման ամ-

փոփման ավարտական փուլի (հիշյալ հոդվածի 5րդ մաս) իրավակարգավորման սահմանադրականությունը, չի ներկայացրել որևէ հիմնավոր փաստարկ դրա հակասահմանադրականության վերաբերյալ, այլ հարցն ըստ էության դիտարկել է «բացարձակ մեծամասնություն» եզրույթի սահմանադրականության, ինչպես նաև համայնքի ղեկավարի ընտրության հարցում ավագանու անդամների մանդատների բաշխման կարգի կիրառման հնարավոր հետևանքի տեսանկյուններից:

Ինչ վերաբերում է վիճարկվող նորմում «բացարձակ մեծամասնություն» եզրույթի իմաստաբանական և սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ դիմող կողմի հարցադրմանը, ապա արդի հայե-րենի բացատրական բառարաններում այդ եզրույթը մեկնաբանվում է որպես «քվեարկողների կեսից ավելին» (օր.՝ «Արդի հայերենի բացատրական բառարան», հեղ.՝ Է.Բ.Աղայան): Ընտրական իրավունքում տարբերակվում են ձայների «բացարձակ», «պարզ», «հարաբերական» և «որակ-յալ» մեծամասնություն հասկացությունները: «Բացարձակ մեծամասնությունը» դիտարկվում է որպես ձայների 50 տոկոս + 1 ձայն: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1ին մասի իրավակարգավորման իմաստով, տվյալ հասկացությունը «հանրաձայն» է՝ ելնելով դրա լեզվագիտական (բառարանային) հիշյալ ընդհանուր բնորոշումից, և չունի բազմիմաստ նշանակություն: Ընդ որում, օրենսդրի լիազորությունն է անհրաժեշտության դեպքում սահմանել ձայների տարբեր հարաբերակցություն, եթե դա կոնկրետ դեպքում ունի իրավակարգավորիչ որոշակի նշանակություն, ինչն առկա է նաև սահմանադրաիրավական բազմաթիվ կարգավորումներում (ՀՀ Սահմ. 103րդ հոդվածի 2րդ մաս, 192րդ հոդվածի 1ին մաս, ՀՀ Սահմ. (2005թ. փոփոխություններով) 102րդ հոդվածի 4րդ մաս և այլն): Այս համատեքստում հիմնավոր չէ դիմողների այն փաստարկը, որ «...ԱԺ ընտրությունների համար բացարձակ մեծությունը սահմանված է 54 տոկոսը...»: Այստեղ «բացարձակ մեծություն» եզրույթի մեջբերումը հիմնավոր չէ, քանի որ Ազգային ժողովի ընտրությունների առնչությամբ այն չի կիրառվել որպես Ընտրական օրենսգրքի նորմատիվ ձևակերպում, իսկ 54 տոկոսն ըստ իրավական բովանդակության (ՀՀ ընտրական օրենսգրքի 96, 97 և 98րդ հոդվածներ)՝ ձայների այլ հարաբերակցություն է: Տվյալ պարագայում, ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3րդ մասի իմաստով, խոսքը վերաբերում է կայուն խորհրդարանական մեծամասնություն արտահայտող նվազագույն ցուցիչին (հաշվարկային հիմքին):

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող նորմերում «բացարձակ մեծամասնություն» եզրույթն իր իմաստաբանական վերոհիշյալ բովանդակությանը համապատասխան մեկնաբանվելու ու կիրառվելու դեպքում սահմանադրականության խնդիր

չի կարող հարուցել: ՀՀ ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5րդ մասի նորմատիվ բովանդակության իմաստով այն նախատեսված է որոշակի կոնկրետ իրավահարաբերություններ կարգավորելու նպատակով: Մասնավորապես՝ «բացարձակ մեծամասնություն» եզրույթն արտահայտում է տվյալ համայնքում ավագանու տեղերի այն քանակը (50 տոկոս+1), որը դիտարկվում է որպես հաշվարկային հիմք մանդատների վերաբաշխման գործընթացի իրականացման համար՝ առաջնորդվելով նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 123րդ հոդվածում սահմանված Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների տեղերի ընդհանուր քանակներից:

10. Անդրադառնալով ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման եվրոպական նորմատիվ իրավական կարգավորման պրակտիկային և վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում վերջինիս արտացոլման առանձնահատկություններին՝ Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփման գործընթացի իրավակարգավորման ընտրության հարցում ՀՀ Սահմանադրության 181րդ հոդվածի 2րդ մասում նախատեսված հայեցողական ազատության իրացումը, այլև միջազգային իրավական պրակտիկայում առկա փորձն ու չափորոշիչները հաշվի առնելը: Մասնավորապես, Իտալիայում, Ֆրանսիայում, Հունաստանում նման փորձի ուսումնասիրությունը վկայում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրակարգի, այդ թվում՝ ներկայացուցչական մարմնի անդամների մանդատների բաշխման բազմազանության և, այսպես կոչված, «բոնուսային» (հավելյալ մանդատների բաշխման) համակարգի կիրառման մասին:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ բոնուսային համակարգի կիրառման հիմքում պետք է դնել ընտրության մասնակցի ստացած ձայների հարաբերական մեծամասնության այնպիսի սահման, որը կվկայի ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի համաչափության մասին: Գործնականում նման սահման է համարվում ստացած տեղերի ոչ պակաս 40 տոկոսը:

Ընտրական այս կամ այն համակարգի ներդրման հայեցողական ազատության իրավական չափորոշիչների հատկանշման, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքներով ընտրական համակարգի հետագա կատարելագործման առումով կարևոր են նաև Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սկզբունքային մոտեցումները, համաձայն որոնց.

«Ընտրական համակարգի ընտրությունը պետք է կատարվի ժողովրդավարության սկզբունքների հիման վրա, անկախ դրա՝ համամասնական, մեծամասնական կամ խառը լինելու հանգամանքից: Անհրաժեշտ

է նշել, որ գոյություն չունի այնպիսի «լավագույն» ընտրական համակարգ, որը հնարավոր լինի ներդնել աշխարհի բոլոր պետություններում»: («Ընտրական իրավունքը և ընտրական վարչարարությունը Եվրոպայում», զեկույց, 12 հունիսի 2016թ.),

-«...Ընտրական համակարգի նպատակահարմարությունը որոշվում է ելնելով այն հանգամանքից, թե արդյոք այն արդարացի է հաշվի առնելով տեղական պայմաններն ու խնդիրները»: («Ընտրական իրավունքը և ընտրական վարչարարությունը Եվրոպայում», զեկույց, 12 հունիսի 2016թ.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով ընդգծել է.

«...Դատարանն ի սկզբանե նշում է, որ ինքն իրավասու չէ քննարկել ներպետական ընտրական իրավունքը վերացական կարգով, և ներպետական իրավունքի մեկնաբանումն ու կիրառումը բացառապես ներպետական մարմինների, մասնավորապես դատարանների իրավասությունն է»: (Gitonas and Others v. Greece, 1 July 1997, § 44, Reports of Judgments and Decisions 1997 IV, and Briķe v. Latvia (dec.), no. 47135/99, 29 June 2000),

«Այս ոլորտում կանոնները տարբեր են ելնելով յուրաքանչյուր պետությանը ներհատուկ պատմական և քաղաքական գործոններից. Եվրոպայի խորհրդի անդամ բազմաթիվ պետությունների ընտրական օրենսդրություններում առկա տարբեր իրավիճակները ցույց են տալիս հնարավոր տարբերակների բազմազանությունը: 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման նպատակներով ցանկացած ընտրական օրենսդրություն պետք է գնահատվի կոնկրետ պետության քաղաքական զարգացման լույսի ներքո, հետևաբար մի համակարգի համատեքստում անընդունելի առանձնահատկությունները կարող են արդարացված համարվել մեկ այլ համակարգի համատեքստում»: (Py v. France, no. 66289/01, § 46, ECHR 2005 I),

«Ինչ վերաբերում է ընտրական համակարգի ընտրությանը, ապա Դատարանը վերահաստատում է, որ Պայմանավորվող պետություններն այս ոլորտում ունեն լայն հայեցողություն: Այդ կապակցությամբ 1-ին արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է միայն «ազատ» ընտրություններ, որոնք անցկացվում են «ողջամիտ պարբերականությամբ», «գաղտնի քվեարկությամբ» և «մարդկանց կարծիքի ազատ արտահայտումն ապահովող պայմաններում»: Այսպիսի ձևակերպումը չի սահմանում համամասնական ներկայացուցչության կամ մեծամասնական քվեարկության «կոնկրետ համակարգ ընտրելու պարտականություն»: (Mathieu-Mohin and Clerfayt, cited above, § 54):

Այսպիսով, միջազգային իրավական վերոհիշյալ պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ ընտրական գործընթացների (այդ թվում՝ հանրային իշխանության տեղական մարմինների ընտրությունների) վե-

րաբերյալ կառուցակարգային բնույթի իրավակարգավորումներ նախատեսելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով ու չափորոշիչներով.

ընտրական այս կամ այն համակարգի ընտրությունը պետք է կատարվի ժողովրդավարական հիմնական սկզբունքների հիման վրա՝ սահմանադրորեն թույլատրելի հայեցողական ազատության շրջանակներում, միաժամանակ ելնելով այն իրողությունից, որ գոյություն չունի միջազգայնորեն ընդունելի կիրառման ենթակա միասնական մոդել (ընտրական համակարգ),

ընտրական այս կամ այն համակարգն ընտրելիս անհրաժեշտաբար պետք է հաշվի առնվեն տեղական պայմաններն ու առանձնահատկությունները, քաղաքական մշակույթի զարգացման աստիճանը,

ընտրական այս կամ այն համակարգի ընտրությունը պետք է երաշխավորի ազատ, արդար, ողջամիտ պարբերականությամբ և գաղտնի քվեարկությամբ անցկացվող ընտրություններ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Երևանի, Գյումրու և Վանաձորի համայնքների ավագանիների ընտրության՝ համամասնական ընտրակարգով ընտրական համակարգը՝ սույն գործով վիճարկվող նորմերի իրավակարգավորման շրջանակներում, չի հակասում վերը թվարկված միջազգային իրավական չափորոշիչներին:

11. Ինչ վերաբերում է համայնքի ավագանու անդամների մանդատների բաշխման արդյունքների և համայնքի ղեկավարի ընտրության միջև «հնարավոր» իրավական պատճառահետևանքային կապի վերաբերյալ դիմումում բարձրացված հարցին, ապա Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել ՀՀ ընտրական օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը նախատեսող և վերջինիս հետ փոխկապակցված, ինչպես նաև օրենսդրության այլ նորմերի համակարգային վերլուծության համատեքստում: Այդ վերլուծությունը մասնավորապես վկայում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 5րդ հոդվածում՝ Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքների ղեկավարների ընտրության կարգ սահմանելիս օրենսդիրն իրացրել է ՀՀ Սահմանադրության 181րդ հոդվածի 1ին մասում նախատեսված իր **հայեցողական լիազորությունը**, համաձայն որի՝ այդ համայնքների ղեկավարները պետք է ընտրվեն **անուղղակի** ընտրությամբ: Այդպիսի ընտրության կարգն առավել մանրամասնվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (25.05.2016թ. խմբագրությամբ) 43, 44 և 46րդ հոդվածներում, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (16.12.2016թ. խմբագրությամբ) 56, 73 և 76րդ հոդվածներում: Այդ իրավակարգավորումներում օրենսդիրը նախատեսել է նաև համայնքի ղեկավարին **«օրենքի ուժով ընտրված համարելու»** կառուցակարգ, որի սահմանադրականությամբ

յունը դիմող կողմը սույն գործի շրջանակներում չի վիճարկել:

Ելնելով վերոհիշյալ համայնքներում տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից՝ պայմանավորված սոցիալտնտեսական գործոններով, Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում այդ համայնքներում ավագանու կողմից համայնքի ղեկավարի **անուղղակի ընտրակարգը**, ելնելով նաև ավագանու՝ որպես ներկայացուցչական մարմնի, և համայնքի ղեկավարի՝ որպես ավագանուն հաշվետու գործադիր մարմին հանդիսանալու փաստով պայմանավորված, իրավական կարգավիճակի առանձնահատկություններից (ՀՀ Սահմ. 182րդ հոդվածի 4րդ մաս):

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով համայնքի ղեկավարի ընտրության անուղղակի կարգի նախատեսմամբ չի կարող փոխվել ՀՀ Սահմանադրության 181րդ հոդվածի 1ին մասի սահմանադրաիրավական բովանդակությունը: Մասնավորապես, ընտրության անուղղակի կարգի սահմանումը ենթադրում է համայնքի ղեկավարի ընտրություն (գործընթաց) ոչ թե համայնքի ընտրողների, այլ ընտրված (մանդատներ ստացած) ավագանու անդամների կողմից անմիջաբար, որի իրավական կարգն ու պայմանները ենթակա են օրենքով հստակեցման:

ՀՀ ընտրական օրենսգրքով (5րդ հոդված) իրացվել է համայնքի ղեկավարի ընտրության կարգի վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 181րդ հոդվածի 1ին մասի պատվիրանը: ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանադրական օրենք է (ՀՀ Սահմ. 103րդ հոդվածի 2րդ մաս), իսկ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին (ՀՀ Սահմ. 5րդ հոդվածի 2րդ մաս): Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի պարտականությունն է ողջամիտ ժամկետում, երաշխավորելով ՀՀ ընտրական օրենսգրքի անցումային և եզրափակիչ դրույթներով նախատեսված ընտրական գործընթացների ամբողջականությունն ու անխախտելիությունը, ապահովել համայնքի ղեկավարի անուղղակի ընտրակարգի՝ ՀՀ Սահմանադրությունից բխող՝ ՀՀ ընտրական օրենսգրքում իրացված սկզբունքներին վերոհիշյալ օրենքների նորմատիվ դրույթների համապատասխանությունը՝ հաշվի առնելով նաև սույն որոշմամբ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

12. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

ա/ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգի որոշումը ՀՀ Սահմանադրությունը բացառապես վերապահել է օրենսդրի հայեցողությանը: Հետևաբար, Սահմանադրական դատարանը չի բացառում, որ օրենսդիրն իր քաղաքական կամքի դրսևորման արդյունքում կարող է նաև նախապատվությունը տալ այլ ընտրակարգի,

բ/ օրենսդրին է վերապահված նաև ընտրական հարաբերություններում որոշում կայացնելու համար ընտրակարգի բնույթից ելնելով ձայների տարբեր հարաբերակցություն սահմանելու հայեցողությունը, որը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 181րդ հոդվածի 2րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից: Քննության առարկա գործով ձայների «բացարձակ մեծամասնություն» եզրույթը սույն որոշման 9-րդ կետում Սահմանադրական դատարանի կողմից ներկայացված բովանդակությանը համապատասխան ընկալվելու ու կիրառվելու դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել,

գ/ ցանկացած ընտրակարգին նախապատվություն տալու հայեցողական ազատության պարագայում պետք է երաշխավորվի համաչափությունն ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև, ինչի բացակայության վերաբերյալ դիմողները հիմնավոր փաստարկներ չեն ներկայացրել,

դ/ Սահմանադրությունն օրենսդրին է վերապահել նաև ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների տարբեր ընթացակարգեր սահմանելու հայեցողությունը և դրանցից մեկի կամ մյուսի ենթադրյալ «առավելությունների» կամ «թերությունների» վկայակոչումը կամ դրանց բացարձակ համադրելիության վերաբերյալ փաստարկները չեն կարող դիտարկվել որպես ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերի սահմանադրականությանը վերաբերելի խնդիր:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 141րդ հոդվածի 5րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 մարտի 2017 թվականի
ՍԴՈ-1356



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ՆԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 339-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի ներկայացուցիչ Ս. Վարդանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշե-

լու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի՝ 2016 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ** .

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենսգրքի՝ «Հայցային վաղեմության ժամկետը կասեցնելը» վերտառությամբ 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է.

«1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե՝

...

6) ներկայացվել է վճարման կարգադրությունը՝ այն դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթն օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասում լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» 07.07.2005 թվականին ընդունված ՀՕ-155-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2012 թվականի նոյեմբերին «Հովնանյան Բնտերնեյշնլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) դիմողներից 2.896.850 ՀՀ դրամ գումար գանձելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջի վերաբերյալ դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ դատարան):

23.11.2012 թվականին դատարանի որոշմամբ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը մերժվել է:

05.03.2013 թվականին Կազմակերպությունը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ դիմողների՝ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ: Դիմողները ներկայացրել են հակընդդեմ հայց և հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն:

11.10.2013 թվականին դատարանի վճռով Կազմակերպության հիշյալ

հայցը և դիմողների հակընդդեմ հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ անցել են հայցային վաղեմության ժամկետները:

11.11.2013 թվականին Կազմակերպությունը դատարանի վճռի դեմ՝ սկզբնական հայցի մերժման մասով ներկայացրել է վերաքննիչ բողոք:

27.02.2014 թվականին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է, վճիռը՝ սկզբնական հայցի մերժմանը վերաբերող մասով, բեկանվել է, գործն ուղարկվել է դատարան նոր քննության:

Վերաքննիչ դատարանի 27.02.2014 թվականի որոշման դեմ դիմողները բերել են վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 16.04.2014 թվականի որոշմամբ վերադարձվել է:

07.11.2014 թվականին դատարանի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ. «... Նույն օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե՝ ներկայացվել է վճարման կարգադրությունը՝ այն դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք ծառայած հանգամանքը դադարելու օրվանից շարունակում է ժամկետի ընթացքը: Ժամկետի մնացած մասը երկարաձգվում է մինչև վեց ամիս, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ մինչև վաղեմության ժամկետը:

...

Վերոգրյալի հաշվառմամբ, դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից հայցային վաղեմության ժամկետը բաց չի թողնվել, քանի որ հայցվորը դատարան է մուտքագրել վճարման կարգադրություն արձակելու դիմում: Դիմումը մերժելուց հետո, սահմանված ժամկետում հայցադիմումով դիմել է դատարան»:

08.12.2014 թվականին դիմողները դատարանի 07.11.2014 թվականի վճռի դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոք:

03.02.2015 թվականին Վերաքննիչ դատարանի որոշմամբ հիշյալ վերաքննիչ բողոքը բավարարվել է. դատարանի 07.11.2014 թվականի վճիռը մասամբ՝ հայցը բավարարելու մասով բեկանվել է և փոփոխվել. հայցը մերժվել է, իսկ վճիռը մնացած մասով թողնվել է ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ. «...Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վճարման կարգադրություն արձակելու պահանջով դատարան դիմում ներկայացնելն ինքնին բավարար չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցնելու համար, քանզի քննարկվող

դրույթը նախատեսում է նաև իրավական հետևանք, մասնավորապես՝ պատասխանողի կողմից դատարանին գրավոր առարկություն ներկայացնելը:

Այսինքն՝ սույն նորմի իմաստով հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման ժամանակահատվածն ավարտվում է այն ժամանակ երբ Դատարան ներկայացված դիմումի վերաբերյալ արձակում է վճարման կարգադրություն և պատասխանողի կողմից դատարանին գրավոր առարկություն ներկայացնելու պահին:

...

Այլ կերպ ասած հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցումը վերոնշյալ նորմով նախատեսված հիմքով, հնարավոր է միայն դատարանի կողմից վճարման կարգադրություն արձակելու և, համապատասխանաբար պատասխանողի կողմից դատարանին գրավոր առարկություն ներկայացնելու դեպքում»:

Վերաքննիչ դատարանի 03.02.2015 թվականի որոշման դեմ Կազմակերպությունը ներկայացրել է վճարեկ բողոք, որը Վճարեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշմամբ բավարարվել է մասնակիորեն. Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան նոր քննության՝ հետևյալ պատճառաբանությամբ. «... անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով նախատեսված կարգավորմանը, Վճարեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ վերջինիս բովանդակության վերլուծությունից միանշանակորեն ակնհայտ է դառնում, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե համապատասխան պահանջի վերաբերյալ ներկայացվել է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Ըստ այդմ, կասեցման ժամանակահատվածն իր մեջ ընդգրկում է վճարման կարգադրությունը դատարան հանձնելու պահից (կասեցման ժամանակահատվածի մեկնարկի պահ) մինչև դրա կապակցությամբ առարկություն ներկայացնելու պահն ընկած ժամանակահատվածը (կասեցման ժամանակահատվածի հնարավոր առավելագույն վերջնաժամկետ): Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար արդեն իսկ բավարար հիմք կարող է հանդիսանալ միայն վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ներկայացումը դատարան:

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ, Վճարեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից արված՝ «դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը» ձևակերպումը վերաբերում է հայցային վաղեմության ժամկետի կասեցման ժամանակահատվածին՝ դրա հոսքը սկսված և ավարտված համարելու պահերին, այլ ոչ թե պայմանավորում է բուն կասեցման հիմքի առկայությունը: ... Ինչ վերաբերում

է այն դեպքերին, երբ դիմումի քննությունն այլ ընթացք է ստանում և առարկության ներկայացման պահն օբյեկտիվորեն վրա չի հասնում, ապա հայցային վաղեմության ժամկետի կասեցումն ուժի մեջ է լինում մինչև դատարանի կողմից որոշակի գործողությունների ձեռնարկումը, մասնավորապես՝ վճարման կարգադրության արձակումը, վճարման կարգադրություն արձակելու դիմումի՝ ամբողջությամբ կամ մասնակի մերժումը:

...

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարան վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ներկայացման փաստն ինքնին արդեն իսկ բավարար և անհրաժեշտ հիմք է հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար, իսկ պատասխանողի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու փաստը պայմանավորում է կասեցման ժամանակահատվածի ավարտը, ընդ որում՝ այն դեպքում, երբ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը մերժվել է դատարանի կողմից, կասեցման ժամանակահատվածն ավարտվում է մերժման մասին համապատասխան որոշման կայացումով: Այլ կերպ ասած, առարկություն ներկայացնելը կամ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի մերժումը, ըստ էության, հանդիսանում են կասեցման ժամանակահատվածի տևողության վերջնաժամկետը որոշելու հիմքեր»:

20.05.2016 թվականին Վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, և դատարանի՝ 07.11.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 20.05.2016 թվականի որոշման դեմ դիմողները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունումը մերժվել է Վճռաբեկ դատարանի 17.08.2016 թվականի որոշմամբ:

3. Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին:

Վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին ենթադրյալ հակասությունը հիմնավորելու համար վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթի ձևակերպումը բավարար չափով հստակ և որոշակի չէ, երկիմաստ է և իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Մասնավորապես, ըստ դիմողների, պարզ չէ, թե հայցային վաղեմության ժամկետը կասեցվում է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելիս, թե դրա դեմ առարկություն ներկայացնելիս:

Որպես իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթի տարա-

բնույթ մեկնաբանությունների օրինակներ՝ դիմողները ներկայացնում են իրենց գործով Վերաքննիչ դատարանի 03.02.2015 թվականի որոշումը, որի շրջանակներում Վերաքննիչ դատարանը վճարման կարգադրություն ներկայացնելը համարում է ոչ բավարար «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցնելու համար, քանզի քննարկվող դրույթը նախատեսում է նաև իրավական հետևանք, մասնավորապես՝ պատասխանողի կողմից դատարանին գրավոր առարկություն ներկայացնելը», և նույն գործով Վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը, համաձայն որի՝ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը դատարան ներկայացնելու փաստն ինքնին արդեն իսկ բավարար և անհրաժեշտ հիմք է հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար, իսկ պատասխանողի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու փաստը պայմանավորում է կասեցման ժամանակահատվածի ավարտը:

Վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին ենթադրյալ հակասությունը հիմնավորելու համար վկայակոչելով դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները՝ դիմողները գտնում են, որ հայցային վաղեմության ժամկետի կասեցման հետ կապված հարաբերությունների ոչ հստակ կարգավորվածությունը գրկում է անձին իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության և իր գործի արդար դատաքննության իրավունքներից:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի կարգադրագրերի պահանջներին համապատասխանեցնելու գործնական, ռեալ հնարավորության և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը ներկայացնում է վիճարկվող դրույթի սեփական մեկնաբանությունը, ըստ որի՝ օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ձևակերպումից ակնհայտ է, որ վճարման կարգադրություն ներկայացնելու հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմքի դեպքում «այն դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը» ձևակերպումը ոչ թե վերոգրյալ հիմքի առկայության պայման է, այլ տվյալ հիմքի գործելու

դեպքում հայցային վաղեմության ժամկետի կասեցման ժամանակահատված: Պատասխանողի կարծիքով՝ առարկություն չներկայացնելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ վճարման կարգադրություն ներկայացնելու դեպքում խնդրո առարկա հիմքի չկիրառման համար, քանզի պարտատիրոջ կողմից վճարման կարգադրություն ներկայացվելու դեպքում պարտապանը պաշտոնապես տեղեկացվում է իր նկատմամբ դատական կարգով քաղաքացիաիրավական պահանջի մասին, և առարկություն ներկայացնելը կամ չներկայացնելն իր հայեցողության սահմաններում է:

Վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ՝ պատասխանողը գտնում է, որ գործնականում օրենքի որևէ դրույթի՝ միմյանց հակասող մեկնաբանությունների առկայության դեպքում, որպես կանոն, իրավական դրույթների տարբերումների նկատմամբ միասնական դիրքորոշումն ապահովվում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրական գործառույթի շրջանակներում:

Միաժամանակ, վկայակոչելով Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշման մեջ ամրագրված համապատասխան իրավական դիրքորոշումները, դրանց հիման վրա արձանագրելով, որ դիմողները, ձևականորեն բարձրացնելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ամենայն հավանականությամբ բարձրացնում են այդ դրույթի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի բողոքարկման ոչ ենթակա դատական ակտով իրենց նկատմամբ կիրառված դրույթի իրավաչափության հարց, պատասխանողը միջնորդում է կարճել գործի վարույթը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ էության դիմողները բարձրացնում են վիճարկվող դրույթի ենթադրյալ անորոշության և դրանով պայմանավորված՝ տվյալ դրույթի կիրառման հակասական պրակտիկայի խնդիր: Ընդ որում, վիճարկվող դրույթի ենթադրյալ անորոշությունը դիմողները ներկայացնում են ինչպես ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումների, այնպես էլ իրենց դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների երաշխավորման անհրաժեշտության համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների

կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վերոհիշյալ սահմանադրաիրավական դրույթից հետևում է, որ սահմանադիրը Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված իրավական որոշակիության սկզբունքը տարածում է հիմնական իրավունքներ և ազատություններ սահմանափակող օրենքների վրա: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները ենթակա չեն սահմանափակման՝ բացառությամբ հրապարակային քննության իրավունքի, որն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է սահմանափակվել:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթի ենթադրյալ անորոշությունը սույն գործի քննության շրջանակներում ենթակա է քննարկման ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավակարգավորման, ինչպես նաև իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում: Նման մոտեցումը պայմանավորված է Սահմանադրական դատարանի, մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ- 1270 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումներով, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը հարկ է քննարկել ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված իրավակարգավորման համատեքստում՝ անդրադառնալով վիճարկվող դրույթի շրջանակներում դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու սահմանադրաիրավական պահանջի կատարման հարցին:

6. Հաշվի առնելով դիմողների դիրքորոշումները՝ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևորում է հետևյալ հարցադրումները.

6.1. արդյո՞ք վիճարկվող դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմա-

նադրության 1-ին հոդվածից բխող իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով բավարար չափով որոշակի է և հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին,

6.2. արդյոք ք իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում առկա են վիճարկվող դրույթի տարաբնույթ մեկնաբանություններ,

6.3. արդյոք ք վիճարկվող դրույթի իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում դրան տրված մեկնաբանությամբ, բովանդակությունը համահունչ է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածին:

Վերոնշյալ 6.1. կետում ամրագրված հարցադրման կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթը բովանդակում է հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմքերից մեկը՝ վճարման կարգադրություն ներկայացնելու հիմքը, և այդ հիմքով հայցային վաղեմության ժամկետի կասեցման ժամանակահատվածը՝ կասեցման սկիզբը և ավարտը:

Վերոհիշյալ համատեքստում հատկանշական է վիճարկվող դրույթում «ներկայացվել է վճարման կարգադրություն» արտահայտությունը, քանի որ, ի տարբերություն վիճարկվող դրույթի, օրենսգրքի այլ կարգավորումների շրջանակներում օրենսդիրը կիրառում է «ներկայացնել վճարման կարգադրություն արձակելու դիմում» արտահայտությունը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթի շրջանակներում հիշյալ արտահայտությանը հաջորդող «այն դատարան հանձնելու պահից» արտահայտությունից, ինչպես նաև վճարման կարգադրություն արձակելու քաղաքացիադատավարական ինստիտուտի ընդհանուր տրամաբանությունից հետևում է, որ օրենսդիրը որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման հիմք դիտարկում է անձի կողմից դատարան վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմում ներկայացնելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի՝ իրավական որոշակիության սահմանադրական պահանջին համապատասխանելու հարցին, օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը որպես հայցային վաղեմության ընթացքի կասեցման սկիզբ դիտարկում է կասեցման հիմք հանդիսացող հանգամանքի ի հայտ գալը: Այսպես, օրինակ, օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված հիմքով կասեցման ժամանակահատվածն սկսվում է հայցի ներկայացմանն արգելք հանդիսացող արտակարգ և տվյալ պայմաններում անկանխատեսելի հանգամանքի ի հայտ գալու պահից, նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետով ամրագրված հիմքով կասեցման ժամանակահատվածն այն պահից, երբ հայցվորը կամ պատասխանողը կգտնվի ռազմական

դրության փոխադրված զինված ուժերի կազմում, նույն հոդվածի նույն մասի 3-րդ կետով ամրագրված հիմքով կասեցման ժամանակահատվածը՝ պարտավորությունների կատարման հետաձգում սահմանող իրավական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից և այլն:

Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավակարգավորմամբ օրենսդիրը սահմանում է, որ վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք ծառայած հանգամանքը դադարելու օրվանից շարունակվում է ժամկետի ընթացքը, ինչից հետևում է, որ օրենսդիրը որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման ժամանակահատվածի ավարտ դիտարկում է վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք ծառայած հանգամանքի դադարելու օրը:

Սակայն օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորման վերլուծությունը վկայում է այն մասին, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման հիմքերի շրջանակներում վճարման կարգադրություն արձակելու դիմում ներկայացնելու և հաշտարարության մասին համաձայնության հիման վրա հաշտարարության գործընթացն սկսվելու հիմքերի համար օրենսդիրը սահմանել է կասեցման հատուկ ժամանակահատված: Այսպես, հիշյալ դրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ վճարման կարգադրություն ներկայացնելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է այն դատարանի հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը, իսկ հաշտարարության մասին համաձայնության հիման վրա հաշտարարության գործընթաց սկսվելու դեպքում՝ հաշտարարության գործընթացն սկսվելու պահից մինչև հաշտարարության ավարտը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վիճարկվող դրույթը բավարար չափով որոշակի է և հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին:

Վերոնշյալ 6.2. կետում ամրագրված հարցադրման կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողները որպես վիճարկվող դրույթի հակասական և իրարամերժ իրավակիրառ պրակտիկայի օրինակ ներկայացնում են վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից նույն գործով վիճարկվող դրույթին տրված տարատեսակ մեկնաբանությունները:

Սահմանադրական դատարանը դիմողների հիշյալ դիրքորոշումը հիմնավոր չի համարում այն պատճառաբանությամբ, որ Վճռաբեկ դատարանի և Վերաքննիչ դատարանի՝ նույն քաղաքացիական գործի շրջանակներում վիճարկվող դրույթին տրված տարաբնույթ մեկնաբանությունները չեն կարող վկայել այն մասին, որ առկա է այդ դրույթի կիրառ-

ման հակասական պրակտիկա: Նման դիրքորոշման համար հիմք է հանդիսանում այն, որ Վճռաբեկ դատարանը, ելնելով օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու իր սահմանադրական գործառնությունից, վերացրել է Վերաքննիչ դատարանի կողմից նույն քաղաքացիական գործով վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը այդ դրույթին հաղորդելով միասնական իրավական բովանդակություն և ապահովելով այդ դրույթի միասնական իրավակիրառ պրակտիկան:

Վերոնշյալ 6.3. կետում ամրագրված հարցադրման կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող քաղաքացիական գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող դրույթին տրված իրավական բովանդակությունը հանգում է հետևյալին.

- հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե համապատասխան պահանջի վերաբերյալ ներկայացվել է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում,

- կասեցման ժամանակահատվածն ընդգրկում է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը դատարան հանձնելու պահից (կասեցման ժամանակահատվածի մեկնարկի պահ) մինչև դրա կապակցությամբ առարկություն ներկայացնելու պահն ընկած ժամանակահատվածը (կասեցման ժամանակահատվածի հնարավոր առավելագույն վերջնաժամկետ),

- հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար արդեն իսկ բավարար հիմք կարող է հանդիսանալ միայն վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ներկայացումը դատարան,

- վիճարկվող դրույթում ճշգրտարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը՝ ձևակերպումը վերաբերում է հայցային վաղեմության ժամկետի կասեցման ժամանակահատվածին՝ դրա հոսքը սկսված և ավարտված համարելու պահերին, այլ ոչ թե պայմանավորում է բուն կասեցման հիմքի առկայությունը,

- այն դեպքերում, երբ դիմումի քննությունն այլ ընթացք է ստանում և առարկության ներկայացման պահն օրյեկտիվորեն վրա չի հասնում, ապա հայցային վաղեմության ժամկետի կասեցումն ուժի մեջ է լինում մինչև դատարանի կողմից որոշակի գործողությունների ձեռնարկումը, մասնավորապես՝ վճարման կարգադրության արձակումը, վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ամբողջությամբ կամ մասնակի մերժումը:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների համար անբարենպաստ իրավական հետևանքներ առաջացրել է Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող դրույթին տրված միայն այն մեկնաբանությունը,

համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դիմումի քննությունն այլ ընթացք է ստանում և առարկության ներկայացման պահին օբյեկտիվորեն վրա չի հասնում, ապա հայցային վաղեմության ժամկետի կասեցումն ուժի մեջ է լինում մինչև դատարանի կողմից որոշակի գործողությունների ձեռնարկումը, մասնավորապես՝ վճարման կարգադրության արձակումը, վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ամբողջությամբ կամ մասնակի մերժումը: Վճռաբեկ դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումը վերաբերելի է հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման այն դեպքերին, երբ կասեցման ժամանակահատվածի ավարտը՝ պատասխանողի կողմից առարկություն ներկայացնելու պահը, օբյեկտիվորեն վրա չի հասել:

Վերը նշված իրողության կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեպետ օրենսդիրը, հայցային վաղեմության ժամկետի կասեցման ավարտ դիտարկելով առարկություն ներկայացնելու պահը, չի սահմանել առարկություն ներկայացնելու պահը վրա չհասնելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի կասեցման ժամանակահատվածի ավարտի վերաբերյալ որևէ իրավակարգավորում, այդուհանդերձ, նշված իրավակարգավորման բացակայությունը չի կարող վկայել այն մասին, որ օրենսդիրն առարկություն չներկայացնելը դիտարկում է որպես հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմքի բացակայություն, այսինքն՝ առարկություն ներկայացնելու պահին օբյեկտիվորեն վրա չհասնելու հանգամանքը չի վկայում այն մասին, որ վճարման կարգադրություն արձակելու դիմումը դատարան ներկայացնելը հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմք չէ:

Օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ հայցային վաղեմության ժամկետը և դրա կասեցման վերաբերյալ իրավանորմերը հիմնված են պարտատիրոջ և պարտապանի շահերի հավասարակշռման և իրենց դատական պաշտպանության իրավունքի իրացման համար հավասար հնարավորություններ նախատեսելու անհրաժեշտության վրա: Հետևաբար, այն տեսակետը, որ առարկություն ներկայացնելու պահի օբյեկտիվորեն վրա չհասնելն անհնարին է դարձնում վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու հիմքով հայցային վաղեմության ժամկետի կասեցումը, հիմնավոր չէ, քանի որ տվյալ դեպքում հաշվի չեն առնվի պարտատիրոջ կամ հայցվորի շահերը, քանի որ այդ պարագայում չի բացառվում պատասխանողի կողմից առարկություն ներկայացնելու դիտավորությունն այն հաշվով, որ հայցային վաղեմության ժամկետը չկասեցվի, և հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով հայցը մերժվի:

Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Անցումը հայցային վարույթի» վերտառությամբ 204.7-րդ հոդվածի համա-

ձայն՝ սահմանված ժամկետում վճարման կարգադրության վերաբերյալ դատարանում առարկություն ստացվելու դեպքում կարգադրությունը վերանում է, և այդ դեպքում պահանջը կարող է ներկայացվել ընդհանուր հայցային վարույթի կարգով: Հետևաբար, հիշյալ դրույթից, ինչպես նաև վճարման կարգադրության վերաբերյալ քաղաքացիական և քաղաքացիադատավարական այլ կարգավորումներից բխում է, որ օրենսդիրը վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելը դիտարկում է անձի խախտված իրավունքի հայցով պաշտպանությանն այլընտրանքային միջոց: Նշվածից բխում է, որ պարտատիրոջ կողմից դատարան համապատասխան դիմում ներկայացնելը վկայում է այն մասին, որ նա ձեռնարկել է իր իրավունքի պաշտպանությանն ուղղված որոշակի միջոցներ, և այդ միջոցները ձեռնարկելու ժամանակահատվածի մասով պարտատիրոջ իրավունքի պաշտպանության համար նախատեսված հայցային վաղեմության ժամկետը ենթակա է կասեցման՝ անկախ այն հանգամանքից արդյոք մյուս կողմը ներկայացրել է առարկություն, թե ոչ:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի դիտարկվող մեկնաբանությամբ վերացվում է այն ենթադրյալ իրավական անորոշությունը, որը պայմանավորված է առարկություն ներկայացնելու պահն օբյեկտիվորեն վրա չհասնելու դեպքում վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու հիմքով հիշյալ ժամկետի ընթացքի կասեցման վերաբերյալ իրավակարգավորումների բացակայությամբ, և ուղղված է քննության առարկա հարաբերությունների շրջանակներում պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռմանն ու իրենց դատական պաշտպանության իրավունքի իրացման համար հավասար հնարավորությունների ապահովմանը, ինչպես նաև վիճարկվող դրույթի շրջանակներում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու սահմանադրաիրավական պահանջի կատարմանը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ առարկություն ներկայացնելու պահը վրա չհասնելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի կասեցման ժամանակահատվածի ավարտի վերաբերյալ համապատասխան իրավակարգավորման բացակայությունը չի կարող վկայել այն մասին, որ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմում ներկայացվելով հայցային վաղեմության ժամկետը կասեցվում է ընդմիջտ կամ անորոշ ժամկետով: Քաղաքացիական և քաղաքացիադատավարական կարգավորումներից բխում է, որ ցանկացած կասեցված դատավարական ժամկետ շարունակվում է կասեցման

հիմքը վերանալուց հետո: Տվյալ դեպքում, թեպետ օրենսդիրը որպես կասեցման հիմքը վերացնող հանգամանք է դիտարկել առարկություն ներկայացնելը, այդուհանդերձ, նման իրավակարգավորումը չի բացառում կասեցման հիմքը վերացնող այլ հանգամանքների հնարավորությունը: Տվյալ դեպքում որպես նման հանգամանք է հանդես գալիս վճարման կարգադրություն արձակելու գործով վեճի ըստ էության լուծումը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս տեսանկյունից ևս Վճռաբեկ դատարանի դիտարկվող մեկնաբանությամբ վերացվում է այն ենթադրյալ իրավական անորոշությունը, որը պայմանավորված է առարկություն ներկայացնելու պահին օբյեկտիվորեն վրա չհասնելու դեպքում վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու հիմքով հիշյալ ժամկետի ընթացքի կասեցման վերաբերյալ իրավակարգավորումների բացակայությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 մարտի 2017 թվականի
ՍԴՈ-1357



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները և իրավակիրառական պրակտիկան, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «**Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները**» վերտառությամբ 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է.

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

...

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար...»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ավետիք Բուդաղյանի մահվան և երկու այլ անձանց ծանր մարմնական վնասվածքներ ստանալու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 32102413 քրեական գործը: Այդ գործի շրջանակներում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել Ս. Խաչատրյանին և Զ. Նիկողոսյանին: Հետագայում քննիչը վերջինների գործողությունների օրինաչափության և արարքներում հանցակազմի բացակայության հիմքով նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումներ է կայացրել, որոնց նախորդել է մահացած Ավետիք Բուդաղյանի նկատմամբ նրա մահվան հիմքով քրեա-

կան հետապնդում չիրականացնելու վերաբերյալ քննիչի 2013թ. սեպտեմբերի 6-ի որոշումը:

Մահացածի իրավահաջորդը և նրա ներկայացուցիչն անձի մահվան հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2013թ. սեպտեմբերի 6-ի որոշումը բողոքարկել են վերադաս դատախազին: Այդ բողոքները չեն բավարարվել:

2013թ. հոկտեմբերի 10-ին՝ փաստաբանը, իսկ 2013թ. նոյեմբերի 18-ին նաև մահացածի իրավահաջորդը նշված որոշման դեմ բողոքներ են ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2015թ. օգոստոսի 6-ի որոշմամբ այդ գործով փաստաբանի ներկայացրած այլ բողոքների հետ մեկտեղ մերժել է նաև նրա և մահացածի իրավահաջորդի բողոքները՝ անձի մահվան հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշման դեմ:

2015թ. օգոստոսի 26-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչն առաջին ատյանի դատարանի նշված որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ընդունել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, նկատի ունենալով, որ իր վարույթում գտնվող գործով կիրառման ենթակա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 2016թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ կասեցրել է թիվ ԵԱՔԴ/0047/11/13 քրեական գործի վարույթը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան նշված նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (դիմողը) գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 23-րդ, 31-րդ, 61-րդ, 66-րդ և 75-րդ հոդվածներին այնքանով, որքանով թույլատրում է մեղադրյալի (կասկածյալի) մահվան հիմքով քրեական գործի վարույթը կարճել կամ քրեական հետապնդումը դադարեցնել (չիրականացնել) առանց նրա մերձավոր ազգականների համաձայնության:

Դիմողը պատճառաբանում է, որ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված հիմքերը ոչ արդարացնող բնույթի են, որոնց դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելիս մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում համարվում է ապացուցված և փաստացի, առանց օրինական ուժի մեջ մտած դատավճռի անձը մեղավոր է ճանաչվում հանցագործություն կատարելու մեջ:

Դիմողի պնդմամբ՝ անձի մահվան հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու (չիրականացնելու) արդյունքում անձը հասկանալի պատճառներով զրկված է հետապնդման դադարեցմանն իր անհամաձայնությունը հայտնելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու պահանջ ներկայացնելու միջոցով այնպիսի անձնական արժեքների պաշտպանության հնարավորությունից, ինչպիսիք են արժանապատվությունը, պատիվը, բարի համբավը, անմեղության կանխավարկածը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ դրանով մահացածի իրավունքների վերականգնման անհրաժեշտության դեպքում գործի վարույթը շարունակելու հնարավորություն է նախատեսված, սակայն **որոշակիացված չէ**, թե ով, ինչպես և որ փուլում պետք է գնահատի նման անհրաժեշտության առկայությունը: Հետևաբար, այն չի համապատասխանում օրենքին առաջադրվող որոշակիության և կանխատեսելիության չափանիշներին:

Դիմողի համոզմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում այնպիսի ուղղակի կարգավորում, որի պայմաններում մահացածի մերձավոր ազգականների կամ այլ շահագրգիռ անձանց կողմից մահացածի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման դեմ առարկելը խոչընդոտ կհանդիսանա այդպիսի որոշում կայացնելու համար: Մինչդեռ ենթադրյալ հանցանք կատարած անձի մահվան դեպքում նրա մոտակա հերթի ժառանգները նրա իրավունքների պաշտպանության նպատակով պետք է իրավունք ունենան պահանջել վարույթի շարունակություն, որը մահացածի, ինչպես նաև նրա ընտանիքի բարի համբավի պաշտպանության եղանակ է: Բացի դրանից, անձի արդարացման դեպքում՝ նրա ժառանգները ձեռք են բերում դրանից բխող մի շարք քաղաքացիական բնույթի իրավունքներ:

Դիմողը գտնում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու (դադարեցնելու) մասին որոշման դեմ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով մահացածի իրավահաջորդի ներկայացրած բողոքի քննությունը չի կարող համարժեք և արդյունավետ միջոց համարվել մահացածի և նրա իրավահաջորդի արժանապատվության, պատվի, բարի համբավի, ինչպես նաև վերջինի գույքային իրավունքների պաշտպանության համար, որովհետև մինչդեռ ստանդարտական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարանն իրավասու չէ քննել անձի մեղավորության կամ անմեղության հարցը և այդ առումով ստուգել քննարկվող որոշման օրինականությունը:

Դիմողի կարծիքով՝ մահացածի և նրա իրավահաջորդների՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արժանապատվության, պատվի և

բարի համբավի, դրանց հետ փոխկապակցված նաև մահացածի անմեղության կանխավարկածի իրավունքների համարժեք պաշտպանության՝ պետության պարտականությունը կարող է համարվել իրականացված միայն այն դեպքում, երբ մահացածի նկատմամբ վարույթը շարունակելու հարցում նախատեսվի նրա **իրավահաջորդի դիրքորոշման կանխորոշիչ նշանակությունը**:

4. Պատասխանողը գտնում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթը նախատեսում է ընդհանուր կանոն, այն է՝ անձի մահվան դեպքում քրեական գործի չհարուցում, քրեական հետապնդման չիրականացում, իսկ քրեական գործ հարուցված լինելու դեպքում վարույթի կարճում երկու բացառություններով՝ երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար:

Պատասխանողը, միջազգային պրակտիկայի ուսումնասիրման արդյունքում, առանձնացնում է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի մահվան դեպքում քրեական գործի ընթացքի վերաբերյալ երեք լուծում և, համապատասխանաբար, դրանք կիրառող պետությունների երեք խումբ՝ ա) երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի մահը խոչընդոտ չէ քրեական գործի վարույթը շարունակելու համար, բ) երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի մահվան դեպքում քրեական գործով վարույթը դադարեցվում է, գ) հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի մահվան դեպքում քրեական գործով վարույթը դադարեցվում է՝ բացառությամբ, երբ առկա է մահացած անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն:

Ըստ պատասխանողի՝ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է երրորդ խմբի պետությունների իրավակարգավորումներին համարժեք այնպիսի իրավակարգավորում, որը կոչված է ապահովելու մահացածի ցանկացած իրավունքի, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի, պատվի, բարի համբավի հետմահու պաշտպանությունը:

Իրավական որոշակիության սկզբունքի առնչությամբ պատասխանողը նշել է, որ՝ «երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար» արտահայտությունը գնահատողական կատեգորիա է, որի մեկնաբանությունը և կիրառությունը գործնական հարց է, իսկ «գնահատման փուլ պետք է համարվի անձի մահվան հիմքով քրեական գործի վարույթի կարճման ժամանակահատվածը»: Պատասխանողը միաժամանակ եզրակացնում է, որ՝ «Ակնհայտ է, որ մերձավոր հարազատների կողմից մահացած անձի արդարացման, այն է՝ անձի պատվի ու բարի համբավի պաշտպանության նկատառումով, քրեական գործի վա-

րույթը շարունակելու պահանջը պետք է դատարանների կողմից գնահատվի որպես մահացածի իրավունքների վերականգնման անհրաժեշտություն»:

Պատասխանողը պնդում է, որ օրենսդիրը, չսահմանելով հանցագործության կատարման մեջ մեղադրվող մահացած անձի դատավարական իրավունքների իրավահաջորդություն, ինչպես տուժողների դեպքում է, սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթում այնպիսի ձևակերպում է ընտրել, որ հնարավորություն է տալիս քրեական գործի վարույթը շարունակել անգամ այն դեպքում, երբ մահացած անձի որևէ մերձավոր ազգական չի դիմում քրեական գործի վարույթը շարունակելու պահանջով, բայց առկա է մահացած անձի իրավունքների վերականգնման անհրաժեշտություն, ինչը հանցագործության մեջ մեղադրվող անձանց մահվան դեպքում վերջիններիս իրավունքների պաշտպանության առավել բարձր մակարդակ է:

Պատասխանողը գտնում է նաև, որ դիմողի կողմից բարձրացված հարցերն արդեն իսկ իրենց պատասխաններն ստացել են ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության սահմանադրաիրավական գործառույթի իրացման շրջանակներում, երբ վճռաբեկ դատարանն իր՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴ/0389/01/11 որոշմամբ գտել է, որ գործի վարույթը շարունակելու իրավական հիմքերը բացակայում են, որովհետև մահացածի իրավահաջորդը նրա իրավունքների վերականգնման նպատակով վարույթը շարունակելու պահանջ չի ներկայացրել:

Պատասխանողի համոզմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Քննության առարկա իրավադրույթի վերաբերյալ դիրքորոշումներ են ներկայացրել նաև ՀՀ կառավարությունը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը:

ՀՀ կառավարությունը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթում տեղ գտած «մահացածի իրավունքների վերականգնման համար» արտահայտությունն այն լիարժեք նյութաիրավական հիմքն է, որն անհրաժեշտ է կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների վերականգնման, այդ թվում՝ նրանց արժանապատվության և բարի համբավի պաշտպանության համար: Կառավարությունը միաժամանակ նշում է, որ օրենսգրքի կանոնակարգումներով որոշակիացված չէ, թե ով, ինչպես և որ փուլում պետք է գնահատի նման անհրաժեշտության առկայությունը, և եզրակացնում, որ «իրականում թերի է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, այլ բացակայում են այն կառուցակարգերը, որոնք միտված կլինեին վիճարկվող դրույթի ամբողջական և լիարժեք իրացման ապահովմանը»:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կարծում է, որ գործող դատավարական կարգավորումներն այնքանով, որքանով չեն ամրագրում քրեական գործով վարույթի շրջանակներում մահացածի և նրա իրավահաջորդների իրավունքների պաշտպանության արդյունավետ ընթացակարգեր, «չեն բավարարում արդար դատաքննության, անմեղության կանխավարկածի և իրավական որոշակիության սահմանադրական պահանջները»:

6. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ չնայած Վերաքննիչ դատարանը վիճարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետն ամբողջությամբ, այնուամենայնիվ, դատարանի որոշմամբ բարձրացված հարցը վերաբերում է վիճարկվող դրույթով նախատեսված երկու բացառություններից միայն առաջինին, այն է՝ «երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար...» արտահայտությանը: Հետևաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը՝ Սահմանադրական դատարանը գործը քննության է առնում բացառապես մահացած անձի (կասկածյալի կամ մեղադրյալի) մերձավոր հարազատների կամ այլ շահագրգիռ անձանց կողմից մահացածի իրավունքների վերականգնման հնարավորության օրենսդրական կարգավորման և իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում:

Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել անձի մահվան հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ ընդհանուր կանոնից նրա իրավունքների վերականգնման համար գործի վարույթը շարունակելու մասին բացառության **որոշակիությունը և լիարժեքությունը** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, անմեղության կանխավարկածի և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքների իրացման երաշխավորվածության տեսանկյունից:

7. ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 3-րդ և 23-րդ հոդվածներով սահմանվում է, որ մարդու արժանապատվությունն անօտարելի և անխախտելի է: ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում (ՄԴՈ-649, ՄԴՈ-834, ՄԴՈ-913, ՄԴՈ-997, ՄԴՈ-1121) անդրադարձել է «արժանապատվություն» եզրույթին և մասնավորապես նշել.

ա) «Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների

մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն»: (ՄԴՈ-649),

բ) «Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն»: (ՄԴՈ-913):

Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի համբավին և պատվին, գտել է, որ չնայած դիմողի առաջնային նպատակը եղել է օրենքի և հանրության առջև իր եղբոր արատավորված անվան մաքրումը, այն «... միաժամանակ թույլ է տվել դիմողին վերականգնել իր ընտանիքի պատիվն ու բարի համբավը» (Kurzac v. Poland, app. 31382/96, 25/05/2000) և որոշ հանգամանքներում անձի՝ ընտանիքի մահացած անդամի համբավը կարող է ազդել նրա անձնական կյանքի և ինքնության վրա, եթե համապատասխան անձի և ընտանիքի ընդհանուր համբավի միջև առկա է սերտ կապ («Chauvy and others v. France», app. no.64915/01, 29/09/2004, «Putistin v. Ukraine», app. no.16882/03, 21/02/2014, § 32):

Անձի արժանապատվության անխախտելիությունը, նրա պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը վերաբերում են ոչ միայն մարդկային կյանքի ողջ ժամանակահատվածին, այլ պետությունը պարտավոր է ստեղծել նաև մահացած անձի պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտ իրավական երաշխիքներ:

8. ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 66-րդ հոդվածով սահմանվում է, որ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած

դատավճռով: Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը համանման կարգավորմամբ սահմանված էր նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-710, ՄԴՈ-832, ՄԴՈ-871, ՄԴՈ-931, ՄԴՈ-1252, ՄԴՈ-1270) անդրադարձել է անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի լիարժեք իրացման երաշխավորվածության և ապահովման խնդիրներին և արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

ա) «... անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել»: (ՄԴՈ-871),

բ) «... անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է հանցագործության կատարման մեջ մեղադրվողին համարել անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում և միայն դատական ակտով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է նաև, որ անձի նկատմամբ կիրառվող դատավարական միջոցները պատժի տարբեր չպետք է պարունակեն, իսկ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը»: (ՄԴՈ-871),

գ) «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բարբերան, Մեսեգեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով (Barbera, Messegue and Jabardo v. Spain 10590/83, կետ 77) 1988թ. դեկտեմբերի 6-ի 10590/83 վճռում անմեղության կանխավարկածին հաղորդել է հետևյալ բովանդակությունը. «...6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այն պահանջում է, ի թիվս այլոց, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չպետք է ունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի»: (ՄԴՈ-871):

Անմեղության կանխավարկածն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածում, համաձայն որի՝

հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Անձը համարվում է անմեղ, եթե բացակայում են նրան քրեական պատասխանատվության ենթարկելու փաստական (հանցագործության դեպքը և տվյալ անձի մասնակցությունը հանցագործությանը) և իրավաբանական հիմքերը (արարքում հանցակազմի առկայությունը):

Նշված հոդվածով նաև ամրագրվում են դրույթներ, համաձայն որոնց՝ հանցանք գործելու մեջ **անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ**: Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքին, նշել է, որ այն կոչված է պաշտպանելու «քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուրին»՝ առանց օրենքով սահմանված կարգով նրա մեղքը հաստատելու նրան մեղավոր ճանաչող որոշումից: Սակայն դրանից չի հետևում, որ «դատարանի որոշումը, որով կասկածի տակ է դրվում «քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվող» անձի անմեղությունը, նրա մահից հետո չի կարող բողոքարկվել նրա այրու կողմից: Այրին կարող է ունենալ ինչպես օրինական նյութական շահագրգռվածություն որպես մահացածի ժառանգ, այնպես էլ իր և ընտանիքի բարոյական շահագրգռվածությունը՝ մահացած ամուսնու անմեղության ապացուցման և արդարացման հարցում» («Nolkenbockhoff v. Germany», application no. 10300/83, 25/08/1987, § 33):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի մահվան դեպքում քրեական պատասխանատվության հարց չի կարող առաջանալ, սակայն որոշ դեպքերում կարևոր է նրա մեղավորության կամ անմեղության հաստատումը:

Մահացած անձի՝ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում մեղավորության կամ անմեղության հաստատումը համապատասխանում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրինականության (հոդված 7), օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության (հոդված 8), անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու (հոդված 9) և գործի արդարացի քննու-

թյան (հոդված 17) սկզբունքներին:

Հետևաբար, թե մահացած անձի (կասկածյալի կամ մեղադրյալի) մեղավորությունն ապացուցված չէ օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը, գործող օրենսդրության համաձայն, անկախ նրանից՝ նա ողջ է, թե մահացած, համարվում է անմեղ:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է իրավապայման՝ անձի մահանալը, որի առկայության դեպքում քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման: Մինևույն ժամանակ, օրենսդիրն այդ ընդհանուր կանոնից որպես բացառություն առանձնացրել է երկու դեպք մահացածի իրավունքների վերականգնման կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործի վերսկսման անհրաժեշտություն, որոնց պարագայում, չնայած անձի մահանալուն, քրեական գործի վարույթը պետք է շարունակել: Քրեական գործի վարույթը մահացածի իրավունքների վերականգնման համար շարունակելու վերաբերյալ կարգավորումը հանդիսանում է օրենսդրական երաշխիք և կոչված է ապահովելու մարդու արժանապատվության անխախտելիությունը, անձի պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի և անմեղության կանխավարկածի սկզբունքի երաշխավորումը:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-871, ՄԴՈ-1213 որոշումներում անդրադարձել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներին առնչվող խնդիրներին՝ նշելով, մասնավորապես, որ՝ «... ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման, երբ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում ապացուցված է, և, ըստ այդմ, օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի տրամադրում...» (ՄԴՈ-871) և «...որ օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված են այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը, այնպես էլ առաջացնում են պարտավորություն՝ կարճել քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման: Մինևույն ժամանակ, այս ընդհանուր մոտեցումն ունի վերապահումներ, որոնք ամրագրված են օրենսգրքի 35-րդ հոդվածում...» (ՄԴՈ-1213):

Հիշյալ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հիմքերով անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված են ոչ արդարացնող հիմքերը: «Արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերում օրենսդիրն արգելում է որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կդնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մաս): «Ոչ արդարացնող» հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերի համար օրենսդիրը նման արգելք չի սահմանել:

Ոչ արդարացնող վաղեմության ժամկետն անցած լինելու կամ համաներման հիմքերով (6-րդ և 13-րդ կետեր) գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում և գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Մինչդեռ մահացած մեղադրյալն օբյեկտիվ պատճառներով գրկված է դրա դեմ առարկելու և իր արժանապատվությունը, պատիվն ու բարի համբավը պաշտպանելու հնարավորությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ: Այսպիսի սահմանում է նախատեսված նաև օրենսգրքի 6-րդ հոդվածի 42-րդ կետով: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման բնորոշումը համապատասխանում է **«ռեաբիլիտացված»** հասկացության բովանդակությանը և այն **հավասարապես կարող է վերաբերել ինչպես ողջ, այնպես էլ մահացած անձանց:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածն արդարացվածի համար սահմանում է մի շարք իրավունքներ: Մասնավորապես, արդարացվածն իրավունք ունի բողոքարկել իր նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը կամ արդարացման դատավճիռը, պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները, իրավունք ունի ստանալ աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա գրկվել է, գույքի բնագրավմամբ՝ այն պետության եկամուտ դարձնելու, քննություն իրականացնող մարմինների կողմից առգրավվելու, գույքի վրա կալանք դնելու հետևանքով պատ-

ճառված վնասը, վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները, դատավճիռն ի կատար ածելիս վճարված կամ առգրավված տուգանքը և այլն: Միննույն ժամանակ, արդարացվածի համար սահմանված մի շարք իրավունքներ, համաձայն նույն հոդվածի 11-րդ մասի, արդարացվածի մահվան դեպքում անցնում է նրա մոտակա հերթի ժառանգներին: Բացի դրանից, օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես արդարացվածի համար իրավական որոշակի հնարավորություններ է նախատեսել՝ կապված փորձաքննության կամ այլ օրինաչափ գործողությունների հետևանքով փչացած կամ կորած իրերի արժեքը պետական բյուջեի միջոցների հաշվին վերադարձվելու հետ: Իսկ օրենսգրքի 22-րդ հոդվածը կարգավորում է **դատական սխալներից տուժածների (այդ թվում՝ արդարացվածի) իրավունքների վերականգնումը**, այն է՝ արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի: Բացի դրանից, օրենսդրությամբ սահմանված են նաև **անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1087.2):

Ուստի մահացածի մերձավոր ազգականները պետք է հնարավորություն ունենան պահանջելու շարունակել քրեական գործի վարույթը նրա անմեղության հարցը լուծելու նպատակով, ինչի արդյունքում, եթե դատարանը կայացնի արդարացման դատավճիռ, մի կողմից կապահովվի մահացածի իրավունքների լիարժեք և արդյունավետ պաշտպանությունը, մյուս կողմից՝ որպես իրավահաջորդ հանդես եկող մերձավոր ազգականները ձեռք կբերեն մահացածի արդարացվածի կարգավիճակից բխող իրավունքներ:

10. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մարդու արժանապատվության անխախտելիության, անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի իրացման երաշխավորվածությանն ուղղված **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ** կետով սահմանված բացառություններից առաջինի, այն է՝ «... երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար» դրույթի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամբողջական չեն: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունը վկայում է, որ մահացածի իրավահաջորդության ինստիտուտ և դրանից բխող անհրաժեշտ իրավունքներ, պարտականություններ, ընթացակարգեր նախատեսված չեն: Բացակայում են նաև քրեական գործի վարույթը

կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու դեպքում այդ մասին մահացածի մերձավոր ազգականներին իրազեկելու, տեղեկացնելու իրավական անհրաժեշտ կառուցակարգերը:

ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է քրեադատավարական օրենսդրությունում այնպիսի իրավակարգավորումը, որը հնարավոր կդարձնի մահացած անձի (մեղադրյալի կամ կասկածյալի) ռեաբիլիտացիան քրեական դատավարության շրջանակներում, նրա իրավունքների և օրինական շահերի լիարժեք պաշտպանությունը՝ տրամադրելով մահացած անձի մերձավոր հարազատներին համապատասխան քրեադատավարական կարգավիճակ և դրանից բխող համապատասխան իրավունքներ, ինչը, սակայն, օրենսդրի խնդիրն է:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քննության առարկա հարցի առնչությամբ օրենսդրական մոտեցումները տարբեր են, սակայն, անկախ այդ հանգամանքից, ընդհանուրն այն է, որ օրենսդրական կանոնակարգումներն ուղղված են երաշխավորելու անձի սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ անփոփոխելի հոդվածի 3-րդ մասի համաձայն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն անմիջականորեն գործող իրավունքներ են: Իրավակիրառական պրակտիկան ու, առաջին հերթին, դատական պրակտիկան է կոչված Սահմանադրության ուժով երաշխավորել այդ իրավունքների անմիջական գործողությունը:

11. Անդրադառնալով այն հանգամանքին, որ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված չէ մահացած անձի մերձավորների իրավահաջորդի դատավարական կարգավիճակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նույնիսկ համապատասխան հստակ կարգավիճակի բացակայության պարագայում օրենսգրքի գործող իրավակարգավորումներն ապահովում են հիշյալ իրավունքների և դրանց պաշտպանության իրավաչափ հավասարակշռությունը և բավարար են մահացած անձի իրավունքների վերականգնման համար՝ ինչպես մերձավոր հարազատների, այնպես էլ իրավասու անձանց կամ իրավասու մարմինների նախաձեռնությամբ:

Վիճարկվող իրավադրույթի իրավակիրառ պրակտիկան նույնպես վկայում է այն մասին, որ մահացած անձանց իրավունքների վերականգնումը կարող է տեղի ունենալ ինչպես մահացածի մերձավոր հարազատների, այնպես էլ իրավասու մարմինների նախաձեռնությամբ:

Ի պատասխան ՀՀ սահմանադրական դատարանի 16.02.2017թ. թիվ ՄԴԱ-3 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը հայտնել է, որ

վիճարկվող իրավադրույթով նախատեսված հիմնական կանոնից բացառությունը գործնականում մի քանի դեպքով կիրառվել է և վարույթը շարունակվել է մահացած անձանց իրավունքների վերականգնման համար ինչպես մահացածի հարազատների, այնպես էլ իրավասու մարմինների նախաձեռնությամբ:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ստացվել է տեղեկանք (ՀՀ սահմանադրական դատարանի 16.02.2017թ. թիվ ՄԴԱ-4 գրությանն ի պատասխան) առ այն, որ վիճարկվող իրավադրույթի կիրառման վերաբերյալ ամփոփված պրակտիկա չկա: Միաժամանակ, հակիրճ ներկայացվել է ԵԱԴԴ/0039/01/12 գործը, որով դատարանը գտել է, որ մերձավոր ազգականի դիմումը հիմք է վիճարկվող դրույթի ուժով քրեական վարույթը շարունակելու համար, քանի որ նա իր դիմումով անհամաձայնություն է հայտնել մահացածի մեղավորության վերաբերյալ նախաքննության մարմնի եզրահանգման կապակցությամբ և պայքարում է մահացածի իրավունքների վերականգնման համար: Նույն գործով մահացածի մերձավոր ազգականն իրավահաջորդ չի ճանաչվել քրեական դատավարությունում նման մասնակցի կարգավիճակ սահմանված չլինելու պատճառով, բայց դրա փոխարեն դատարանը գտել է, որ նրա ներկայացուցիչը կարող է մասնակցել որպես պաշտպան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը նախատեսում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների՝ դատարան բողոքարկման ընթացակարգ: Նշված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները: Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Բողոքարկման նման ինստիտուտի առկայության պայմաններում դատարանները վիճարկվող դրույթը ողջամիտ կիրառելու դեպքում լիարժեքորեն կարող են ապահովել մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, անմեղության կանխավարկածի

սահմանադրական սկզբունքի անմիջական իրացումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված բացառության (գործի վարույթի շարունակումն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար) հաշվառմամբ և շրջանակներում:

Համապատասխան իրավասու մարմինները մերժելով (մերժման որոշում կայացնելով) քրեական գործի վարույթը շարունակելու՝ մահացածի մերձավոր հարազատների կամ շահագրգիռ այլ անձանց խնդրանքը, պետք է առաջնորդվեն այն մոտեցմամբ, որ մահացած անձը չի ճանաչվել որպես հանցագործություն կատարող անձ, նրա կարգավիճակն է՝ քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձ:

Ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, մարդու հիմնական իրավունքների անմիջական գործողության սահմանադրական պահանջից, ինչպես նաև վիճարկվող դրույթի ընդհանուր տրամաբանությունից, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը, իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ անձի մահվան հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում **անհրաժեշտ է այդ մասին իրազեկել նրա մերձավոր ազգականին, ապահովել վերջինի դիրքորոշման լսելիությունը**, մահացածի իրավունքների վերականգնման անհրաժեշտության դեպքում քրեական գործի վարույթը շարունակելու՝ նրա պահանջի բավարարումը և **մասնակցությունը մահացածի իրավունքների պաշտպանության և նրա մեղավորության հարցը պարզելուն ուղղված դատավարության ողջ ընթացքում:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, մասնավորապես, հաշվի առնելով՝

ա) իրավակիրառ պրակտիկայում անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունը,

բ) օրենսգրքի նշված դրույթով նախատեսված բացառության իրացման

անհրաժեշտությունը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների անմիջական գործողության ապահովման ու իրավունքի գերակայության երաշխավորման հիման վրա,

զ) անձի մահվան հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում մահացածի հարազատներին նման որոշման ընդունման մասին իրազեկելու անհրաժեշտությունը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 մարտի 2017 թվականի
ՍԴՈ-1358



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 407-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2.2-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 414.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 426. 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ. Բաղդասարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի, 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը» վերտառությամբ 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի՝ սույն գործով վիճարկվող 2-րդ կետը սահմանում է.

«2.2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝

...

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ կցելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումը և մեջբերելով ստորադաս դատարանի դատական ակտի այն մասը, որը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասին, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի միջև առկա հակասության վերաբերյալ»:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը» վերտառությամբ 414.2-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 2-րդ մասի 2-րդ կետը սահ-

մանում է.

«2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես, եթե՝

...

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը»:

Օրենսգրքի՝ «Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով» վերտառությամբ 426.4-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

Օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասը լրացվել, իսկ 414.2-րդ հոդվածը գործող խմբագրությամբ շարադրվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-48-Ն ՀՀ օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 10.06.2014 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 21.06.2014 թվականին և ուժի մեջ է մտել 03.07.2014 թվականին:

Օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը գործող խմբագրությամբ շարադրվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 26.10.2011 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 08.11.2011 թվականին և ուժի մեջ է մտել 21.11.2011 թվականին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2014 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնի հետա-

քննիչի որոշմամբ «Լեկմա Շուգ» ՍՊԸ-ի տնօրեն Ջ. Եղիազարյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

ՀՀ գլխավոր դատախազի 2015 թվականի մարտի 23-ի որոշմամբ վերացվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ վերը նշված որոշումը և հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի ապրիլի 13-ին Ջ.Եղիազարյանի ներկայացուցչի կողմից Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան /այսուհետ՝ դատարան/ բողոք է ներկայացվել, որով բողոքաբերը խնդրել է վերացնել ՀՀ գլխավոր դատախազի 2015 թվականի մարտի 23-ի որոշումը:

2015 թվականի մայիսի 4-ի որոշմամբ դատարանը վարույթ իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել ՀՀ գլխավոր դատախազի 2015 թվականի մարտի 23-ի որոշմամբ թույլ տրված՝ Ջ. Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

Դատարանի 2015 թվականի մայիսի 4-ի որոշման դեմ դատախազի բերած վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2015 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ մերժվել է:

Հիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ մերժվել է:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա իր ՍԴՈ-1236 որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել է.

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է հետևյալին.

առաջին՝ այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում սովել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարություններ, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նոր որոշում հնարավոր է կայա-

ցնել միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարությունների պարտադիր կատարման պարագայում,

երկրորդ մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը հսկողության նպատակով դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**,

երրորդ՝ մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում Սահմանադրությամբ և օրենքով ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքի հետ»:**

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որում, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումը, որպես նոր հանգամանք, միջնորդել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը վերանայել, թիվ ԵԿԴ/0060/11/15 քրեական գործով դատարանի 2015 թվականի մայիսի 4-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2015 թվականի հուլիսի 8-ի որոշումները բեկանել և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի 2016 թվականի հունվարի 29-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1236 որոշման եզրափակիչ մասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս Սահմանադրական դատարանը վիճարկվող նորմին չի տվել այնպիսի մեկնաբանում, որ ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է յոթնօրյա ժամկետը լրանալուց հետո վեցամսյա ժամկետում, ի թիվս այլնի, այդ նորմում հստակ նշված մյուս որոշումների, վերացնել նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև չի արձանագրել, որ քննարկվող նորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

3. Օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի առնչությամբ դիմողը գտնում է, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության /2015 թվականի փոփոխություններով/ 61-րդ, 63-րդ և 69-րդ և ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 93-րդ և 103-րդ հոդվածներին այնքանով, որքանով վճռաբեկ բողոք բերողին հնարավորություն չեն տալիս իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչել Սահմանադրական դատարանի որոշ-

ման այլ մասերում (բացի եզրափակիչ մասից) արտահայտված իրավական դիրքորոշումները:

Օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առնչությամբ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության /2015 թվականի փոփոխություններով/ 61-րդ, 63-րդ և 69-րդ և ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 93-րդ և 103-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով Սահմանադրական դատարանի որոշման այլ մասերում (բացի եզրափակիչ մասից) արտահայտված իրավական դիրքորոշումները չի համարում նոր հանգամանք:

Վիճարկվող նորմերի՝ ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 93-րդ հոդվածին ենթադրյալ անհամապատասխանությունը դիմողը հիմնավորում է Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, Սահմանադրական դատարանի որոշումների կառուցվածքային ամբողջականության և Սահմանադրական դատարանի որոշումների իրավական բնույթի համատեքստում: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթները, դատավարական հետևանքների առաջացումը պայմանավորելով Սահմանադրական դատարանի որոշման բացառապես եզրափակիչ մասում սահմանված իրավական դիրքորոշումներով, սահմանափակում են Սահմանադրական դատարանի հետևությունների հիմքում դրված իրավական դիրքորոշումների, Սահմանադրական դատարանում վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող մեկնաբանությունների իրավական նշանակությունը և դրանով իսկ բացառում դրանց դատավարական հետևանքները, որոնք արտահայտված են որոշման ոչ թե եզրափակիչ, այլ, օրինակ՝ նկարագրական-պատճառաբանական մասում:

Դիմողի կարծիքով, «...Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտվող իրավական դիրքորոշումները, որոնք անբաժանելի են այդ որոշումների հետևություններից և ենթակա են գնահատման վերջիններիս հետ մեկ միասնության մեջ, կարող են արտահայտված լինել և առավելապես արտահայտվում են որոշման նկարագրական-պատճառաբանական մասում: Այդ դիրքորոշումների տեղակայումը որոշման որևէ հատվածում պատահական չէ: Իրավական դիրքորոշումները, որպես որոշման արդյունքում արձանագրվող հետևության պատճառաբանություններ, հատկապես պետք է արտահայտվեն որոշման նկարագրական-պատճառաբանական մասում: Ինչ վերաբերում է դրանք որոշման եզրափակիչ մասում շարադրելուն, ապա չբացառելով այդ հնարավորությունը, պետք է նշել, որ իրավական դիրքորոշումները իրենց բնույթով ու բովանդակային ծավալով շատ հաճախ չեն կարող տեղավորվել և ամբողջությամբ շարադրվել որոշման այդ մասում»:

Դիմողը նաև նշում է, որ «...սահմանադրական արդարադատության

առարկայի ծավալով պայմանավորված՝ դատարանի վերլուծություններն ու դրանցում արտահայտվող կոնկրետ իրավական դիրքորոշումները, որոնք բոլոր դեպքերում ուղղված են սահմանադրաիրավական վեճի առարկան կազմող դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, կարող են վեճի առարկայի հետ ունենալ երկրորդային կապ, ինչը չի բացառում դրանց նշանակությունը դատարանի վերջնական հետևության հիմքում: Այլ կերպ ասած՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների մի մասը կարող է անմիջականորեն պատճառաբանել նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ դատարանի հետևությունները, իսկ մյուս մասը՝ ապահովելով վերլուծության համակարգային բնույթը, ընկած լինել ոչ թե անմիջականորեն դատարանի հետևությունների, այլ դրա առաջնային պատճառաբանությունների հիմքում: Երկրորդ խումբ իրավական դիրքորոշումներն իրենց այդ առանձնահատկությամբ պայմանավորված օրինաչափորեն չեն կարող տեղ գտնել որոշման եզրափակիչ մասում, բայց արժանի են կրկնության, դրանք պակաս նշանակություն չունեն վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու համար: Բոլոր դեպքերում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավական նշանակությունը պայմանավորված է բացառապես դրանց իրավաբանական բնույթով և չի կարող պայմանավորված լինել դրանց տեխնիկական տեղակայությամբ»:

Վիճարկվող նորմերի՝ ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 61-րդ, 63-րդ, 69-րդ հոդվածներին և ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 103-րդ հոդվածին ենթադրյալ անհամապատասխանությունը դիմողը հիմնավորում է այնպիսի փաստարկով, համաձայն որի՝ վիճարկվող դրույթները «...սահմանափակում են դատարանի մատչելիությունը առանց հիմնավոր, այսինքն՝ հասարակական կամ պետական պահանջումներով պայմանավորված անհրաժեշտության, նվազեցնում են իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունը, սահմանափակում դատավճռի վերանայման իրավունքը և արդյունքում բովանդակագրկում սահմանադրական արդարադատության միջոցով իրավունքների պաշտպանության հնարավորությունը»:

Դիմողի գնահատմամբ՝ «...սահմանադրական դատարանի այնպիսի իրավական դիրքորոշման առկայության պայմաններում, որ իրավունքի նորմը անձի նկատմամբ կիրառվել է դրա սահմանադրաիրավական բովանդակությանը հակառակ մեկնաբանությամբ, այդ իրավունքների իրականացման սահմանափակումը բացառապես այն ձևական հիմնավորմամբ, որ նման դիրքորոշումն արտահայտվել է որոշման ոչ եզրափակիչ մասում», չի համապատասխանում այդ իրավունքների սահմանա-

փակման չափանիշներին, չի բխում արդարադատության շահից և խաթարում է դրա էությունը:

Դիմողի կարծիքով, վիճարկվող դրույթներն անհարկի խոչընդոտներ են հարուցում անձի՝ Սահմանադրության վերոհիշյալ հոդվածներով ամրագրված իրավունքների իրացման համար նաև այն պատճառով, որ սահմանափակում են դրանց երաշխիքներից մեկի՝ դատական ակտերի բողոքարկման՝ դատախազության սահմանադրական լիազորության իրականացումը, և որպես պետական համակարգում ՀՀ դատախազության կարգավիճակի և նրա առջև դրված խնդիրների լուծման գործիքակազմի կարևոր բաղադրիչ՝ դատական ակտերի բողոքարկման սահմանադրական լիազորությունը չպետք է ենթարկվի չհիմնավորված և չարդարացված սահմանափակումների:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկների՝ դիմողը, մասնավորապես, վկայակոչում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի մի շարք դրույթներ, Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի կողմից արտահայտված մի շարք իրավական դիրքորոշումները, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի համապատասխան հանձնարարականում տեղ գտած դիրքորոշումներ:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի, 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Իր դիրքորոշումը պատասխանողը փաստարկում է նրանով, որ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-943 որոշման արդյունքում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված 26.10.2011թ. ՀՕ-268-Ն և 26.10.2011թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքներով փոփոխություններ կատարվեցին համապատասխանաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ այն տրամաբանությամբ, որ նոր հանգամանքներով վճռաբեկ բողոք բերելու հնարավորություն ընձեռվի նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, օրենքի դրույթը ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ որոշման եզրափակիչ մասում գտել է, որ այն դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Ըստ պատասխանողի՝ այս իմաստով «հենց եզրափակիչ մասում դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտում» ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե տվյալ նորմի և դրա կիրառության՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին Սահմանադրական դատարանի կողմից կատարված իրավական վերլուծությունը՝ ողջ ծավալով, այլ թեկուզ միայն այն նշումը, որը ցույց է տալիս Սահմանա-

դրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ վիճարկվող նորմն ինքնին Սահմանադրությանը համապատասխանող լինելու պարագայում, այնուամենայնիվ, կոնկրետ գործի շրջանակներում դատարանը դրա գործնական կիրառության և մեկնաբանության մասով ունի վերապահումներ, որոնց մասին դատարանի կողմից ներկայացված իրավավերլուծությունը հետագայում պարտադիր է լինելու ինչպես այլ իրավակիրառողների, այնպես էլ վճռաբեկ դատարանի համար՝ այն որպես նոր հանգամանք դիտարկելու, անձի խախտված իրավունքների վերականգնման, ինչպես նաև տվյալ հարցի կապակցությամբ միասնական դատական պրակտիկա ապահովելու տեսանկյունից:

Պատասխանողի կարծիքով՝ Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ գործի շրջանակներում արտահայտված դիրքորոշումը, որը համակողմանի և մանրամասն վերլուծության տեսքով շարադրվում է դատարանի որոշման նկարագրական-պատճառաբանական մասում և այդ մասին «հղում» է պարունակում որոշման եզրափակիչ մասում, բավարար է նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք բերելու համար:

Պատասխանողն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը Սահմանադրական դատարանի որոշումներն առանձին կառուցվածքային մասերի բաժանելու և դրանց առաջադրվող պահանջների վերաբերյալ որևէ իմպերատիվ դրույթ չի պարունակում, որպիսի պարագայում Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի դերը կրնազգծվի բացառապես այն իմաստով, որ այն հնարավորություն է տալիս հստակորեն պատկերացում կազմել Սահմանադրական դատարանի վարույթում գտնված գործի ելքի վերաբերյալ և այդպիսով գնահատել կոնկրետ գործի շրջանակներում կամ կոնկրետ իրավունքի վերականգնման հետագա հնարավորությունները պարզելու տեսանկյունից որոշմանն ամբողջությամբ ծանոթանալու և գործի քննության ընթացքում Սահմանադրական դատարանի հայտնած դիրքորոշումներն ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ կետը՝ պատասխանողը գտնում է, որ Սահմանադրական դատարանի կողմից կատարված ամրագրումը, համաձայն որի՝ «վիճարկվող նորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր չի ճանաչվում միայն Սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, բավարար է, որպեսզի համարենք, որ «Եզրափակիչ մասում բացահայտում է այդ դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը» կանոնը պահպանված է, և այն դիտարկենք որպես վճռաբեկ բողոքարկման համար հիմք հանդիսացող նոր հանգամանք»:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

ա/ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական զարգացումների ներկա տրամաբանության շրջանակներում ինչու՞ մն են կայանում Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների էությունն ու բովանդակությունը և դրանց նշանակությունն այդ որոշումների՝ որպես ամբողջական պաշտոնական փաստաթղթերի, պատշաճ իրավաբանական և կիրառման տեսանկյունից,

բ/ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով պայմանավորված իրավական հետևանքներն արդյո՞ք տարբեր են՝ կախված այդ դիրքորոշումների՝ Սահմանադրական դատարանի որոշման տարբեր մասերում ամրագրված լինելու ընթացակարգային /տեխնիկական/ հանգամանքից,

գ/ իրավակիրառ պրակտիկայում ինչպե՞ս են ընկալվում և իրացվում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես իրավունքի աղբյուր, որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների անմիջական գործողության ու դրանց էության անխախտելիության սահմանադրական սկզբունքների, իրավունքի գերակայության և իրավական որոշակիության ապահովման երաշխիք:

6. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում սկզբունքային անդրադարձ է կատարել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների էության, բովանդակության, դրանց իրավաբանական ուժի ու դերի հարցերին: Մասնավորապես, ՄԴՈ-943 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ.

- Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները «... կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ: Որպես սահմանադրական իրավունքի կարևոր աղբյուր՝ դրանք սկզբունքային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի որոշումներից բխող օրինաստեղծ (նորմաստեղծ) գործունեության համար: Իր որոշումներում բացահայտելով օրենքի (դրա առանձին դրույթների) կամ այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ Սահմանադրական դատարանն արտահայտում է իրավական դիրքորոշումներ, որոնց հիման վրա էլ որո-

շում է տվյալ նորմերի կամ իրավական ակտի իրավաբանական ուժի հարցը՝ Սահմանադրությանը հակասելու դեպքում ճանաչելով այն անվավեր: Դրանով պայմանավորված՝ նաև առաջանում է այդ ակտով (նորմերով) նախկինում կարգավորվող իրավահարաբերության հետագա կարգավորման, հետևաբար՝ հանրային իշխանության իրավասու մարմնի իրավաստեղծ (օրինաստեղծ) գործունեության անհրաժեշտություն:

Ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի ու իր կողմից ընդունվող որոշումների իրավաբանական ուժի և բնույթի առանձնահատկություններից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները.

ա/ անմիջականորեն բխում են սահմանադրական դատարանի լիազորություններից, հետևաբար՝ կրում են պաշտոնական բնույթ,

բ/ ունեն կոնկրետ իրավական հետևանք, հասցեագրված են ինչպես տվյալ գործով կոնկրետ, այնպես էլ հանրային-իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին (համընդգրկուն են),

գ/ ունեն գործողության անսահմանափակ ժամկետ, կարող են փոփոխվել միայն սահմանադրական դատարանի որոշումներով,

դ/ կոչված են ՀՀ իրավահամակարգում և իրավակիրառական պրակտիկայում նպաստելու իրավական անորոշության վերացմանը, դրվում են իրավահարաբերությունների սահմանադրականացման հիմքում, ունեն նախադեպային բնույթ,

ե/ մինչև վեճի առարկա հարաբերության նորմատիվ կարգավորումը, որոշ դեպքերում նաև իրավակարգավորման ժամանակավոր միջոց են,

զ/ ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում բազմիցս անդրադարձել է նաև օրինաստեղծ և իրավակիրառական պրակտիկայում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների անվերապահ և հետևողական իրացման խնդիրներին (ՄԴՈ-765, ՄԴՈ-815, ՄԴՈ-833, ՄԴՈ-873, ՄԴՈ-966, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1254 և այլն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման առնչությամբ:

Անդրադառնալով Սահմանադրական դատարանի որոշման տարբեր մասերում իրավական դիրքորոշումների տեղակայված լինելու և այդ դիրքորոշումներից բխող իրավական հետևանքների միջև կապի խնդրին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ այդ կապակցությամբ ևս արտահայտել է սկզբունքային իրավական դիրքորոշում, համաձայն որի. «Սահմանադրական դատարանի որոշումները պետք է

ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես Սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը» /ՄԴՈ-943/:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշման հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Սահմանադրական դատարանի՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշման իրավական հետևանքը պայմանավորված չէ տվյալ իրավական դիրքորոշման՝ Սահմանադրական դատարանի որոշման այս կամ այն մասում ամրագրված լինելու փաստով:** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում»: Բացի դրանից, Սահմանադրական դատարանի որոշման, որպես պաշտոնական **ամբողջական** փաստաթղթի իրավաբանական ուժի առանձնահատկությունը, որպես նաև ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածը՝ իր սահմանադրաիրավական բովանդակությունը համապատասխան ընկալելու և կիրառելու երաշխիք, մանրամասնված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում: **Հիշյալ նորմատիվ կարգավորումների հիմքում դրված է իրավական այն սկզբունքը, համաձայն որի որպես իրավական հետևանքներ առաջացնող պաշտոնական փաստաթուղթ, պետք է առաջնորդվել ոչ թե միայն Սահմանադրական դատարանի որոշման կառուցվածքային մաս հանդիսացող այս կամ այն դրույթով, կամ բացառապես եզրափակիչ մասով, այլ ողջ որոշմամբ,** հիմք ընդունելով վերջինիս ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասերում արտահայտված իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ

հոդվածի 12-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից չի բխում այնպիսի իրավաբանական, համաձայն որի կատարման է ենթակա Սահմանադրական դատարանի որոշման միայն եզրափակիչ մասը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 5-6-րդ, 167-170-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-102-րդ հոդվածների պահանջներից չի բխում որևէ նորմատիվ ակտով Սահմանադրական դատարանի որոշման իրավաբանական ուժի այլ առանձնահատկություն սահմանելը:

Հիշյալ համատեքստում Սահմանադրական դատարանն անթույլատրելի է համարում բողոքարկման հիմքում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումների և վիճարկվող դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հնարավորության շրջանակներում անտեսումը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ գրեթե բոլոր տարեկան հաղորդումներում անդրադարձել է հիշյալ հիմնախնդրին՝ նշելով, որ Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումն իրավական անվտանգության ապահովման երաշխիք է և կարևորել, որ օրենսդրորեն անհրաժեշտ է ապահովել, որպեսզի պետական մարմինները և պաշտոնատար անձինք Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություններ: Սահմանադրաիրավական նման մոտեցում է դրսևորվում ՀՀ Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրերի վավերացման հարցերով ընդունվող որոշումներում, որոնցում շեշտվում են ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Էական է նաև այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում տվյալ դատարանի նախադեպային իրավունք համարվող իրավական դիրքորոշումները նույնպես հիմնականում ամրագրվում են վճռի պատճառաբանական մասում և պարտադիր պետք է հաշվի առնվեն իրավական պրակտիկայում:

7. Կարևորելով քննության առարկա հիմնախնդիրը նաև 2015թ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ինչպես սահմանադրագիտության, այնպես էլ սահմանադրական արդարադատության զարգացման միջազգային պրակտիկայում Սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սուսկ իրավական

ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթղթեր, այլ առավելապես շեշտադրվում են վերջիններիս նախադեպային բնույթը, միասնական սահմանադրական դոկտրինայի ձևավորման ու Սահմանադրության և օրենսդրության զարգացման կարևորագույն աղբյուր հանդիսանալու հանգամանքը:

Իրավական դիրքորոշումները Սահմանադրական դատարանի ընդհանուր բնույթի իրավական եզրահանգումների ամբողջություն են, որոնք հանդես են գալիս որպես դատարանի կողմից իր լիազորությունների շրջանակներում ընդունված որոշումներով Սահմանադրության մեկնաբանման և օրենքների ու այլ նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման արդյունք, դրանով իսկ վերացնելով դրանց իրավաբանական անորոշությունը և վերջինով պայմանավորված՝ իրավակիրառական պրակտիկայի հնարավոր հակասահմանադրականությունը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ «իրավական դիրքորոշում» եզրույթի բովանդակությունը հստակեցված չէ ՀՀ օրենսդրությամբ: Մակայն հարկ է համարում նշել, որ սահմանադրական արդարադատության պրակտիկայի շրջանակներում իրականացվել է քննարկվող իրավական հասկացության առանձնահատկությունների վերլուծություն: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 18 հոկտեմբերի 2006թ. ՄԴՈ-652 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է»: Իսկ, ՄԴՈ-674 որոշմամբ Սահմանադրական դատարանն առանձնահատուկ կարևորել է վերոհիշյալ ՄԴՈ-652 որոշման պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման անհրաժեշտությունը (5-րդ կետ):

Այսպիսով, ՄԴՈ-652 որոշմամբ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումների իրավական բովանդակությունը սահմանափակել է սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանության շրջանակներով, արձանագրելով, որ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ **Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձևակերպում է իր իրավական դիրքորոշումը**, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ իրավաստեղծ բոլոր մարմինների համար: Հետևաբար, Սահմանադրության մեկ-

նաբանման, վիճարկվող իրավանքում (նորմատիվ ակտի) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման նպատակով իրավավերլուծությունը և համապատասխան եզրահանգումներն օբյեկտիվորեն հիմնավորվում ու շարադրվում են Սահմանադրական դատարանի որոշման ոչ միայն եզրափակիչ, այլ՝ հատկապես պատճառաբանական մասում, տրամաբանորեն միասնական ու համակարգված ձևով ապահովելով դրանց որոշակիությունն ու միակերպ ընկալումը:

ՀՀ սահմանադրական դատարանի 25 փետրվարի 2011թ. ՍԴՈ-943 որոշումն առանցքային նշանակություն ունի «իրավական դիրքորոշումներ» հասկացության բովանդակության, բնույթի ու առանձնահատկությունների իրավավերլուծության, ինչպես նաև դրանց իրավաբանական ուժի, իրավահամակարգում ունեցած դերի և նորմաստեղծ նշանակության խնդիրների լիարժեք լուծման տեսանկյունից: Հիշյալ որոշումը նույնպես քննարկվող հասկացության առանձնահատկություններից մեկը դիտարկում է այն, որ դրանք ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են, սակայն, միևնույն ժամանակ, իրավական դիրքորոշումների բովանդակության առնչությամբ արձանագրում է, որ «Դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որպես կանոն, բովանդակում են տվյալ գործի լուծման հիմքում դրված իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք վերաբերում են.

- ՀՀ Սահմանադրության նորմերի, միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների, օրենքների, ինչպես նաև օրենսդրության այլ ակտերի (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, դրանց սահմանադրական արժեքանությունից բխող ընկալմանն ու կիրառմանը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորմանը, այդ ամենի արդյունքում՝ վիճարկվող նորմի (իրավական ակտի) սահմանադրականությունը գնահատելուն,

- իրավակիրառական (այդ թվում՝ արդարադատական) պրակտիկան գնահատելուն և այդ պրակտիկայում ՀՀ Սահմանադրության նորմերը, օրենքները և իրավական այլ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառելու անհրաժեշտությանը,

- սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն ու փաստերին գնահատական տալուն»:

Ակնհայտ է, որ նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն առավել ամբողջական է ներկայացրել «իրավական դիրքորոշում» հասկացության բովանդակությունը՝ վերջինիս շրջանակներում, բացի սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանությունից, ընդգրկելով նաև հիշյալ իրավական չափորոշիչները:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմա-

նադրական դատարանի իրավական դիրքորոշում» հասկացության էությունն օրենսդրորեն հանգեցնելով միայն Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում ամփոփված եզրահանգմանը, իմաստագրվում են Սահմանադրության գերակայության երաշխավորման գործառույթն ընդհանրապես և Սահմանադրական դատարանի որոշումների՝ որպես իրավունքի աղբյուր հանդիսանալու հանգամանքը՝ մասնավորապես: Հակառակ պարագայում Սահմանադրական դատարանը պետք է ստիպված լինի տվյալ որոշման շրջանակներում իր բոլոր իրավական դիրքորոշումները տեղափոխել որոշման եզրափակիչ մաս, ինչն իրավական առումով անընդունելի է:

8. Միջազգային սահմանադրաիրավական պրակտիկան նույնպես վկայում է, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն արտահայտվում են որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում:

Ավելին, սահմանադրական արդարադատության ժամանակակից պրակտիկան վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասում հաճախ արձանագրվում է ոչ միայն իրավական ակտի Սահմանադրությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու հանգամանքը, այլև ամրագրվում են դատարանի այլ եզրահանգումներ: Ակնհայտ է, որ դրանք ինքնին ներկայացնում են հիշյալ մարմնի վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդիրների առնչությամբ: Քննարկվող հանգամանքն առավել ընդգծվում է ՀՀ սահմանադրական դատարանի այն որոշումներում, որոնց շրջանակներում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, վիճարկվող ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, հետաձգում է այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը: Տվյալ պարագայում դատարանն արտահայտում է իր վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդրի հնարավոր լուծման առնչությամբ, ընդ որում՝ այդ հանգամանքն իր արտահայտությունն է գտնում որոշման սուկ եզրափակիչ մասում:

Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ ապահովել, որպեսզի **հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն:**

Սահմանադրական դատարանը 25 փետրվարի 2011թ. ՄԴՈ-943 որոշման մեջ արձանագրել է նաև, որ վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս Սահմանադրական դատարանը հաճախ մեկնաբանելով վիճարկվող իրավանորմերը՝ բացահայտում է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը շարադրելով որոշման եզրափակիչ մասում՝ ճանաչելով այդ նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը կամ համապատասխանությունը Սահմանադրությանը՝ **իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակում, կամ իր որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում**, դրանցով իսկ մատնանշելով.

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը,

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող տվյալ նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների,

- սահմանադրաիրավական այն չափորոշիչները, որոնց հիման վրա հանրային իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ապահովել տվյալ նորմի լիարժեք կիրառման լրացուցիչ իրավակարգավորումներ:

Հետևաբար, Սահմանադրական դատարանի որոշումն անհնար է լիարժեք կատարել առանց վերը նշված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու, ինչն իր հերթին ենթադրում է, որ պարտադիր կատարման են ենթակա Սահմանադրական դատարանի որոշման ոչ միայն եզրափակիչ, այլ նաև պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-943 որոշման՝ օրենսդիրը 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասում կատարեց լրացում, նախատեսելով, որ Սահմանադրական դատարանը կարող է ընդունել ոչ միայն վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու և վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումներ, այլ նաև վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ **Սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում**: Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանվեց, որ հիշյալ հոդվածում նշված գործերով դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ **սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանա-**

դրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում վերոհիշյալ իրավակարգավորումները հստակ սահմանադրական ամրագրում ստացան: Համաձայն ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով իրավունք ունի դիմել Սահմանադրական դատարան, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ **հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը**: Ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանին է վերապահվում **«իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության» սահմանադրաիրավական բովանդակության գնահատումը՝ դրա վերաբերյալ արտահայտելով կոնկրետ իրավական դիրքորոշումներ**:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական կարգավորումների գլխավոր խնդիրներից պետք է լինի համակարգային ամբողջականության մեջ երաշխիքների ստեղծումը Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման լիարժեք համակարգ ձևավորելու համար, ինչը պարտադիր է Սահմանադրության պահանջների կատարման տեսանկյունից:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ վիճարկվող նորմը Սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու հանգամանքն իրավական համարժեք լուծումներով առկա է նաև մի շարք այլ պետությունների, այդ թվում, օրինակ, Գերմանիայի, Լիտվայի, ՌԴ-ի, Սլովենիայի, Իսպանիայի, Հունգարիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի սահմանադրական դատարանների գործունեության պրակտիկայում: Հիշյալ բոլոր դատարանների համար ընդհանուր է այն, որ որոշման մեջ ներկայացված մեկնաբանությունը պարտադիր է դառնում հանրային իշխանության բոլոր մարմինների համար: Այդ առումով ուշադրության է արժանի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնա-

ժողով)՝ հիմնախնդրին առնչվող դիրքորոշումը, համաձայն որի՝ «Հստակ օրենսդրական, իսկ լավագույն դեպքում սահմանադրական կարգավորումը, որը կպարտավորեցնի այլ պետական մարմիններին, այդ թվում՝ դատարաններին, հետևելու Սահմանադրական դատարանի կողմից տրված սահմանադրական մեկնաբանությանը, հստակություն կմտցնի սահմանադրական և ընդհանուր դատարանների հարաբերություններում և կարող է հիմք հանդիսանալ անհատների համար՝ պահանջելու իրենց իրավունքների դատական պաշտպանություն» /CDL-AD(2010)039rev, Study on Individual Access to Constitutional Justice, Adopted by the Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 December 2010)/:

10. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ իրավանդորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումը պայմանավորված իրավական հետևանքները **նոր հանգամանքի հետ չկապված** վճռաբեկ բողոքը հիմնավորելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու քրեադատավարական ինստիտուտներն անմիջականորեն առնչվում են ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 1, 3, 61 և 63-րդ հոդվածներով ամրագրված սահմանադրական դրույթների երաշխավորման, 75-րդ հոդվածում ամրագրված՝ այդ իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու, ինչպես նաև 79-րդ հոդվածում ամրագրված՝ իրավական որոշակիության սկզբունքի արդյունավետ իրացման հարցերին:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ վեճի առարկա հոդվածներում Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների առնչությամբ նրանց կողմից ընդունվող ակտերի միայն եզրափակիչ մասին վերաբերող որևէ սահմանափակում չի նախատեսվում: Դրանք որպես իրավունքի աղբյուր՝ իրենց իրավակարգավորիչ նշանակությամբ դիտարկվում են ակտի ամբողջականության մեջ:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետով, 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Սահմանադրական դատարանի որոշման **միայն եզրափակիչ մասում** ամրագրված՝ իրավանդորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումներին համապատասխան իրավական հետևանք վերապահելը չի բխում ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 1, 3, 4, 61, 63, 75, 79 և 80-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 93-րդ հոդվածի պահանջներից:

Քննության առարկայի վերաբերյալ համանման տեսակետ է արտա-

հայտել նաև ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը՝ 13.03.2017թ. թիվ 05/3793-17 գրությամբ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիրքորոշման մեջ:

Նման իրավական դիրքորոշման տեսանկյունից խնդիրն առավել կարևոր ու հրատապ կդառնա 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելուց հետո, երբ ՀՀ վճռաբեկ դատարանի համար առաջնահերթ խնդիր կհանդիսանա Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջի անվերապահ կատարումը՝ վերացնելով մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Ինչ վերաբերում է **նոր հանգամանքի հետ կապված** վճռաբեկ բողոքին, ապա Սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում սույն գործով վիճարկվող օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված իրավակարգավորումը որպես ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթներն արդյունավետ կատարելու խոչընդոտ հանդիսանալու վերաբերյալ դիմող կողմի փաստարկները:

Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալներն ի կատարումն ՀՀ դատախազության սահմանադրաիրավական լիազորությունների՝ **նոր հանգամանքի հիմքով** դատական ակտը վերանայելու բողոք կարող են բերել անկախ Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում իրավանորմի՝ այլ մեկնաբանությամբ կիրառված լինելու վերաբերյալ նշում պարունակելու հանգամանքից՝ վեճի առարկա նորմի առնչությամբ Սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, առավել ևս, երբ որոշման պատճառաբանական մասում արձանագրվում է, որ իրավանորմի նման մեկնաբանությամբ կիրառումը հանգեցնում է մարդու իրավունքների ոտնահարման կամ չի երաշխավորում դրանց անմիջական գործողությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում **«եզրափակիչ մասում»** բառակապակցությունները ճանաչել ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 1-ին, 3, 4, 61, 63, 75, 79 և 80-րդ հոդվածների

և ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 93-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր, քանի որ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված բովանդակության շրջանակներում նման ձևակերպման առկայությունը նոր հանգամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելիս վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձին հնարավորություն չի տալիս իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչել Սահմանադրական դատարանի որոշման այլ մասերում (բացի եզրափակիչ մասից) արտահայտված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները, ինչը հաշվի պետք է առնվի բողոքը քննելիս:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ» դրույթում «եզրափակիչ մասում» բառակապակցությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 93-րդ և 103-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով դրա առկայության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքի շրջանակներում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները դատական պրակտիկայում հիմք չեն ընդունվում բողոքի ընդունելության և քննության շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 մարտի 2017 թվականի
ՄԴՈ-1359



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 821 ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 884-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ «Թ» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

4 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմեր ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի

գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի և ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա. Սաստրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի ՄԴԱՌ-126 որոշման 5-րդ կետով սույն գործով որպես պատասխանող կողմեր դատավարությանը ներգրավվել են ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 և 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշումները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 30-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունիսի 1-ին:

Օրենքի՝ «Անձնագիրը վերցնելը» վերստառությամբ 8-րդ հոդվածի 4-րդ

մասը սահմանում է. «Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը: Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագիրը վերցնում է զինկոմիսարիատը և ուղարկում զորակոչված անձի հաշվառման վայրի անձնագրային ծառայություն: Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես: Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձի անձնագիրը վերադարձվում է ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելիս՝ զինկոմիսարիատում զինվորական հաշվառման կանգնելուց և զինվորական գրքույկը ներկայացնելուց հետո անմիջապես: Ազատագրված նատապարտված անձի անձնագիրը պահվում է պատիժը կատարող մարմնում և քաղաքացուն վերադարձվում է պատիժը կրելուց հետո անմիջապես»:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը փոփոխվել է 2016 թվականի հունիսի 29-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-129-Ն ՀՀ օրենքով: Կատարված փոփոխությունները, սակայն, չեն առնչվում օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ սույն գործով բարձրացված հիմնախնդրին:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Վկան» վերտառությամբ 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետը սահմանում է. «3. Վկան պարտավոր է

...

7) չմեկնել այլ վայր՝ առանց դատարանի թույլտվության կամ առանց քրեական հետապնդման մարմնին իր գտնվելու նոր վայրի մասին նախապես տեղեկացնելու»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթը փոփոխությունների չի ենթարկվել:

«Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 821 որոշումն (այսուհետ՝ թիվ 821 որոշում) ընդունվել է 1998 թվականի դեկտեմբերի 25-ին և ուժի մեջ է մտել նույն ամսաթվին:

Թիվ 821 որոշումը հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 19-րդ կետը սահմանում է.

«19. Կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, ինչպես նաև ազատագրկման դատապարտված անձանց անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը, իսկ ժամկետային զինվորական ծառայության գորակոչված անձանց անձնագրերը՝ զինկոմիսարիատները:

Կասկածյալների և մեղադրյալների անձնագրերը տերերին են վերադարձվում խափանման միջոցի վերացման դեպքում, ժամկետային զինվորական ծառայության գորակոչված անձանց անձնագրերը՝ պատիժը կրելուց կամ ժամկետային զինվորական ծառայությունից գորացրվելուց հետո:

Արգելվում են անձնագիր վերցնելը (բացառությամբ սույն կետում նշված դեպքերի), այլ անձանց հանձնելը և գրավ դնելը»:

Կանոնադրության 19-րդ կետը փոփոխվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 4-Ն որոշմամբ (որոշումն ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 28-ին՝ սույն գործը քննության ընդունվելուց հետո): Մասնավորապես, Կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերությունն ուժը կորցրել է: Իսկ մինչ այդ, Կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերությունը փոփոխությունների է ենթարկվել ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշմամբ: Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունը» բառակապակցությունը փոխարինվել է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» բառակապակցությամբ: Մինչև ուժը կորցնելը Կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերությունը սահմանում էր. «Կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության կամ նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ՝ առանց Հայաստանի Հանրապետությունից մեկնելու թույլտվության, որի ձևը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը»:

«Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ ՄԷԿՏ համակարգ) ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշումն (այսուհետ՝ թիվ 884-Ն որոշում) ընդունվել է 2006 թվականի հունիսի 22-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 22-ին:

Թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը սահմանում է.

«ՄԷԿՏ համակարգի շահագործման համար անհրաժեշտ տվյալների տրամադրման աղբյուրներն են ...

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) բաժանորդային կետերից համակարգչային կապով ստացվող տվյալներ՝

...

թ) քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները՝ խափանման միջոցը կիրառելու մասին հայտարարման պահին»:

Թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը փոփոխությունների չի ենթարկվել:

2. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Կանոնադրության 19-րդ կետի և թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «գ» ենթակետի առնչությամբ դիմողը գտնում է, որ դրանցով ամրագրված իրավակարգավորումներն այնքանով, որքանով ապահովված չէ քրեադատավարական օրենսդրության հետ դրանց օրգանական փոխկապակցվածությունն ու համապատասխանությունը, չեն ապահովում անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական պահանջները, իսկ թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը նաև չի բխում «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցի դատավարական բովանդակությունից ու սահմաններից և չի բավարարում իրավական որոշակիության պահանջները: Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը և Կանոնադրության 19-րդ կետը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի՝ միայն օրենքով սահմանափակման պահանջին, ՀՀ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին, իսկ թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը՝ միայն ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի՝ միայն օրենքով սահմանափակման պահանջին և ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին:

Իր՝ վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը, վկայակոչելով օրենսգրքի 6-րդ հոդվածը և 151-րդ հոդվածի 2-րդ մասը, արձանագրում է, որ անձի անձնագիրը կարող է չվերադարձվել անգամ այն ժամանակ, երբ վերացել է վերջինիս նկատմամբ «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը:

Բացի դրանից, արձանագրելով, որ Կանոնադրության 19-րդ կետը կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը վերցնելու վերաբերյալ դատավարական հարկադրանքի միջոցների մասին նշում է պարունակում այն

դեպքում, երբ նման նշում օրենքի 8-րդ հոդվածը չի պարունակում, դիմողը գտնում է, որ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս անձի անձնագիրը վերցնելու իրավազափությունը կարող է ապահովվել միայն օրենքի մակարդակում՝ իրավունքների սահմանափակման համազափության կանոնների կիրառմամբ: Որպես նշված դիրքորոշման իրավազափության օրինակ՝ դիմողը հղում է կատարում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին և մի շարք երկրների քրեադատավարական օրենսդրությանը:

Իր՝ վերը նշված դիրքորոշումը դիմողը հիմնավորում է նաև նույնականացման քարտերի, անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթղթի տրամադրման ընթացակարգերի տեսանկյունից: Այս կապակցությամբ վկայակոչելով ՀՀ ոստիկանության պետի 2012 թվականի փետրվարի 13-ի թիվ 2-Ն հրամանը՝ դիմողը գտնում է, որ անձնագիրը և նույնականացման քարտը վերցնելու փաստը հավաստող տեղեկանքները չեն կարող հանդես գալ որպես անձը հաստատող փաստաթղթին փոխարինող փաստաթուղթ՝ անձն անհատականացնող բավարար տվյալներ չպարունակելու պատճառով (օրինակ՝ լուսանկարի բացակայությունը):

Վկայակոչելով ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1660-Ն որոշումը՝ դիմողը գտնում է, որ այս դեպքում էլ անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի տրամադրման կարգը և փաստաթղթի ձևն ամրագրող կարգավորումները տարածվում են միայն այն դեպքերի վրա, երբ քաղաքացին ինքն է դիմում ներկայացնում անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքում անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ ստանալու մասին:

Թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետի առնչությամբ իր՝ վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը ներկայացնում է կոնկրետ իրավիճակներ, երբ, ի խախտումն անձի՝ իր իրավունքների սահմանափակման վերաբերյալ տեղեկանալու իրավունքի, անձն իր ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման մասին տեղեկանում է այն ժամանակ, երբ փաստացի առնչվում է կիրառված արգելքի հետ, օրինակ, երբ ցանկանում է երկրից դուրս գալ: Ըստ դիմողի՝ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման իրավազափության վիճարկումը չի ապահովվում «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման վերաբերյալ որոշման բողոքարկմամբ, եթե խափանման նշված միջոցի իրավական բովանդակությունն ընկալվում է իբրև անձի համաձայնությամբ վերջինից չհեռանալու մասին ստորագրություն վերցնել:

Բացի դրանից, ըստ դիմողի՝ որոշ դեպքերում խնդրո առարկա իրավունքի սահմանափակմանը նպաստում է ոչ միայն համապատասխան կարգավորումների թերի լինելը, այլև սահմանափակումը վերացնելու

կառուցակարգերի բացակայությունը: Որպես օրինակ՝ դիմողը ներկայացնում է իր կողմից քննված մի շարք դեպքեր, երբ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը ՄԷԿՏ համակարգով չէր հանվել, չնայած նրան, որ անձի նկատմամբ «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացված է եղել, կամ քրեական գործը կարճված է եղել, կամ անձը կրել է դատավճռով սահմանված պատիժը, կամ անձի նկատմամբ առկա է եղել արդարացման դատավճիռ, կամ քննիչը պատասխանել է, որ գործն ուղարկվել է դատարան, և կիրառված սահմանափակումը կարող է վերացվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

Օրենսգրքի վիճարկվող նորմի առնչությամբ դիմողը գտնում է, որ այն չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի պահանջներին:

Իր՝ վերը նշված դիրքորոշումը դիմողը փաստարկում է նաև նրանով, որ օրենսգրքով վկայի նկատմամբ նման քրեադատավարական ներգործություն նախատեսող ընթացակարգ նախատեսված չէ, ինչի արդյունքում օրենսգրքի վիճարկվող նորմով անձի իրավունքը սահմանափակվում է համապատասխան դատավարական կարգավիճակ ստանալու պահից՝ առանց որոշակի ընթացակարգերի շրջանակներում այդ հարցի պատշաճ քննարկման և լուծման: Որպես իրավակիրառ պրակտիկայի օրինակներ՝ դիմողը ներկայացնում է դեպքեր, երբ վարույթ իրականացնող մարմինը վերցրել է վկայի, ինչպես նաև որևէ դատավարական կարգավիճակ չունեցող անձի անձնագիրը և հրաժարվել է այն վերադարձնել, կամ ՄԷԿՏ համակարգով առանց որևէ իրավական հիմքի սահմանափակվել է վկայի կամ տուժողի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը:

3. Սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովը գտնում է, որ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով, օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետով, ՀՀ կառավարության թիվ 821 որոշման 19-րդ կետով և թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 78-րդ հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 13-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի վերաբերյալ 1999 թվականի թիվ 27 Ընդ-

հանուր մեկնաբանության 9-րդ կետի դրույթների ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ ազատ տեղաշարժման իրավունքը բացարձակ չէ. այն ենթակա է իրավաչափ սահմանափակումների: Վերջիններս պետք է նախատեսված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինեն ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակ հետապնդեն:

Վկայակոչելով ազատ տեղաշարժվելու իրավունքի և անձնագիրը վերցնելու հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ՝ պատասխանողը գտնում է, որ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց երկիրը լքելու իրավունքի սահմանափակումն իրավաչափ է, քանզի համապատասխանում է քննարկվող իրավունքի սահմանափակման վերոգրյալ հիմքերին: Պատասխանողը նշում է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անձնագիրը վերցնելը չի համարում անձնական կյանքին միջամտություն:

Պատասխանողը հիմնավոր չի համարում օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի (անձնագիրը վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո) և ՀՀ կառավարության թիվ 821 որոշման /25.12.1998թ./ 19-րդ կետի (անձնագիրը վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո) միջև ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի դիրքորոշումը: Իր անհամաձայնությունը պատասխանողը փաստարկում է նրանով, որ հարցը պետք է դիտարկել օրենսգրքով նախատեսվող խափանման միջոցների ինստիտուտի լույսի ներքո: Տվյալ դեպքում, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի խափանման միջոցների ինստիտուտի իրավակարգավորումները գերակայում են օրենքի դրույթների նկատմամբ, այսինքն խափանման միջոցի վերացումը հանգեցնում է անձնագիրը վերադարձնելու պարտականությանը:

Միաժամանակ, պատասխանողը հարկ է համարում ընդգծել, որ «տարբեր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև առկա հակասության, գործնականում օրենքի որևէ դրույթի միմյանց հակասող մեկնաբանությունների փաստի առկայությունը պետական առանձին մարմինների, քաղաքացիների, անգամ դատական մարմինների կողմից ինքնին չի կարող հակասել իրավական որոշակիության սկզբունքին և դրույթների հակասահմանադրականության հարց առաջացնել: Նման իրավիճակներում, որպես կանոն, իրավական դրույթների տարբերում-

ների նկատմամբ միասնական դիրքորոշումն ապահովվում է ՀՀ վճարեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի շրջանակներում»:

Պատասխանողը հիմնավոր չի համարում նաև դիմողի այն պնդումը, որ դիտարկվող իրավակարգավորումները ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի՝ միայն օրենքով սահմանափակման պահանջին չեն համապատասխանում: Իր դիրքորոշումը պատասխանողը փաստարկում է նրանով, որ խափանման միջոցների կիրառման իրավական հիմքերը սպառիչ սահմանված են օրենսգրքով, անձի անձնագիրը վերցնելու իրավական հիմքը՝ օրենքով, իսկ ՀՀ կառավարության վերոգրյալ որոշմամբ ուղղակի կոնկրետացվել է, թե օրենքով սահմանված միջոցն օրենսգրքով սահմանված որ խափանման միջոցի նկատմամբ է կիրառվում:

Պատասխանողը հիմնավոր չի համարում նաև դիմողի այն դիրքորոշումը, որ անձնագիրը վերցնելու դեպքում սահմանափակվում են նաև այն բոլոր իրավունքները, որոնց իրացման համար անհրաժեշտ է անձնագիրը: Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 16-ի ՄԴՈ-1255 որոշումը, իր դիրքորոշումը պատասխանողը փաստարկում է նրանով, որ «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցն անձի նկատմամբ կիրառվում է անձի համաձայնությամբ: Ըստ պատասխանողի՝ նման սահմանափակումը հակասահմանադրական կլիներ, եթե «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցն անձի նկատմամբ կիրառվեր անձի կամքին հակառակ:

Թիվ 821 որոշմամբ հաստատված կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերության վերաբերյալ դիմողի դիրքորոշման կապակցությամբ պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից սույն գործով Սահմանադրական դատարան դիմելուց հետո նշված որոշմամբ հաստատված կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերությունն ուժը կորցրել է ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 4-Ն որոշմամբ:

Քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձի անձնագիրը վերցնելու, ՄԷԿՏ համակարգով վերջինիս նկատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու պրակտիկայի հետ կապված՝ պատասխանողը թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետի դրույթի վերաբերյալ մեկնաբանության շրջանակներում գտնում է, որ և «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը կիրառելու, և՛ այդ խափանման միջոցը վերացվելու դեպքում (անձին երկիրը լքելու արգելման իրավական հիմքի վերացում) Հայաստանի Հանրապետության ռստիկանության բաժանորդային կետերից համակարգչային կապի միջոցով պետք է համապատասխան տեղե-

կատվություն տրամադրվի ՄԷԿՏ համակարգին, իսկ վերջինս պարտավոր է սահմանային կետերում առաջնորդվել տրամադրված տեղեկատվությամբ: Դիմողի գործունեության ընթացքում հավաքագրված և ՀՀ սահմանադրական դատարանին ներկայացված պրակտիկ օրինակների հիման վրա պատասխանողը պնդում է, որ «գործող դրույթների ոչ լիարժեք իրացումը պայմանավորված է ոչ թե վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրով, այլ իրավակիրառական պրակտիկայում այդ նույն օրենքի նորմատիվ պահանջների անտեսմամբ»:

Վկայի՝ այլ վայր չմեկնելու պարտականության օրենսդրական ամրագրման առնչությամբ պատասխանողը գտնում է, որ և՛ քրեական հետապնդման մարմինն իր գտնվելու նոր վայրի մասին տեղյակ պահելու, և՛ դատարանից թույլտվության ստացման պահանջներն իրավաչափ են, քանզի դրանք բխում են արդարադատության շահերից և համահունչ են թե՛ միջազգային իրավական փաստաթղթերին, թե՛ Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին: Այս կապակցությամբ պատասխանողը նկատում է, որ օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետը վկային ուղղակիորեն չի արգելում ոչ երկրի տարածքը լքելու, ոչ ազատ տեղաշարժման իրավունքն իրացնելուց: Վկան պարտավոր է քրեական հետապնդման մարմնի հետ հարաբերություններում ուղղակի տեղյակ պահել իր գտնվելու նոր վայրի մասին, իսկ քրեական հետապնդման մարմինն իրավասու չէ արգելելու վկային իր վայրը տեղափոխելու հարցում, դատարանի հետ հարաբերություններում էլ պետք է ստանա դատարանի թույլտվությունը: Ըստ պատասխանողի՝ դատարանը վկային ազատ տեղաշարժման վերաբերյալ թույլտվություն տալու հարցը լուծելիս պարտավոր է գնահատել, թե ինչ կարևորության գործ է քննվում, վկան ինչ կարևորության տեղեկատվություն է տիրապետում, ինչ կենսական նշանակություն ունի վկայի համար իր բնակության վայրի տեղափոխումը, արդյոք վկան, երկրի տարածքը լքելով, նպատակ է հետապնդում խուսափել արդարադատությանը աջակցելուց և այլն:

Անդրադառնալով դիմողի կողմից վկայակոչված այն դեպքերին, երբ վարույթ իրականացնող մարմինը վերցնում է վկաների և տուժողների անձնագրերը՝ բացառելու նրանց կողմից երկիրը լքելու հնարավորությունը, պատասխանողը գտնում է, որ նման գործելաճը որևէ իրավական հիմք չունի, քանզի որևէ պետական մարմնի համար որևէ իրավական ակտով չի նախատեսվում վկաների կամ տուժողների անձնագրերը վերցնելու լիազորություն:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա «ձևավորված իրավակիրառ պրակտիկական այնքա-

նով, որքանով չի ապահովում խափանման միջոցի վերացման դեպքում անձնագրերի անմիջապես վերադարձ դրանց տերերին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով վարույթն իրականացնող մարմնի կողմից առանց իրավական հիմքի վերցվում են վկաների և տուժողների անձնագրերը երկիրը լքելու հնարավորության բացառման նպատակով, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի թ) ենթակետի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով չի ապահովում խափանման միջոցի վերացման դեպքում անձի երկիրը լքելու իրավունքի արագ վերականգնման գործնական հնարավորությունը, հակասում են ՀՀ Սահմանադրության պահանջներին»:

4. Սույն գործով որպես պատասխանող ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր գրավոր բացատրությամբ առաջարկում է՝ ա) օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը և թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 40, 78 և 79-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող, բ) թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետն այնքանով, որքանով պարունակում է զուտ կազմակերպական բնույթի կանոններ, որոնց կիրառման հիմքը նախատեսված է օրենսգրքով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 40 և 79-րդ հոդվածներին համապատասխանող՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դիմողի կողմից բարձրացվել են «գործնական հարթությունում լուծում պահանջող մտահոգություններ», գ) օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածին համապատասխանող՝ միաժամանակ բացահայտելով «դատարանի թույլտվությամբ» արտահայտության բովանդակությունն այն իմաստով, որ դատարանի կողմից այդ նորմի կիրառումը գործնականում չհանգեցնի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված 40-րդ հոդվածի անիրավաչափ սահմանափակումների:

Միաժամանակ, ՀՀ կառավարությունը գտնում է, որ օրենքի և թիվ 821 որոշման վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով պարունակում է զուտ կազմակերպական բնույթի կանոններ, որոնց կիրառման հիմքը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, սակայն առկա է դիտարկվող նորմում «դատարանի թույլտվությամբ» արտահայտության բովանդակության բացահայտման անհրաժեշտություն այն իմաստով, որ դատարանի

կողմից այդ նորմի կիրառումը գործնականում չհանգեցնի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված 40-րդ հոդվածի անիրավաչափ սահմանափակումների, այլ քրեական գործի առանձնահատկությունների տեսանկյունից լինի իրավաչափ և անհրաժեշտ:

Իր դիրքորոշումները հիմնավորելու համար ՀՀ կառավարությունը վկայակոչում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածը և կարծիք հայտնում, որ վերջինս հնարավորություն է տալիս քրեական վարույթի կարգին վերաբերող որոշ հարցեր կարգավորել նաև այլ օրենքներով, տվյալ դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքով: Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը դիտարկելով օրենսգրքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համատեքստում՝ ՀՀ կառավարությունը գտնում է, որ այն քրեական գործով վարույթի բաղադրատարր կազմող գործողություն է, որը, հետևաբար, նույն օրենսգրքի 1-ին հոդվածի իմաստով, կարող է իր կարգավորումն ունենալ այլ օրենքներով՝ պայմանով, որ հակասություն չլինի վերջիններիս և այդ օրենսգրքի միջև:

Անդրադառնալով խափանման երկու միջոցների (կալանք և ստորագրություն չհեռանալու մասին) արդյունքում անձի անձնագիրը վերցնելու հարցին, ՀՀ կառավարությունը գտնում է, որ քրեական վարույթի շրջանակներում անձի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքի սահմանափակման հիմքը համապատասխան խափանման միջոցների կիրառումն է, այլ ոչ թե անձնագիրը վերցնելը:

Միաժամանակ, անդրադառնալով այն հանգամանքին, որ կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու հիմքերը նախատեսված չեն օրենքով, ՀՀ կառավարությունը փաստում է, որ օրենսդիրը հատուկ չի անդրադարձել խնդրո առարկա հարցի կարգավորման հիմքերին՝ նկատի ունենալով, որ ՀՀ կառավարությունն արդեն 1998թ. թիվ 821 որոշման մեջ հստակ ամրագրել էր այդ հիմքերը:

Անդրադառնալով կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերադարձնելու օրենքով և կանոնադրությամբ սահմանված իրավական հիմքերի տարբերություններին՝ ՀՀ կառավարությունը գտնում է, որ, ամեն դեպքում, պետք է նկատել, որ դիմումում բարձրացված հիմնախնդիրները պայմանավորված են ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Կանոնադրության վիճարկվող դրույթների հակասության, օրգանական փոխկապակցվածության բացակայության կամ միմյանցից չբխելու հանգամանքով, այլ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավակարգավորման ոչ ամբողջականությամբ ու ոչ լիարժեքությամբ: Այս կապակցությամբ վկայակոչելով օրենսդրական բացի վերաբերյալ Սահմանա-

դրական դատարանի ՄԴՈ-1143 որոշումը՝ ՀՀ կառավարությունը գտնում է, որ նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Անդրադառնալով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու իրավաչափության հարցին և արձանագրելով, որ տվյալ դեպքում նույնականացման քարտը ՀՀ քաղաքացու ինքնությունը և ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ է, որը նախատեսված է ՀՀ տարածքում օգտագործելու համար, ՀՀ կառավարությունը խնդրահարույց է համարում անձնագիրը վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցնելու դեպքում նույնականացման քարտ ձեռք բերելը, քանի որ նույնականացման քարտ ստանալու համար քաղաքացին դիմումի հետ, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացնում է նաև անձնագիր:

Անդրադառնալով ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշման կարգավորման առարկային՝ ՀՀ կառավարությունը հարկ է համարում նկատել, որ դիտարկվող որոշման և՛ ոչ մի դրույթ ինքնին չի սահմանափակում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Ըստ ՀՀ կառավարության իրականում դրա սահմանափակման հիմքերը, տվյալ դեպքում՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը, նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

ՀՀ կառավարությունը փաստում է, որ թիվ 884-Ն որոշման իմաստով՝ ՀՀ ոստիկանության իրավասու ստորաբաժանումը, վարույթն իրականացնող մարմնից ստանալով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման կամ դրա վերացման վերաբերյալ գրավոր իրազեկում, այդ տեղեկությունը փոխանցում է ՍԷԿՏ համակարգը շահագործող մարմնին: Ինչ վերաբերում է ՍԷԿՏ համակարգով անձի՝ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակմանը գուցահեռ անձի անձնագիրը վերցնելուն, ապա ՀՀ կառավարությունը հարկ է համարում նկատել, որ այդ պայմանն ընդամենը լրացուցիչ երաշխիք է ՍԷԿՏ համակարգի տեխնիկական խափանումների դեպքում հանրապետությունից կասկածյալի կամ մեղադրյալի ելքը կանխելու շրջանակներում:

Անդրադառնալով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում անձի՝ ՍԷԿՏ համակարգով ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները վերացնելու կառուցակարգերին՝ ՀՀ կառավարությունը, վկայակոչելով ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ 2015 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 91-Լ հանձնարարականը, արձանագրում է, որ գործնականում, կասկածյալի կամ մեղադրյալի անձնագրերը վերադարձնելու հետ մեկտեղ քրեական հետապնդման մարմինն իրավասու մարմնին իրազեկում է ՍԷԿՏ համակարգով անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը վերա-

ցնելու նպատակով:

Միաժամանակ, անդրադառնալով օրենսգրքի վիճարկվող նորմին՝ դատարանի թույլտվության մասով, ՀՀ կառավարությունը գտնում է, որ տվյալ դեպքում կարևորվում է այն հանգամանքը, որ դատարանները վիճարկվող դրույթը չմեկնաբանեն ու չկիրառեն վերացարկված գործի հանգամանքներից, այլ հաշվի առնեն գործի կամ կոնկրետ դեպքի առանձնահատկություններն ու մանրամասները՝ միաժամանակ գնահատելով վկայի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունն ու իրավաչափությունը:

Անդրադառնալով վկայի, տուժողի (քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձի) անձնագիրը վերցնելու և նրան կատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու հարցին՝ ՀՀ կառավարությունը փաստում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև Կանոնադրությամբ նախատեսված չեն վկայի կամ տուժողի անձնագիրը վերցնելու վերաբերյալ դրույթներ: Ավելին, ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշման մեջ նույնպես առկա չեն դրույթներ վկայի կամ տուժողի հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ:

5. Սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ.

ա) կասկածյալի, մեղադրյալի նկատմամբ «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոց կիրառելու դեպքում անձնագիրը վերցնելու կանոնակարգման սահմանադրականությանը,

բ) ՍԷԿՏ համակարգի գործածության արդյունքում կասկածյալի, մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման իրավական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականությանը,

գ) վկայից, տուժողից անձնագիրը վերցնելու, ինչպես նաև ՍԷԿՏ համակարգի միջոցով տեղաշարժման ազատությունը սահմանափակելու վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականությանը,

դ) վկայի՝ առանց դատարանի թույլտվության բնակության վայրը չլքելու պարտականության սահմանադրականությանը:

6. Անդրադառնալով անձի տեղաշարժման ազատության սահմանափակման իրավաչափության միջազգային իրավական գնահատման խնդրին՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի իրավաչափ սահմանափակման ելակետային կողմնորոշիչները՝ միջազգային իրավական տար-

բեր ակտերում վերջիններիս ամրագրման ու զարգացման համատեքստում:

Այսպես, ՄԱԿ-ի 1966 թվականի՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը սահմանում են, որ՝ որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք այդ տարածքի սահմաններում ունի ազատ երթևեկության իրավունք և բնակչության վայրի ընտրության ազատություն, իսկ այդ իրավունքները չեն կարող դառնալ որևէ սահմանափակման օբյեկտ, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսված են օրենքով, անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ ուրիշների և նշված դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ համատեղելի իրավունքների ու ազատությունների պահպանման համար:

Ընդ որում, անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման վերոգրյալ նորմերով Դաշնագրի մասնակից պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ստանձնում են պոզիտիվ պարտավորություն այդ իրավունքի պատշաճ իրացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում ու սահմանված նպատակների պահպանմամբ այդ իրավունքի իրավաչափ սահմանափակում իրականացնելու համար:

Այսպես, Մարդու իրավունքների կոմիտեն՝ Դաշնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ տրված թիվ 27 մեկնաբանությունների շրջանակում արտահայտել է հետևյալը.

ա) անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելու պայմանները պետք է որոշվեն օրենքով (կետ 12),

բ) անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումների վերաբերյալ օրենքներ ընդունելիս պետությունները պետք է առաջնորդվեն այն սկզբունքով, որ՝ այդ սահմանափակումները չպետք է փոխեն իրավունքի էությունը և սահմանափակման փոխհարաբերությունը, օրինաչափության և բացառության փոխհարաբերությունը չեն կարող հակադարձվել (կետ 13),

գ) սահմանափակումների կիրառումը երաշխավորող օրենքները պետք է ճշգրիտ չափանիշներ սահմանեն և չեն կարող սահմանափակումների կիրառումը վերապահել դրանց իրականացնողների ազատ հայեցողությանը (թիվ 27 մեկնաբանություններ, կետ 12),

դ) սահմանափակումները պետք է ծառայեն ոչ միայն թույլատրելի նպատակներին, այլև պաշտպանեն այդ իրավունքները (կետ 14),

ե) սահմանափակող միջոցները պետք է համապատասխանեն համաչափության սկզբունքին (կետ 14),

զ) համաչափության սկզբունքը պետք է հարգվի ոչ միայն սահմանափակումները որոշող օրենքի շրջանակներում, այլև օրենքը կիրառող վարչական և դատական իշխանությունների կողմից (կետ 15):

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրության՝ «Տեղաշարժի ազատությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկիրը, հեռանալու իրավունք: 3. Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: 4. 1-ին կետում շարադրված իրավունքները ևս կարող են որոշ ոլորտներում ենթարկվել սահմանափակումների, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և արդարացվում են ժողովրդավարական հասարակության հասարակական շահերով»:

Հաշվի առնելով հիշատակված կոնվենցիայի պահանջները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալը. անձի տեղաշարժման ազատությունը «... սահմանափակող ցանկացած միջոց պետք է լինի օրինական, հետապնդի իրավաչափ նպատակ և արդար հավասարակշռություն ապահովի հանրային շահի և անձի մասնավոր իրավունքի միջև (Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռ, 22 մայիսի 2001թ.):

Մեկ այլ Գոչևն ընդդեմ Բուլղարիայի գործով 2009թ. նոյեմբերի 26-ի վճռում (գանգատ թիվ 34383/03, կետ 48) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակող միջոցառումների շարունակականությանը, նշել է, որ եթե նույնիսկ այդպիսի սահմանափակումը սկզբնապես արդարացված է եղել, այն կարող է դառնալ ոչ համաչափ և խախտել անձի իրավունքները, եթե ինքնաբերաբար երկարաձգվի տևական ժամանակով:

Անդրադառնալով տեղաշարժման իրավունքի սահմանափակման պարբերականության հարցերին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին արդարացված և համաչափ միջամտության պարբերականությունը վերածվել է ինքնաբերաբար կիրառվող և անժամկետ գործողության ընդ-

հանուր միջոցի, ... և անգամ այն դեպքերում, երբ սահմանափակումն իրավաչափ է եղել, սակայն վերջինիս մեխանիկական պահպանումը երկարատև ժամանակահատվածով կարող է կիրառված միջոցը դարձնել անհամաչափ՝ խախտելով անձի իրավունքները» (Լուորդոն ընդդեմ Իտալիայի գործով վճիռ, 17 հուլիսի 2003թ. (գանգատ թիվ 32190/96, կետ 96)):

Վիճարկվող առարկայի համատեքստում անձի մասնավոր և ընտանեկան կյանքի պաշտպանության հիմնահարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «անձը հաստատող փաստաթուղթը վերցնելն անձի մասնավոր կյանքին շարունակական միջամտությունն է այն բանի հաշվառմամբ, որ այդ փաստաթուղթը քաղաքացիների կողմից օգտագործվում է առօրյայում, ինչպես նաև այնպիսի կարևոր կարիքների բավարարման համար, ինչպիսիք են՝ աշխատանք գտնելը կամ բժշկական օգնություն ստանալը»: (Մմիրնովան ընդդեմ Ռուսաստանի գործով 2003թ. հուլիսի 24-ի վճիռ (գանգատ թիվ 46133/99, կետ 97)):

Միաժամանակ, նույն առարկայի շրջանակում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկ այլ գործով վերահաստատել է, որ «օրենքին համապատասխան» եզրույթն առաջին հերթին պահանջում է, որ ձեռնարկված միջոցը ներպետական օրենսդրական հիմք ունենա, իսկ կառավարությունը որևէ փաստ չի ներկայացրել, որ դիմողի անձնագրի չվերադարձնելը ներպետական օրենսդրությունում որևէ հիմք է ունեցել, հետևապես առկա է կոնվենցիոն իրավունքի խախտում (գանգատներ թիվ 46133/99 և 48183/99, կետեր 99 և 100):

Հիշյալի կապակցությամբ հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական այն դիրքորոշումը, ըստ որի՝ «...թեև կոնկրետ գործով անձի գրկումը անձնագրից իրավաչափ նպատակ է հետապնդել, այնուամենայնիվ, որքան դատավարությունը երկար է տևել առանց որևէ առաջընթացի կամ առանց դիմողի դեմ որևէ ապացույցի, այնքան իրավաչափ նպատակը նվազ համոզիչ է դարձել» (Իլեթմիշն ընդդեմ Թուրքիայի գործով 2005թ. դեկտեմբերի 5-ի վճիռ (գանգատ թիվ 29871/96, կետեր 46 և 47)):

Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետության կողմից անձնագիր վերցնելը չի համարել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական և ընտանեկան կյանքի հարգման պահանջին հակասող՝ այն հիմնավորմամբ, որ տվյալ գործի շրջանակում անձի կողմից էական չափի հարկեր վճարելու պարտավորության կատարման ապահովումը դիտարկվել է ճամփորդության արգելման իրավաչափ նպատակ: Այդուհանդերձ, անդրադառնալով կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի համաչափության հիմնա-

հարցին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «համաչափության սկզբունքից բխում է, որ երկիրը լքելու իրավունքի սահմանափակումը կարող է միայն արդարացված լինել այնքան ժամանակ, քանի դեռ այն ծառայում է իր նպատակին, ինչը նշանակում է, որ նման սահմանափակումը չի կարող որպես փաստացի պատասխանատվության միջոց լինել անձի վճարման անկարողության համար» (Ռիեներն ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռ, 23 մայիսի 2006թ. (զանգատ թիվ 46343/99, կետեր 25, 122-123)):

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է իրավական այն չափանիշները, որոնց գնահատմամբ կարելի է պարզել Հայաստանի Հանրապետությունում անձի տեղաշարժվելու իրավունքի քննարկման առարկա հանդիսացող սահմանափակման միջամտության աստիճանը: Մասնավորապես, դրանք են.

1) ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանում է մարդու և քաղաքացու տեղաշարժվելու ազատության ծավալները և սահմանները, ինչն արգելում է պետության ոչ իրավաչափ միջամտությունը,

2) այս իրավունքը բացարձակ չէ և այն կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և սահմանված նպատակների պահպանմամբ,

3) ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը պետք է սահմանված լինի օրենքով,

4) այդ իրավունքի ողջամիտ և համաչափ օրենսդրական կարգավորումը ենթադրում է հանրային և մասնավոր շահերի արդարացի հարաբերակցության ապահովում՝ առանց նվազեցնելու և ոչ իրավաչափ սահմանափակելու մարդու և քաղաքացու անհատական ազատության ծավալները և սահմանները,

5) ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ,

6) այդ իրավունքի սահմանափակման ծավալները և սահմանները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակին:

7. Կասկածյալի, մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու դեպքում անձնագիրը վերցնելու օրենսդրական պահանջի սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքի երաշխավորման և դրա սահմանափակման իրավաչափության վերոշարադրյալ չափանիշների լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրության՝ մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքը նախատեսող 40-րդ հոդվածը սահմանում է. «1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: 2. Յուրա-

քանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: 3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք: 4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ»:

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այս իրավունքը ենթադրում է թե՛ ՀՀ տարածքում ազատորեն տեղաշարժվելու, թե՛ ՀՀ տարածքից դուրս գալու՝ անձի հայեցողության և այն ազատորեն իրացնելու հնարավորությունը: Այս իրավունքը, թերևս, բացարձակ չէ, այն կարող է սահմանափակվել Սահմանադրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում՝ Սահմանադրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ:

Ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցի գնահատման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

- արդյո՞ք իրավունքի սահմանափակումը նախատեսված է օրենքով,
- արդյո՞ք իրավունքի սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ,
- արդյո՞ք սահմանափակումը բավարար և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար, այլ կերպ ասած՝ համաչափության պահանջը:

Համաչափության պահանջի առնչությամբ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածն ամրագրում է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում նախատեսված է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ

հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում իրավունքի սահմանափակման բոլոր դեպքերը և հիմքերը, ներառյալ մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքը, նախատեսվում են ՀՀ Սահմանադրությամբ, իսկ առավել մանրամասն կարգավորումն իրականացվում է օրենսդրությամբ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության որոշմամբ չպետք է նախատեսվի նոր սահմանափակում: Սահմանադրական դատարանի գնահատմամբ թույլատրելի է, երբ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1-րդ կետի ուժով ՀՀ կառավարության որոշմամբ առավել մանրամասնվում է օրենքում արդեն իսկ ամրագրված սահմանափակման կիրառման կարգը, որը չպետք է դուրս գա սահմանափակման՝ Սահմանադրությամբ նախատեսված ծավալից և չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով նախատեսված սահմանափակումները: Այս պահանջը վերաբերում է նաև օրենքին, որը նախատեսում է իրավունքը սահմանափակող նորմ:

Միջամտության իրավաչափ նպատակի տեսանկյունից ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առարկա կանոնակարգումներով սահմանափակման հիմնական նպատակներն են, ի թիվս այլնի, հանցագործությունների կանխումը և բացահայտումը:

«Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցի շրջանակներում կասկածյալի, մեղադրյալի անձնագիրը վերցնելու իրավական կանոնակարգմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի և համաչափության սկզբունքի գնահատման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերաբերելի օրենսդրական նորմերի վերլուծությանը:

Այսպես, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ «1.

Կասկածյալ է այն անձը՝ 1) որը ձեռքբերվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով. 2) որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված»։ Նույն օրենսգրքի 64-րդ հոդվածը նախատեսում է, որ մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Վիճարկվող նորմերով նախատեսվում է անձնագիրը վերցնելու հնարավորություն միայն վկայակոչված դատավարական կարգավիճակ ունեցող անձից, այսինքն՝ կասկածյալից և մեղադրյալից:

Այնուհետև, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածը նախատեսում է կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառման ենթակա խափանման միջոցները, մասնավորապես նախատեսելով, որ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Ի թիվս այլնի, նախատեսվում է «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը:

Դիմողի կողմից վիճարկվող ՀՀ կառավարության թիվ 821 որոշմամբ նախատեսվում է վերցնել այն կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը, որի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը նախատեսում է, որ «... կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը..., կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նույն որոշմամբ անձնագիր վերցնելը թույլատրվում է կասկածյալի, մեղադրյալի նկատմամբ, եթե նրանց նկատմամբ **կայացվել է որոշում՝ ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք կիրառելու մասին**: «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է անձնագիրը վերցնելու դեպքերի առավել լայն շրջանակ քանի որ անձնագիրը վերցնելը չի սահմանափակում որևէ լրացուցիչ պայմանով, այլ նախատեսում է այն վերցնելու հնարավորություն կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ստանալու ուժով, իսկ այն վերադարձնելը՝ քրեական հետապնդման դադարեցումով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն քրեական հետապնդման դադարեցումը՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումն է՝ առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին:

Ելնելով վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության շրջանակներում կասկածյալից կամ մեղադրյալից անձնագիր վերցնելու վերաբերյալ առկա է երկու ինքնուրույն կանոնակարգում: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի իրավաչափությունը դիտարկել այդ դեպքերի տեսանկյունից.

ա) երբ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ առկա է խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշում,

բ) երբ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ առկա չէ խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշում:

Վերը նշված առաջին դեպքի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խափանման միջոցի կիրառումն ինքնանպատակ չէ: Այն կիրառվում է քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանությանը համապատասխան նման սահմանափակումը կոչված է կանխելու կամ բացահայտելու հանցագործությունները, պաշտպանելու այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները: Հետևաբար՝ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշման շրջանակներում իրավաչափ է դառնում նաև այդպիսի կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը: Այս դեպքում անձնագիրը վերցնելը խափանման միջոցի արդյունավետ իրացման երաշխիք է:

Սակայն նույնը չի կարելի ասել այն դեպքի համար, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից, առանց խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառման, վերցվում է կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը: Հաշվի առնելով խափանման միջոց կիրառելու և դրա համատեքստում անձի անձնագիրը վերցնելու նպատակը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված դեպքում բացակայում է նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նրանց կողմից դատավճռի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ կասկածը: Հետևաբար՝ բացակայում է նաև հանցագործությունները կանխելու կամ բացահայտելու, այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով անձնա-

գիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում:

ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև շեշտել, որ խափանման միջոցի վերացման պահին անձի անձնագիրը ենթակա է անհապաղ վերադարձման: Ներկայումս ձևավորված պրակտիկան, երբ անձի անձնագիրը պահվում է իրավասու մարմնի մոտ «ստորագորություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու դեպքում, խախտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Այս առնչությամբ ՀՀ Ազգային ժողովը ևս իր գրավոր բացատրության մեջ նշել է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով չի ապահովում խափանման միջոցի վերացման դեպքում անձնագրերի անմիջապես վերադարձ դրանց տերերին, հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

8. Անդրադառնալով ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետի սահմանադրականության հարցին՝ Սահմանադրական դատարանը նախ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը վերաբերում է ոչ թե սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում մեղադրյալի կամ կասկածյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը ներդնելուն և անձի՝ ՀՀ տարածքից դուրս գալը կանխելուն, այլ անձի նկատմամբ խափանման միջոցը վերացնելու դեպքում, նույնիսկ քրեական գործով դատավարության ավարտման դեպքում այդ համակարգում նշված տեղեկատվության պահպանելուն, ինչպես նաև այս պայմաններում անձի՝ ՀՀ տարածքից դուրս գալն անհիմն սահմանափակելուն:

ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի՝ «II. ՄԷԿՏ համակարգի շահագործման համար անհրաժեշտ տվյալների տրամադրման աղբյուրները» ցանկի 5-րդ կետի «թ» ենթակետում նշվում են «քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները՝ խափանման միջոցը կիրառելու մասին հայտարարման պահին»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման կանոնակարգման առկայության պայմաններում և նման կառուցակարգի միջոցով անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու պարագայում այն պետք է իրացվի բացառապես խափանման միջոցի վերացման մասին

որոշում ընդունելու վերաբերյալ տեղեկատվությունը ևս նույն համակարգում տեղադրելու՝ իրավասու մարմնի հստակ պարտականության իրացման և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները վերացնելու պայմանով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրության մեջ այս պահանջի ուղղակի ամրագրումը՝ վարույթն իրականացնող մարմնի վրա դրված հստակ պարտականության տեսքով, բացակայում է:

Միաժամանակ, ՀՀ քննչական կոմիտեի կողմից Սահմանադրական դատարան ուղարկված տեղեկանքում նշվում է, որ ըստ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 91-Լ հանձնարարականի՝ «ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում պետք է անձնագիրն անմիջապես վերադարձվի անձին: Ինչպես նշված է տեղեկանքում՝ նման տեղեկատվությունն ուղարկվում է ՄԷԿՏ համակարգ՝ դրանով անձի տեղաշարժման ազատության սահմանափակումները վերացնելու համար:

Սահմանադրական դատարանը, սակայն, արձանագրում է, որ նման մեկնաբանությունը ներկայացված է միայն տեղեկանքում: ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման մեջ չի նախատեսվում խափանման միջոցի վերացման մասին որոշման վերաբերյալ տեղեկատվությունը ՄԷԿՏ համակարգ ուղարկելու ուղղակի պարտականություն: Նման պայմաններում հարցականի տակ է դրվում իրավունքի իրականացման ընթացակարգի որոշակիությունը, քանզի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված գրավոր տեղեկատվությունից հետևում է, որ չկա կոնկրետ իրավասու մարմնի վրա դրված պարտականություն խափանման միջոցի վերացման, քրեական հետապնդման դադարեցման կամ գործի ավարտման դեպքում տեղեկատվությունը ՄԷԿՏ համակարգ ուղարկելու վերաբերյալ: Օրինակ՝ մի դեպքում քննիչը նշել է, որ «... ինքն իրավասու չէ վերացնել քաղաքացու նկատմամբ կիրառված՝ հանրապետությունից դուրս գալու արգելքը, քանի որ գործն այլևս մինչդատական վարույթում չէ, և այդ հարցը պետք է լուծվեր դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելով», սակայն, ինչպես պարզ է դառնում հետագա պարզաբանումից, հարցը դատական վարույթի ընթացքում լուծում չի ստացել: Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է մի շարք նման օրինակներ: ՀՀ կառավարության որոշման մեջ ամրագրված՝ «խափանման միջոցի կիրառման մասին տեղեկությունները՝ խափանման միջոցը կիրառելու մասին հայտարարման պահին» պարտականության առկայությունը պետք է համահունչ լինի «խափանման միջոցի վերացման մասին տեղեկությունները՝ խափանման միջոցի վերացման մասին հայտարարման պահին» պարտականությանը: Միայն

նման պարագայում կերաշխավորվի մարդու՝ ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքը:

9. Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ վկայից, տուժողից անձնագիր վերցնելու, ինչպես նաև ՄԷԿՏ համակարգի միջոցով վկայի և տուժողի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու հիմնահարցին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության որևէ իրավական ակտով նման պահանջ չի նախատեսվում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշմամբ էլ չի նախատեսվում նման դատավարական կարգավիճակ ունեցող անձի վերաբերյալ տեղեկությունները ՄԷԿՏ համակարգ տեղադրելու՝ իրավասու մարմնի պարտականություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ Հայաստանի Հանրապետությունում առկա նման պրակտիկայի առնչությամբ, վերաբերում է իրավասու մարմինների՝ օրենքով չնախատեսված գործողություններին, որը պետք է ստանա համապատասխան գնահատական ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության տեսքով: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ըստ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից խնդրո առարկա հարցի լուծման իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ ներկայացված տեղեկանքի՝ ՀՀ քննչական կոմիտեում դեռևս 2015 թվականին ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել և կիրառվել կարգապահական տույժ՝ վկայի ելքը հանրապետությունից արգելելու վերաբերյալ քրեական գործով հետաքննության մարմնին հանձնարարություն տալու համար, որի արդյունքում ոչ իրավաչափ կերպով սահմանափակվել էր վկայի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Սահմանադրական դատարանը խնդրո առարկա իրավակիրառական պրակտիկան անհարիր է համարում իրավական պետության սահմանադրական սկզբունքի և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի երաշխավորման համատեքստում:

Սույն գործով որպես պատասխանող ներգրավված ՀՀ Ազգային ժողովը նույնպես իր բացատրության մեջ նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով վարույթն իրականացնող մարմինն առանց իրավական հիմքի վերցնում է վկաների և տուժողների անձնագրերը երկիրը լքելու հնարավորության բացառման նպատակով, հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

10. Անդրադառնալով վկայի՝ առանց դատարանի թույլտվության կամ իրավասու մարմնին նախազգուշացնելու բնակության վայրը չլքելու պա-

հանջի իրավաչափության հարցին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմը բովանդակում է երկու առանձին իրավակարգավորումներ, որոնք վկայի համար նախատեսում են ազատ տեղաշարժման ազատությունը սահմանափակող որոշակի պարտականություններ՝ կախված քրեական գործով վարույթի փուլից:

Ընդ որում, եթե առաջին իրավակարգավորումը վերաբերում է քրեական գործով վարույթի դատական փուլին, երբ վկայի տեղաշարժման ազատությունը պայմանավորվում է դատարանի թույլտվությամբ, ապա երկրորդը՝ մինչդատական փուլին, որը նախատեսում է վկայի պարտականությունը վարույթն իրականացնող մարմնին իր բնականության վայրը փոխելու մասին տեղեկացնելու վերաբերյալ:

Վերը նշված առաջին իրավակարգավորման առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն առնչվում է անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմանը, որպես սահմանափակման միջոց դիտարկելով դատարանի թույլտվությունը: Տվյալ դեպքում, ինչպես արդեն նշվել է սույն որոշման 7-րդ կետում, Սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել իրավունքի սահմանափակում նախատեսող իրավական ակտի տեսակը, սահմանափակման նպատակի իրավաչափությունը և սահմանափակման համաչափությունը: Արձանագրելով, որ խնդրո առարկա սահմանափակումը նախատեսված է օրենքով և բխում է արդարադատության շահերից, հետապնդում է իրավաչափ նպատակ, որ նման սահմանափակման հիմքն է, ի թիվս այլնի, ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործությունների բացահայտումը: Մինևույն ժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետում «առանց դատարանի թույլտվության» եզրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնի, եթե այն մեկնաբանվի և կիրառվի սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, որ վկային այլ վայր մեկնելու թույլտվություն տալու՝ դատարանի լիազորությունն իրականացվում է ՀՀ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներով սահմանված համաչափության և որոշակիության սկզբունք- ների պահպանմամբ, որով և կանխորոշվում են դատարանի հայեցողության սահմանները:

Ինչ վերաբերում է վերոնշյալ երկրորդ իրավակարգավորմանը, ապա այս պարտականության առնչությամբ սահմանադրականության խնդիրը ստ էության առկա չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
ՈՐՈՇԵՑ.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը» և «Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինը կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես կարող է վերցնել **բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշման առկայության պայմաններում:**

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի՝ «Վկան պարտավոր է՝ ... չմեկնել այլ վայր՝ առանց դատարանի թույլտվության» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ վկային այլ վայր մեկնելու թույլտվություն տալու՝ դատարանի լիազորությունը պետք է իրականացվի ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նպատակի շրջանակներում և ՀՀ Սահմանադրության 78 ու 79-րդ հոդվածներով սահմանված համաչափության և որոշակիության սկզբունքների պահպանմամբ, որով և կանխորոշվում են դատարանի հայեցողության սահմանները:

3. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի 1-ին պարբերության՝ «Կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը», 2-րդ պարբերության՝ «Կասկածյալների և մեղադրյալների անձնագրերը տերերին են վերադարձվում խափանման միջոցի վերացման դեպքում» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

4. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի

կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերությունը (ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշման խմբագրությամբ) համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

5. «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ բացահայտված սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ «խափանման միջոցի կիրառման մասին տեղեկությունները՝ կիրառման պահին» ՍԷԿՏ համակարգում տեղադրելու պարտականությունը պետք է համահունչ լինի «խափանման միջոցի վերացման մասին տեղեկությունները՝ խափանման միջոցի վերացման պահին» ՍԷԿՏ համակարգ ուղարկելու պարտականության հետ:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 ապրիլի 2017 թվականի
ՍԴՈ-1360

**ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2018թ. Մարտի 12-ին ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը ստորագրել է արձանագրություն, որում ասված է.

«Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի հրաժարականի դիմումը եւ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մարտի 8-ից դադարած համարել Գագիկ Հարությունյանի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի լիազորությունները»:

**ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

2018թ. մարտի 21-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ Հրայր Թովմասյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ:

**ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի
կենսագրությունը**

Ծնվել է 1970թ. հուլիսի 8-ին Արարատի մարզի Դարակերտ գյուղում: 1977-1987թթ. սովորել է Դարակերտի միջնակարգ դպրոցում:

1988-1990թթ. ծառայել է խորհրդային բանակում: Պահեստագործի մայրը է:

1990-1995թթ. սովորել է «Գլաձոր» կառավարման համալսարանի միջազգային իրավունքի ֆակուլտետում: Իրավաբան: 1996-1998թթ. ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում:

1996-1998թթ. աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավախորհրդատվական ծառայության առաջատար մասնագետ:

1998-1999թթ. աշխատել է Սահմանադրական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավախորհրդատվական ծառայության գլխավոր մասնագետ:

1999-2001թթ. աշխատել է Սահմանադրական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավախորհրդատվական ծառայության ղեկավարի տեղակալ:

2001 թվականի ապրիլ-օգոստոս ամիսներին եղել է ՀՀ բնապահպանության փոխնախարար:

1998 թվականից դասավանդում է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում, 2006-2010թթ. դասավանդել է «Գլաձոր» համալսարանում:

2006 թվականից դասախոսություններ է կարդում Եվրոպայի խորհրդի Երևանի քաղաքական դասընթացների դպրոցում, նաև նույն դպրոցի շրջանավարտ է:

2001-2010թթ. եղել է Գերմանիայի տեխնիկական համագործակցություն ընկերության (GTZ) «Իրավական համակարգի ամրապնդման համար խորհրդատվություն» ծրագրի իրավաբան: 2010 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին եղել է նույն ընկերության «Հարավային Կովկասում իրավական եւ դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի իրավախորհրդատու:

2010 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը եղել է ՀՀ արդարադատության նախարար:

2013-2015 թթ. եղել է Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ:

2014 թվականի մայիսի 26-ից մինչև 2017թ. մայիսի 18-ը եղել է ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար:

2017թ. ապրիլի 2-ին ՀՀ ԱԺ պատգամավոր է ընտրվել ՀՀԿ համապետական ընտրական ցուցակով:

2017 թվականի մայիսի 20-ից մինչև 2018 թվականի փետրվարի 16-ը եղել է ԱԺ պետական-իրավական եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

2018 թվականի մարտի 2-ին նշանակվել է ՀՀ սահմանադրական դատարանի անդամ:

Պարգևատրվել է «Մխիթար Գոշ» (2013) եւ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2016 թ.) մեդալներով:

2000 թվականին Երևանի պետական համալսարանի իրավաբանական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող խորհրդում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը» թեմայով՝ ստանալով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2017 թվականին Պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող խորհրդում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Կառավարման կիսանախագահական ձևեր Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրական մոդել եւ իրականություն)» թեմայով՝ ստանալով իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

40-ից ավելի գիտական հոդվածների եւ ձեռնարկների հեղինակ է:

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմի անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու աղջիկ եւ մեկ տղա:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 31-ին ՀՀ Նախագահի թեկնածու առաջադրված Արմեն Սարգսյանն այցելեց ՀՀ սահմանադրական դատարան եւ առանձնազրույց ունեցավ Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի հետ:



22 ԱՄՅԱ ՃԱՆԱՊԱՐՀ

Քսաներկու տարի առաջ ձեւավորվեց ՀՀ սահմանադրական դատարանը:



Հոբելյանի առիթով, ՄԴ ողջ անձնակազմի մասնակցությամբ, Սահ-

մանադրական դատարանում կազմակերպվեց ցերեկույթ, որի ընթացքում Սահմանադրական դատարանի նախագահ պարոն Հարությունյանը հակիրճ անդրադարձավ Սահմանադրական դատարանի անցած տարիների գործունեությանը, ինչպես նաև սահմանադրական նոր փոփոխությունների համատեքստում հատուկ կարեւորեց ՍԴ հետագա խնդիրներն ու անելիքները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 7-9-ը ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գագիկ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը, Չեխիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ պարոն Պավել Ռիխտսկիի հրավերով, աշխատանքային այց կատարեց Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահա: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ ՍԴ անդամներ պարոն Վլադիմիր Հովհաննիսյանը և տիկին Արևիկ Պետրոսյանը:



Աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի ղեկավարած պատվիրակությունը հանդիպում-քննարկումներ ունեցավ Չեխիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ պարոն Պավել Ռիխտսկու, Չեխիայի Հանրապետության ՍԴ փոխնախագահ տիկին Միլադա Տոմկովայի և Չեխիայի Հանրապետության ՍԴ անդամ պարոն Յիրժի Ջեմանեկի հետ:

Հանդիպման ընթացքում «Մահմանադրությունների կայունություն և սահմանադրական փոփոխություններ» թեմայի շուրջ կարծիքներ փոխանակվեցին, ինչպես նաև անդրադարձ կատարվեց երկու երկրների կայուն ժողովրդավարական համակարգերի ամրապնդման գործում սահմանադրական դատարանների դերակատարմանը:

Չեխական կողմի խնդրանքով ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գ. Հարությունյանը հանգամանորեն ներկայացրեց սահմանադրաիրավական բարեփոխումների ընթացքը Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ ՍԴ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև Չեխիայի Հանրապետության Մենատում: Մասնավորապես, Մենատի փոխնախագահ պարոն Իվո Բառեկի հետ քննարկվեցին երկու երկրների իրավական փոխգործակցությանը և դրա խորացման ուղղությամբ Հայաստանի և Չեխիայի սահմանադրական դատարանների դերակատարմանն առնչվող հարցեր:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐ ԱՆԴԱՄ

Մարտի 5-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը դատարանի անդամներին և աշխատակազմին ներկայացրեց դատարանի նորանշանակ անդամ Հրայր Թովմասյանին:





Պարոն Հարությունյանը Հրայր Թովմասյանին բնութագրեց որպես կայացած իրավաբան և նրան հանձնեց դատավորի համազգեստը, որը վերջինս սիրով հագավ և, նկատի ունենալով, որ 22 տարի առաջ Սահմանադրական դատարանում աշխատել է որպես առաջատար մասնագետ, ասաց.

- Ես վերադարձա իմ արմատներին:

ԸՆՏՐՎԵՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ



ՀՀ դատական օրենսգրքի 84 և 166 հոդվածների համաձայն Բարձրա-

գույն դատական խորհրդի անդամների ընտրությունից հետո հինգ օրվա ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է ընտրեն Խորհրդի նախագահ, ընդ որում այն անդամների (5) կազմից, ովքեր ընտրվել էին Ազգային ժողովի կողմից: Բարձրագույն դատական խորհրդի առաջին նիստը տեղի ունեցավ մարտի 5-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության սրահում:

Օրակարգի միակ հարցը Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ընտրությունն էր: Գևորգ Դանիելյան, Ռուզան Հակոբյան, Սերգեյ Մեղրյան կազմով ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով: Գաղտնի քվեարկությամբ անցկացված ընտրության արդյունքներով միաձայն Բարձրագույն դատական խորհրդի նախագահ ընտրվեց պարոն Գագիկ Հարությունյանը:

Առաջին նիստում, աշխատանքային կարգով, նորընտիր նախագահ Գ. Հարությունյանը ներկայացրեց Խորհրդի առաջիկա անելիքները:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՎԸ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Մարտի 16-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության սրահում կազմակերպված էր հանդիսություն՝ նվիրված իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գագիկ Հարությունյանին:



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը հակիրճ ներկայացրեց Գ. Հարությունյանի անցած ճանապարհը, արժևորեց գիտական գործունեությունն ու պետության կայացման գործում նրա ունեցած մեծ վաստակը, շնորհավորեց Գիտությունների ակադեմիայի բարձրագույն պարզևին արժանանալու առիթով:

Պարոն Մարտիրոսյանը, «Սահմանադրական բարեփոխումների, Հայաստանում սահմանադրական արդարադատության հաստատման, սահմանադրական մշակույթի ձևավորման, իրավագիտության բնագավառում ունեցած ակն-

առու ներդրումների համար», ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ շնորհեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բարձրագույն պարզև՝
նույն անվանումով:

Պարոն Հարությունյանը շնորհակալություն հայտնեց բարձր պարգևի
համար:

Իրենց ելույթներով Գ. Հարությունյանին շնորհավորեցին և նրա գիտա-
կան գործունեության ու պետական կառույցներում կատարած աշխա-
տանքների մասին խոսեցին ակադեմիկոսներ, Սահմանադրական դատա-
րանի անդամներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՑ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՂԱՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխու-
թյուններով) 117-րդ հոդվածի 13-րդ կետի, «Սահմանադրական դատարանի
մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքերով՝ ՀՀ
սահմանադրական դատարանը փաստում է, որ 2018 թվականի մարտի
24-ից, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ, օրենքի ուժով դադա-
րում են Գագիկ Գարուշի Հարությունյանի ՀՀ սահմանադրական դատա-
րանի անդամի լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

Արձանագրել, որ 2018 թվականի մարտի 24-ից դադարում են Գագիկ
Գարուշի Հարությունյանի ՀՀ սահմանադրական դատարանի անդամի
լիազորությունները:

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20 մարտի 2018 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՍՐԱՀԸ ՇԱՀԱՄԻՐ ԵՎ
ՀԱԿՈԲ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
նիստերի սրահը կոչել հայ հասարակական-քաղաքական ու իրավական

մտքի երախտավորներ ՇԱՀԱՄԻՐ և ՀԱԿՈՒՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ անվամբ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 1998թ. նոյեմբերի 24-ի ՍԴԱՈ-79 աշխատակարգային որոշումը:

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20 մարտի 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈՔՐ ՍՐԱՀԸ ԳԱԳԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՍԲ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

Հաշվի առնելով Գազիկ Հարությունյանի կողմից Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կայացման, միջազգային ճանաչման, սահմանադրական բարեփոխումների գործում ներդրած ավանդը, Հայաստանում սահմանադրական արդարադատության հաստատման, սահմանադրական մշակույթի ձևավորման, իրավագիտության բնագավառում ունեցած ակնառու ներդրումները՝ ՀՀ սահմանադրական դատարանի փոքր սրահը կոչել ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ անվամբ:

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20 մարտի 2018 թ.

ՄԴ մամուլի ծառայություն

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-588-171
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 09.04.2018թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՍԴ տեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(89)2018
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(89)2018
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(89)2018